ԷՋՄԻԱԾԻՆ

1974

ԷՀ

АЖ 246

ԼԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուլիս Օգոստոս

1974

ՀՍՍՌ ԳԱ Հայկական Отделение Общественных Գիտությունների Библиотека Наук Арм. ССР ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի ողջույնի խոսքը 2
Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի խոսքը՝ ուղղյալ Նորին Սրբություն Համայն Ռուսիոյ Պիմեն Պատրիարքին 5
Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի խոսքը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և հայ եկեղեցվո պատվիրակության պատվին տրված ճաշկերույթին 8
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը 11
Հաղորդագրություն 13
ԱՆԱՆԻԱ ԱԲԵՂԱ ԱՐԱՔԱՋՅԱՆ—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մոսկվայում և Կիևում 16
Հայտարարություն Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի՝ Կիպրոսի վերջին իրադարձությունների վերաբերյալ 25
Նրուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ Մայր Աթոռում 28
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Բաղդադի հայ երկսեռ երիտասարդաց միության հիսնամյակի առթիվ 30
Մայր Աթոռի պատվիրակությունը Միջին Արևելքում 32
Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը ու տ. Զավեն Եպիսկոպոս Չինչինյանը Մայր Աթոռում 48
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 50
Հոգևորականաց համագումար Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի 52
«Շիրակ» գրականության և արվեստների ամսագիրը ս. Ներսես Շնորհալու մասին՝ մահվան 800-ամյակի առթիվ 54
Ամերիկահայ երիտասարդները Մայր Աթոռում 56
Կրթական մի նոր օջախ Բեյրութում 58
«Գեղարդ» կրոնական-ազգային-ձիական պարբերաթերթը 60
Ա. ՏԱՅԱՆ—Ս. Ներսես Շնորհալու երկերը օտար լեզուներով 62
ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ—Մակար եպիսկոպոս Բարխուդարյան . . . 66
Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ—7-րդ դարի կոթողներ Գեղամա լեռներում 75
ՎՐԵԺ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ—Frend W.H.C. 'the rise of the monophysite movement' (Cambridge university press, 1972), XXVII+405 . . . 81
Լուրեր Հայաստանյայց եկեղեցու թեմերից 89
Լուրեր քույր եկեղեցիներից 90
Լուրեր Եկեղեցիների համաշխարհային խորհրդից 93
Ս. ՋՈԼԱՆՋՅԱՆ—Մահ Արտաշես Գրիգորի Տիրացյանի 96
Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ—Ստեղծող մանկանց (Նոտա) 98
Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 103
Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի 109

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 17/VII 1974 թ.: Ստորագրված է տպագրության 11/IX 1974 թ.:
Տպագրական 7,75 մամուլ+8 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 469

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Ց. Ց. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ԼԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(Զագորսկ, 16 հուլիս 1974 թ.)

Սիրեցյալ Եղբայր մեր ի Տեր, Նորին Սրբություն Տ. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց,

Նորին Ամենապատվություն տ. Եղիշե պատրիարք հայոց Երուսաղեմի,

Թանկագին առաքնորդներ և հովիվներ ի Քրիստոս.

Եղբայրական ջերմ սիրով ողջունում ենք այստեղ ներկայությունը Հայց. առաքելական եկեղեցու ականավոր գործիչների և Մեր հյուրասիրության սրբազան պարտքը կատարում ի Քրիստոս սիրեցյալ մեր եղբայրներին՝ Նորին Սրբություն Տ. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարքին և կաթողիկոսին Ամենայն Հայոց և Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքին:

Մեր թանկագին հյուրեր,

Ձեր պաշտոնական այս այցելությունը մեզ, արտահայտությունն է Հայց. առաք. եկեղեցու և ռուս պրավոսլավ եկեղեցու միջև գոյություն ունեցող և մեր օրերում շարունակվող բարի և եղբայրական հարաբերությունների:

Թող Աստված օրհնի ձեր այս այցելությունը և թող Տերը՝ աշխարհի Փրկիչ Քրիստոսը, շոշափելի դարձնի եղբայրական այս նոր սիրո կապը և նոր աստիճանը, մեր հարաբերությունների և համագործակցության զարգացման հետագա ուղիներում:

Ձերդ Սրբություն,

Այս բարի հարաբերություններում, որոնք Մենք շատ ենք գնահատում, պետք է ընդգծել Ձեր անձնական թանկագին և հատուկ ներդրումը: Եղբայրական փոխադարձ կապերի բազում դեպքեր, որոնք նվիրագործվել են մեր բոլոր եկեղեցիներում և սուրբ վանքերում համատեղ աղոթքներով, իրենց լրա կրում են Ձեր հոգատարության հետքերը, ինչպես նաև սիրո հուրը՝ մեր ընդհանուր ծառայությանն առընթեր, մարդկային ամբողջ սեռի խաղաղության և արդարության հոգսերի մեղքերից, չարիքներից զերծ աշխարհում:

Մենք վերջերս այդ զգացինք ս. Էջմիածին մեր այցելության ժամանակ,

զգացինք Ձեր անձնական հոգատարությունը, Ձեր եղբայրական սերը, Ձեր բարյացակամ վերաբերմունքը, նաև մեր երկու եկեղեցիները հուզող քրիստոնեական ու համամարդկային հարցերում:

Ձեր այս այցելությունը Մոսկվա, մի անգամ ևս գալիս է հաստատելու Ձեր եղբայրական զգացմունքները դեպի մեզ:

Ամբողջ սրտով ողջունում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, և հայ եկեղեցու պատվիրակության բարձրաստիճան ներկայացուցիչներին, որոնց մեջ մենք տեսնում ենք մեր ազնիվ բարեկամներին:

Այն, որ Ձեզ հետ այստեղ են ժամանել նաև մեր սիրելի եղբայր ամենապատիվ տ. Եղիշե պատրիարք Տերտերյանը, և ամբողջ աշխարհից հայ եկեղեցիների անվանի գործիչներ՝ Ձեր այս այցելությունը, ռուսական ուղղափառ եկեղեցուն և նրա Մոսկվայի Աթոռին, ունի հատուկ նշանակություն: Հանձին Ձեզ, Ձերդ Սրբություն, և Ձերդ ամենապատվություն, մենք ունենք բացառիկ առիթը, ողջունելու լրությունը՝ Հայց. մեծ եկեղեցուն, նրա բոլոր թեմերի, որոնք կան և գործում են մեր հայրենիքում և կատարում են իրենց քրիստոնեական ծառայությունը, ինչպես նաև ուրիշ աշխարհամասերում և երկրներում:

Մեր սիրտը բաց է Ձեզ համար, և մեր աչքը՝ եղբայրական ողջագուրման համար:

Ավետարանի մեջ սուրբ Եղիսաբեթը, լսելով իր մոտ այցի եկած Մարիամի ողջույնը, բացականչեց. «Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղուկ. Ա 42):

Ձերդ Սրբություն, համարձակվում ենք, մենք էլ, այժմ, այս երջանիկ րոպեին, մեր առաջին տեսակցության առիթով կրկնել ավետարանական բառերը, որպեսզի արտահայտենք Մեր խորը սերն ու հարգանքը Հայց. առաք. եկեղեցուն, նրա բարձրաստիճան ներկայացուցիչներին և Ձեր պատվո շքախմբի անդամների հանդեպ:

Օրհնյալ լինեք Դուք, որ բերում եք Մեզ ձեր եկեղեցու քրիստոնեական հավատքի բարի պտուղներն ու առաքելությունները, որպես ժառանգություն, որպեսզի մենք դրանք կարողանանք ճաշակել:

Ես բարձրացնում եմ այս բաժակը մեր սիրելի եղբայր Նորին Սրբություն Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, Երուսաղեմի սուրբ քաղաքի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքի, այստեղ ներկա հայ եկեղեցու հոգևոր առաջնորդների, հովիվների, եկեղեցու սպասավորների առողջության կենաց, մեր և ձեր եկեղեցիների բարի հարաբերությունների ամրապնդման, մեր ընդհանուր գործի հաջողության, աշխարհում խաղաղության ամրապնդման և ժողովուրդների միջև համերաշխության կենաց:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԽՈՍՔԸ ՈՒՂՂՅԱԼ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

(Զագորսկ, 18 հուլիս 1974 թ.)

Ձերդ Սրբութիւն,

Սրանչելագործ Սուրբ Հոգին վերստին մխիթարում է Մեզ այսօր, այստեղ, Զագորսկ բազմադարեան վանքի կամարների ներքոյ, ուր գտնւում ենք Ձերդ Սրբութեան կողքին, ծունկի գալու և միասին աղօթելու համար սուրբ Սերգէյ Պրեպատոսկիի հրաշագործ աճիւնների առջև:

Երջանիկ ենք յոյժ, որ բարի եղաք եղբայրաբար հրաւիրելու Մեզ և Երուսաղէմի Հայոց Պատրիարք տ. Եղիշէ արքեպիսկոպոսը, որպէսզի մասնակցենք այսօր Ձեր Եկեղեցւոյ այս մեծ տօնին, իբրև Ձեր հիւրերը:

Ծանօթ ենք այս նշանաւոր սուրբի կեանքի պատմութեանը և նրա անմոռանալի վաստակին: Սուրբ Սերգէյ Պրեպատոպնին ճշմարիտ մարմնաւորումն է քրիստոնէական սրբակեաց կեանքի, առաքելաշունչ դաստիարակի, ռուս ժողովրդի ոգեկանութեան և քաջարի հայրենասիրութեան:

Իսկապէս մեծ է այն եկեղեցին, մեծ է այն ժողովուրդը, որ սուրբ Սերգէյի նման դէմքեր տուած է պատմութեանը, և ոչ միայն ռուսաց եկեղեցու պատմութեանը, այլ և աշխարհի պատմութեանը:

Մենք հաւատում ենք, որ սուրբ Սերգէյի ոգին միշտ պաշտպանում ու միշտ կենդանի ոգեշնչող ուժ է հանդիսացել ռուս պրաւոսլաւ եկեղեցու և հայոց ռուսաց մեծ ազգի համար, նրա ամբողջ պատմութեան ընթացքում, մինչև մեր օրերը: Այսպէս է որ ռուս ժողովուրդը եղել է ու մնացել աշխարհի ամենահաւատաւոր ժողովուրդներից մէկը, Քրիստոսով լուսաւորուած, Քրիստոսով աճած ու ծաղկած, Քրիստոսով փառաւորուած:

Պատահական չէ, որ Աստուած երկնքի դռները առաջին անգամ բացեց ռուս ժողովրդի զաւակներից մէկի առաջ: Յուրի Գագարինը, հանդիսանում է սովետական ժամանակաշրջանի Ալիոշա Կարամազովը: Ինչպես յայտնի է Ֆ. Դոստոևսկին չհասցրեց գրել Ալիոշայի կեանքի պատմութիւնը: Այդ առաքելութիւնը վիճակուեց Յուրի Գագարինին:

Մենք խոնարհում ենք սուրբ Սերգէյի աճիւնների ու նրա լուսաւոր յիշատակի առաջ ու աղօթում ենք որ Տէրը միշտ անսասան ու միշտ ծաղկեալ

պահի ռուսաց պրաւոսլաւ սուրբ եկեղեցին ու նրա սատուածասէր ժողովուրդը:

Ձերդ Սրբութիւն,

Մենք և տ. Իղիշէ պատրիարքը, սիրեցեալ եղբայրը Մեր, ինչպէս և Մեզ ընկերակցող բարձրաստիճան հայ հոգևորականները՝ Հայաստանից, Երուսաղեմից և Ամերիկայից, ջերմ ուրախութեամբ ընդունեցինք Ձեր սիրալիր հրաւէրը, լինելու Ձերդ Սրբութեան և ձեր եկեղեցու հիւրերը, տոգորուած լինելով միջեկեղեցական եղբայրակցան այն ոգով, որով բնորոշւում է մեր դարաշրջանը, էկումենիզմի դարաշրջանը:

Ինչպէս գրեթէ բոլոր քրիստոնեայ եկեղեցիները, Հայաստանեայց եկեղեցին ևս, առաջնորդուած աւետարանական գիտակցութեամբ, ձգտում է մասնակցել, հետզհետէ առաւել գործուն կերպով, եկեղեցիների էկումենիկ շարժումին, իր չափով, իր ուժերով նպաստելու, որ իրականանայ ամբողջ ու Ներդաշնակ եղբայրութիւնը բոլոր եկեղեցիների, բոլոր քրիստոնեաների, միաւորուած Քրիստոսի սիրոյ մէջ: Այսպիսով, մենք՝ բոլոր քրիստոնեաներս, ոչ միայն կատարած կը լինենք մեր Տիրոջ և Փրկչի կամքը ի խնդիր մեր հոգիների փրկութեան, այլ նաև նրա կամքը՝ ի խնդիր աշխարհի խաղաղութեան ի խնդիր բոլոր մարդկանց ու ազգերի եղբայրութեան: Մենք խոր համոզումով պաշտպանում ենք այն գաղափարը, որ էկումենիկ շարժումը մեր օրերում, մեր խռովայոյզ օրերում, ամէն ինչից առաջ պէտք է որպէս առաջնորդող կարգախօս և գործունէութեան ծրագիր որդեգրի՝ կենսագործելու համար «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» երկնային պատգամը, որով Փրկիչը մեր Քրիստոս աշխարհ եկաւ: Մեր օրերի առաջնահերթ հարցը ոչ թէ Աստուծոյ գոյութեան, այլ մարդու գոյութեան հարցն է: Եւ Մենք խորապէս մխիթարուած ենք, որ մեր երկու եկեղեցիները, անվարան կերպով յարեցին խաղաղութեան համաշխարհային շարժումին հենց սկզբից, մեր նախորդների գլխաւորութեամբ: Երբէք չի մոռացուելու հանգուցեալ մեծ պատրիարք երջանկայիշատակ Ալեքսիի պայծառ անունը իբրև խաղաղութեան առաքելի, որի ամենամտերիմ գործակիցը հանդիսացաւ հանգուցեալ Հայոց Հայրապետ՝ Գէորգ Զ կաթողիկոսը Ամենայն Հայոց:

Բնականաբար իրենց կարևորութիւնը ունեն նաև աստուածաբանական հարցերն ու դիալոգները, սակայն Մենք կ՚ուզենայինք ընդգծել առաջնութիւնը այն հարցերի, որոնք առնչւում են մեր ժամանակի հրամայականների հետ և արտայայտւում՝ կրօնական, դաստիարակչական, ընկերային և քաղաքական կեանքում: Վերոյիշեալ ժամանակակից հարցերի առնչութեամբ ներկայ աշխարհի մէջ և նրա հետ իրապէս դիալոգի մէջ մնալու համար, անհրաժեշտ է դուրս գալ աստուածաբանական աւանդական մտածողութեանց կաղապարներից և լեզու գտնել ժամանակակից գիտութեան, մշակոյթի և ընկերային ապրող ու զարգացող գաղափարների ու իրականութիւնների հետ: Այդպէս քրիստոնէութիւնը կարող է վտանգի տակ լինել, կեանքից ու աշխարհից մեկուսանալու կամ մեկուսացուելու: Այս պէտք է լինի, Մեր կարծիքով, էկումենիկ շարժման, յատկապէս Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնական առաքելութիւնը:

Ձերդ Սրբութիւն,

Մենք եկել ենք այսօր Ձեզ մօտ, վկայութիւնը բերելու ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու եղբայրական ջերմ զգացումների, այլ նաև վկայութիւնը հայ ժողովրդի նոյնքան ջերմ ու անխորտակելի բարեկամութեան դէպի ռուս մեծ ժողովուրդը: Հայ մարդու յարումը և եղբայրական սէրը ռուս ժողո-

վրրդի հանդէպ պարագայական, անցողական վերաբերմունք չէ, այլ նրա արեան մէջ դրոշմուած բնազդ։ Այդ արիւնն է հոսում բոլոր ճշմարիտ հայերի երակների մէջ թէ Հայաստանում, թէ արտասահմանում, նոյնիսկ նրանց երակների մէջ, որոնց նկատմամբ այսօր գուցէ իրաւամբ վերապահումներ կարող են լինել։ Այդ իրողութիւնը Մեր անձնական փորձով գիտենք Մենք, հայրենական պատերազմի օրերից, երբ բնակւում էինք Ռումինիայում, որ այդ ժամանակ հիտլերեան Գերմանիայի լծի տակ էր գտնւում։ Այդ ծանր օրերին, աշխարհի վրայ չկար մի հայ մարդ, որ չաղօթէր սովետական արդար յաղթանակի համար, որովհետև, Աստուած մի արասցէ, եթէ Վոլգայի ափերին թշնամին չխորտակուէր, կարող էր ճանապարհ բացուել Սովետական Հայաստանի բնաջնջման, 1915-ի ցեղասպանութեան օրինակով։

Մեր ողբերգական պատմութեան փորձը, ժայռակերտ այն հիմքն է, որի վրայ բարձրանում է ռուսաց և հայոց ժողովուրդների բարեկամութեան յաղթական կամարը, ամուր ու լաւէտ անխորտակելի։ Սա Մեր կողմից արտայայտուած ոչ թէ ինչ-որ քաղաքական մի դատողութիւն կամ համոզմունք է, այլ հայկական համազգային զգացում, որը բխում է մեր ժողովրդի՝ ապրելու, գոյատևելու, և ազատ զարգանալու գիտակցութիւնից։

Մենք, իբրև Հայ եկեղեցու առաջին սպասաւորը, խորապէս մխիթարուած ենք, տեսնելով թէ ինչպէս մեր հայրենի պետութիւնը, այս սքանչելի բարեկամութեան հիմքերի վրայ ոչ միայն ապրեց ու գոյատևեց, այլ վերջին յիսուն և աւելի տարիների ընթացքում հիմնովին վերակառուցեց իր քայքայուած երկիրը, ստեղծեց տնտեսական-արդիւնաբերական հզօր խարիսխ և ազատօրէն զարգացրեց իր ազգային մշակոյթն ու գիտութիւնը։

Սուրբ գրական Արարատի նայուածքի ներքոյ, Հայաստանը երբեք այսքան խաղաղ, այսքան ծաղկուն ու այսքան լուսառատ չի եղել։

Թող միշտ խաղաղութիւն, միշտ բարի կամեցողութիւն, և միշտ համերաշխ գործակցութիւն լինի Սովետական մեծ Միութեան մէջ եղբայրացած բոլոր ազգութիւնների միջև, ռուս ազգի հանդէպ սիրով ու երախտագիտութեամբ գօտեպնդուած։

Սիրեցեալ Եղբայր Մեր ի Քրիստոս,

Այս խոհերով ահա և այս զգացումներով ենք եկել Ձեզ մօտ ձեր եկեղեցու այս մեծ տօնի առթիւ։ Եկել ենք բերելու Հայ եկեղեցու և ժողովրդի քրիստոնէական ողջոյնը, եկել ենք ներկայացնելու Մեր և Մեզ ուղեկցող բարձրաստիճան հայ հոգևորականների յարգալից սէրը դէպի Ձեր սրբազան անձնաւորութիւնը, որ, Աստուծոյ ողորմութեամբ, հայրական քաղցր հոգով արժանաւորապէս ղեկավարում և առաջնորդում է ռուսաց պատմական եկեղեցին և նրա քրիստոսասէր հաւատացեալ ժողովուրդը։

Թող Տէրը միշտ փառաւորեալ պահէ ռուս պրաւոսլաւ սուրբ եկեղեցին և նրա բարեպաշտ ժողովուրդը։

Թող Աստուած Ձեզ պարգևի կեանքի երկար, արևոտ ու խաղաղ տարիներ, ի կատար ածելու համար Ձեր հովուապետական նուիրական առաքելութիւնը, փայլուն իրագործումներով։

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առատելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13). ամէն։

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՆ ՏՐՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(Մոսկվա, 21 հուլիս, 1974)

Հոգեկան մեծ բերկրանքն ու երջանկությունը ունենք, այսօր, պատվելու Հայոց առաքելական եկեղեցու բարձրաստիճան պատվիրակությունը, Նորին Սրբություն, Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Վազգեն Ա-ի գլխավորությամբ:

Անցյալում, այստեղ, Մոսկվայում, մի անգամ չէ, որ ողջունել ենք Նորին Սրբությունը և հայ եկեղեցու բարձրաստիճան այլ հոգևորականներին, քանի որ վաղուց մեր միջև հաստատվել են հիրավի եղբայրական հարաբերություններ:

Ռուս պրավոսլավ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ շատ հաճախ այցելել են բազմադարյան Հայաստան և մասնակցել ս. Էջմիածնում մեր քրիստոնյա եղբայրների եկեղեցական, սրբազան արարողություններին:

Բոլորովին վերջերս, Տիրոջ կամքով, Մենք այցելեցինք հայ եկեղեցու Սրբություն Սրբոցը և Ձերդ Սրբության հյուրը եղանք հնադարյան այդ հոգևոր կենտրոնում՝ ս. Էջմիածնում, մի կենտրոն, որի անունը և պատմությունը կապված է ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակի հետ:

Մենք երբեք չենք մոռանա, հիրավի՛ եղբայրական, Ձեր սրտաբաց ընդունելությունը, որը ցույց տվեցիք Մեզ և Մեզ ընկերակցող մեր եկեղեցու հոգևորականներին:

Ձեր այս այցելությունը մեր սուրբ եկեղեցուն հանդիսանում է ապացույցը եղբայրական հարաբերությունների խորացմանն ու ամրապնդմանը ռուս պրավոսլավ և հայ առաքելական եկեղեցիների միջև:

Մենք սրտեռանդն աղոթում ենք, որպեսզի Տերը օրհնի փոխըմբռնման և համերաշխության ամրապնդումը մեր եկեղեցիների միջև, որպեսզի բարեհաջող կերպով զարգանա մեր համագործակցությունը ինչպես էկումենիկ գործունեության ասպարեզում, այնպես էլ խաղաղության ի նպաստ կատարած միասեղ աշխատանքներում:

«Էջմիածին» խորհրդանշան բառի հետ, բառ, որը նշանակում է «Միածին իջավ», մենք կարող ենք գործածել նաև «Աստված մեզ հետ է» արտահայտությունը, որպեսզի դրանով ցույց տանք մեր հավատքի և առաքելության հիմնական ընդհանրությունը: Մենք բարձր ենք գնահատում Հայց. առաք. եկեղեցու հոգևոր ու պատմական փորձը, բազմադարյան, հարուստ, քրիստոնեական մշակույթի իր հուշարձաններով:

Ռուս պրավոսլավ եկեղեցու աստվածաբաններ ձգտում են յուրացնել այդ թանկագին, արժեքավոր ժառանգությունը, իր հիմնական արտահայտությունների մեջ և դրանցով հարստացնել մեզ:

Մենք խորը բավականությամբ նշում ենք, արդարև, նաև երկու եկեղեցիների միջև գոյություն ունեցող եղբայրական համագործակցությունը՝ էկումենիկ բնագավառում, հատկապես Եկեղեցիների համաշխարհային խորհրդում:

Մենք մեծ նշանակություն ենք տալիս մեր միասնական աշխատանքներում, խառը կոմիսիայի մեջ օրթոդոքս եկեղեցիների և պատմական արևելյան ուղղափառ եկեղեցիների միջև կատարվող դիալոգներին:

Մենք հավաստիացնում ենք ձեզ, մեր թանկագին եղբայրներ, որ ռուս պրավոսլավ եկեղեցին առաջիկայում ևս պիտի ձգտի հիրավի եղբայրական համագործակցության հայ եկեղեցու հետ, այն էկումենիկ, կարևոր հարցերի լուծման բնագավառում, հարցեր, որոնք այժմ մեր առջևումն են և որոնք կարիքն ունեն ընդհանուր ուսումնասիրության, միահամուռ միասնականության և ընդհանուր գործունեության:

Խոսելով մեր միջև էկումենիկ սպասումների մասին, մենք միաժամանակ ցանկություն ենք հայտնում նշել մեր եկեղեցիների գործունեության շրջանակներում, կարևոր ուրիշ պատասխանատվություններ, ինչպիսիք են ժողովուրդների միջև խաղաղություն, քրիստոնեական ծառայություն, մասնակցություն մարդկային հասարակության կյանքում խաղաղ գոյակցության աշխատանքներին:

Մենք հիշում ենք մեր Տիրոջ խոսքը, որը երանի է տալիս խաղաղություն ստեղծողներին և հիշեցնում է մեզ, որ մեր նմանի հանդեպ սերը ամենամեծ պատգամն է, որը չկատարվելով կդադարի Աստուծո հանդեպ նվիրյալ սեր լինելուց:

Մենք ոգևորվում ենք հայ առաք. եկեղեցու հետ մի ընդհանուր ծառայության մեջ, այն ամենակարևոր հարցում, որ է մեր մնայուն և ակտիվ մասնակցությունը հոգևոր խաղաղության կատարված աշխատանքներում:

Մենք հատկապես ընդգծում ենք այն դրական ներդրումը, որը մշտապես կատարում է հայոց եկեղեցին, խաղաղության քրիստոնեական կոնֆերանսների գործունեության համար:

Մենք գոհություն ենք մատուցում Աստծուն հայ առաք. եկեղեցու և մեր եկեղեցու միջև գոյություն ունեցող եղբայրական հարաբերությունների և համագործակցության համար, ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, Ձերդ ամենապատվություն, բարձրաստիճան ու թանկագին հայ հոգևորական եղբայրներ, բաժակ բարձրացնել հայ առաք. եկեղեցու պայծառության համար, հայ և ռուս եկեղեցիների եղբայրական համագործակցության համար, մեր սիրեցյալ եղբայր Նորին Սրբություն Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Ա-ի առողջության կենաց, մեր սիրեցյալ եղբայր Նորին ամենապատվություն Երու-

սաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպ. Տերտերյանի, ինչպես նաև Հայց. առաք. եկեղեցու հարգամեծար և բարձրաստիճան հոգևորականության և հովիվների առողջության կենաց: Թույլ տվեք բաժակ առաջարկել նաև մեր հայրենիքի բարօրության և ամբողջ աշխարհի խաղաղության և արդարության համար:

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
(Կիև, 24 հուլիս 1974 թ.)

Տիրոջ ողորմությամբ, Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի հրավերով Զագորսկի սուրբ Երրորդության վանքը այցելելուց հետո, գտնվում ենք ահա Կիևում, ռուս պրավոսլավ մեծ եկեղեցու երկրորդ նշանավոր կենտրոնը, որ ժամանակագրական տեսակետից առաջինն է հանդիսանում ռուս եկեղեցու պատմության մեջ:

Ինչքա՜ն նվիրական հիշատակների, ինչքա՜ն սուրբ գործերի, ինչքա՜ն հերոսական դրվագների մասին է խոսում այս հին քաղաքը՝ իր սրբավայրերով, իր պատմական հուշարձաններով, իր բազմադարյան պատմությամբ:

Ռուսաց պրավոսլավ եկեղեցու Կիևյան պատմաշրջանը փառավոր մեկ շրջանն է հանդիսանում ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային քրիստոնեության, մի պատմաշրջան, որ այսօր մեր գիտակցության առջև կոթողանում է որպես ռուս ժողովրդի ոգեկան հանճարի մի հաղթական կամար:

Մենք և Մեզ ուղեկցող հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, ի գլուխ ունենալով Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը, եկել ենք այստեղ ոչ միայն ծանոթանալու այս պատմական քաղաքին, նրա սրբավայրերին ու հուշարձաններին, այլ նաև աղոթելու ձեր սուրբ սեղանների առաջ, փառավորելու համար ձեր սուրբ եկեղեցին և ամենասուրբ Երրորդությունը, որի շնորհներով են կերտված այս քաղաքի հին ու նոր հրաշալիքները:

Եվ քանի որ հիացումով ենք ոգեկոչում հին տաճարները այս մեծանուն քաղաքին և ուկրաինական հողին, Մեր հիշողության մեջ զարթնում են պատմական լուսավոր վկայությունները ռուս և հայ հարաբերությունների, որոնք սկիզբ են առել Կիևյան Ռուսաստանի շրջանից:

Ի շարս այլոց, հիշենք վկայությունները ռուս հայտնի պատմաբան Կարամզինի, որ 1818-ին լույս ընծայած իր «История государство Российского...» գործի մեջ խոսում է մեծ թվով հայ վաճառականների մասին, որոնք 11-րդ դարում հաստատվել են Կիև քաղաքում և կազմել հայաբնակ մի գաղութ, որը ժամանակի ընթացքին հետզհետե մեծացել է: Այդ ժամանակներից սկսել են դրսևորվել ռուս և հայ ժողովուրդների միջև ոչ միայն առևտրական, այլև մշակութային և կրոնական բարեկամական հարաբերություններ:

Այսպես, 12—13-րդ դարերում կատարվում են թարգմանություններ հայերենից ռուսերենի՝ «Վարք ս. Գրիգոր Լուսավորչի» և «Վարք ս. Հռիփսիմյան կուսանաց» երկերի, իսկ ռուսերենից հայերեն է թարգմանվում «Վարք ս. Բորիսի և Գլեբի» երկը: Իսկ Նովգորոդից ոչ հեռու, Վոլխով գետի

ապին, 1198-ին կառուցված Պրեոբրաժենյան Ներետեցի եկեղեցում որմնանկարների շարքում նկարված են նաև սուրբ Գրիգոր Լուսավորչի և ս. Հռիփսիմե կույսի կերպարները:

Կիևյան Ռուսաստանի պատմաշրջանում այնքան են սերտանում ռուս և հայ եկեղեցիների կապերը, որ հեռավոր Կիլիկյան Հայաստանում ԺԲ դարում ապրող ու գործող հայոց կաթողիկոս ս. Ներսես Շնորհալին, առաջին անգամ լինելով, իր երկերից մեկում հիշում է «Ռուս» անունը:

Հիշենք այստեղ նաև Գերման Տևտոնյան ասպետների դեմ Գրյունվալդի 1410-ի նշանավոր ճակատամարտը, որն ավարտվեց փայլուն հաղթանակով, և որին իրենց մասնակցությունն էին բերել նաև երկու հայկական զորամասեր՝ կազմված Լեհաստանի հայկական գաղութի ազգաբնակչությունից:

Այս բարեկամությունը հետզհետե աճեց ու խորացավ դարերի հոլովույթով, մինչև 19-րդ դարը, երբ Արևելյան Հայաստանը իր բախտը կապեց քրիստոնյա Ռուսաստանի հետ և միացավ նրան, և հետո մինչև մեր օրերը, երբ հայոց երկիրը վերածնվեց իբրև ազգային հանրապետություն, սովետական հանրապետությունների մեծ միության մեջ:

Հիշելով անցյալը, առավել ուղիղ և հստակ ենք հասկանում ու գնահատում մեր ներկան և առավել պայծառ ու վճիտ ենք տեսնում մեր ժողովրդի ապագան: Իսկ երբ խոսում ենք մեր ժողովրդի ներկայի ու ապագայի մասին, դրանով հասկանում ենք նաև մեր եկեղեցու, Հայաստանյայց եկեղեցու ներկան և ապագան:

Առաջին անգամ այցելելով Ուկրաինայի հանրապետության այս մայրաքաղաքը, չենք կարող Մեր հիացումը չհայտնել նաև այս ամենի մասին, որ նոր Կիևն է ներկայացնում, սովետական ժամանակաշրջանի Կիևը, որ մի սքանչելիք է որպես կանաչազարդ բուրաստան քաղաք, որպես արդյունաբերության վեճագույն կենտրոն և որպես բարձր գիտության ու մշակույթի ոստան: Եվ երբ մի պահ մտաբերում ենք այն ահավոր տառապանքները և հոռետի ավերումները, որ կրեց այս հերոս քաղաքը Հայրենական պատերազմի ընթացքում, այն, ինչ տեսնում ենք այսօր, Մեզ թվում է հրաշքի համագոր մի իրողություն: Այդ հրաշքը ինքը Ուկրաինայի աշխատավոր ժողովուրդն է իր շինարար աննկուն կամքով, իր հզոր բազուկներով և իր ստեղծարար հանճարով:

Թող Աստված հավետ խաղաղ ու ծաղկյալ պահպանե Ուկրաինայի դրախտանման քաղաքամայր Կիևը իր սքանչելի ժողովրդով:

Սիրեցյալ ռուս պրավոսլավ հոգևոր եղբայրներ մեր, մենք սիրում ենք ձեզ, մենք գնահատում ենք ձեզ, մենք աղոթում ու գործում ենք ձեր կողքին, ձեզ հետ միասին, ոգեշնչված միևնույն ավետարանական պատգամներով, միևնույն էկումենիկական իդեալներով, միևնույն հայրենասիրական գիտակցությամբ, ներշնչված միևնույն բարի կամեցողությամբ, որ աշխարհում խաղաղություն լինի և ժողովուրդների միջև եղբայրություն, որի համար մենք մնում ենք անձանձրույթ աղոթողներ և ջերմ եռանդով աշխատողներ (գործողներ):

Մեր և մեր եկեղեցու այս պատվիրակության անունից հայտնում ենք նրուագին շնորհակալություն Ձեր այնքան ջերմ ու եղբայրական ընդունելության ու հյուրասիրության համար:

Թող Աստված Ձերդ Սրբազնության պարգևե քաջառողջ երկար կյանք, որպեսզի մինչև խոր ծերություն ծառայեք ձեր սուրբ եկեղեցուն և պրավոսլավ ձեր մեծ ժողովրդին:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԽՄԲԱՆԿԱՐ. ՁԱԳՈՐՄԿ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Սրբություն Մոսկվայի և համայն Ռուսիոց Տ. Պիմեն Պատրիարքի եղբայրական հրավերով հուլիսի 16-ից 22-ը Մոսկվայում և ապա 23-ից 25-ը Կիևում էր գտնվում Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը՝ մասնակցելու ս. Սերգեյ Ռադոնեժսկու տոնակատարությանը:

Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը անձնապես հրավիրել էր նաև Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսին:

Հայ եկեղեցու պատվիրակության կազմում էին նաև Արարատյան հայրապետական թեմի փոխառնորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը, Հյուսիսային Կովկասի և Մոսկվայի հայոց առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը, Միացյալ Նահանգաց արևմտյան թեմի առաջնորդ տ. Վաչե եպս. Հովսեփյանը և Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ տ. Շահե արքեպ. Աճեմյանը:

Հուլիսի 16-ին Մոսկվայի Դոմոդեդովոյի օդանավակայանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և հայ եկեղեցու բարձրաստիճան հյուրերին դիմավորում է Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը՝ ընկերակցությամբ Մոսկվայի ռուսաց պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ տ. Յուվենալի միտրոպոլիտի, Էստոնիայի և Տալլինի միտրոպոլիտ Ալեքսիի, միտրոպոլիտ Սերգեյի և բարձրաստիճան այլ հոգևորականների:

Հայ եկեղեցու պատվիրակությանը օդանավակայանում դիմավորում է նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևը:

Հուլիսի 17-ին, չորեքշաբթի օրը, հայ եկեղեցու պատվիրակությունը ժամանում է ռուսական Զագորսկ վանք: Ժամը 15-ին երկու Հովվապետներն Իրենց շքախմբերով ներկա են լինում ս. Երրորդություն տաճարում երեկոյան հսկման ժամերգությանը ս. Սերգեյի աճյունների առաջ:

Հուլիսի 18-ին, հինգշաբթի օրը, ս. Համբարձման տաճարում հայ եկեղեցու պատվիրակությունը ներկա է լինում հանդիսավոր ս. պատարագին, որը մատուցում են Տ. Պիմեն և Ալեքսանդրիայի հունաց Տ. Նիկոլա Զ Սրբազան Պատրիարքները:

Հավարտ պատարագի ռուսաց և հայոց եկեղեցիների Հովվապետները հանդես են գալիս եղբայրական փոխադարձ սիրո և հարգանքի խոսքերով:

Ս. պատարագից հետո Զագորսկի Վեհարանի սրահում, ի պատիվ հայ եկեղեցու պատվիրակության, տրվում է հանդիսավոր ընդունելություն, որին ներկա է լինում նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևը։

Ընդունելության ժամանակ ջերմ ողերձներով հանդես են գալիս Տ. Պիմեն սրբազան Պատրիարքը և տ. Եղիշե սրբազան պատրիարքը։

Հուլիսի 19-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի ուղեկցությամբ, Մոսկվայում այցելություն է տալիս ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ պրն. Վ. Կուրոյեդովին։

Նույն օրը, ժամը 17-ին, Ա. Կուրոյեդովին քաղաքավարական այց է տալիս նաև Երուսաղեմի հայոց տ. Եղիշե պատրիարքը՝ ընկերակցությամբ տ. Շահե արքեպ. Աճեմյանի։

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց պատրիարքը իրենց շքախմբերով այցելում են Մոսկվայում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ պրն. Սուրեն Մելքումյանին։

Հուլիսի 20-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, հայ եկեղեցու պատվիրակությունը այցելում է Ռուբլյովի անվան և Տրետյակովյան պատկերասրահները։

Երեկոյան ժամը 18-ին Հայոց Հայրապետի գլխավորությամբ հայ եկեղեցու պատվիրակությունը ներկա է լինում Մոսկվայի ս. Հարություն տաճարում՝ Կազանի ս. Աստվածածին նշանավոր սրբանկարի տոնին նվիրված Հսկումին։ Սրբազան արարողության ժամանակ Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքը ռուս հավատացյալ ներկա ժողովրդին է բերում օրհնություն Երուսաղեմից և Փրկչի լույս գերեզմանից՝ բարեմաղթելով, որ միշտ անսասան մնան հայ և ռուս եկեղեցիների և ժողովուրդների դարավոր եղբայրակցությունը Քրիստոսի Ավետարանի փառքի և աշխարհում քրիստոնավանդ խաղաղության հաղթանակի համար։

Հուլիսի 21-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մոսկվայի Ելոխովսկյան պատրիարքական տաճարում մատուցվում է հանդիսավոր ս. պատարագ՝ ներկայությամբ նաև հայ եկեղեցու պատվիրակության։ Ս. պատարագի ավարտին Տ. Պիմեն Պատրիարքը և Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը հանդես են գալիս ողջույնի եղբայրական ողերձներով։

Ժամը 15-ին ռուսաց սրբազան Պատրիարքի կողմից, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի և հայ բարձրաստիճան հոգևորականության, տրվում է ողջերթի ընդունելություն։ Ողջերթի ճաշկերույթին ներկա է լինում նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Ա. Կուրոյեդովը և նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևը։ Ճաշկերույթի ընթացքում ճառեր են արտասանում Տ. Պիմեն սրբազան Պատրիարքը, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը և Կալիֆորնիայի հայոց թեմի առաջնորդ տ. Վաչե եպս. Հովսեփյանը։

Ողջերթի սեղանին հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին ողջունում և բարի ճանապարհ է մաղթում նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Կուրոյեդովը։

Հուլիսի 22-ին, երկուշաբթի օրը, հայ եկեղեցու պատվիրակությունը ժամանում է Կիև։

Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին, Երու-

ուալեմի հայոց պատրիարքին և հայ բարձրաստիճան հոգևորականությանը ճանապարհում է, որպես Իր թանկագին հյուրերի, Տ. Պիմեն սրբազան Պատրիարքը՝ շրջապատված ռուս բարձրաստիճան հոգևորականներով:

Հայ եկեղեցու պատվիրակությանը ճանապարհում է նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևը:

Կիևի օդանավակայանում Հայոց Հայրապետին և Նրան ուղեկցող բարձրաստիճան հյուրերին ողջունում և բարի գալուստ է մաղթում Ուկրաինայի Էկզարխ Ֆիլարետ միտրոպոլիտը՝ իր բարձրաստիճան հոգևորականներով:

Հայ եկեղեցու պատվիրակությանը ողջունում է նաև Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պիլիպենկոն:

Հուլիսի 28-ին, երեքշաբթի օրը, հայ եկեղեցու պատվիրակությունն այցելում է Կիևի նշանավոր ս. Սոֆիա տաճար և Պեչչերյան ու Պոկրովսկի կուսանոց-վանքերը: Նույն օրը Ամենայն Հայոց Հայրապետը և Երուսաղեմի հայոց պատրիարքը, շքախմբի անդամներով, Կիևի «Փառք» այգում ծաղկեպսակ են դնում սովետական Անհայտ զինվորի հուշարձանին:

Հուլիսի 24-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, ս. Օլգայի տոնի առթիվ, ս. Վլադիմիր տաճարում մատուցվում է ս. պատարագ՝ ներկայությամբ հայ եկեղեցու պատվիրակության, տ. Ֆիլարետ միտրոպոլիտը և Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը ողջույնի ճառեր են փոխանակում:

Ժամը 15-ին, ի պատիվ Հայոց Հայրապետի, տ. Եղիշե պատրիարքի և հայ եկեղեցու պատվիրակության, ողջերթի ընդունելություն է կազմակերպվում, ուր ճառեր են փոխանակում Ֆիլարետ միտրոպոլիտը, Տ. Տ. Վազգեն Ա-ը և տ. Եղիշե պատրիարքը: Ողջույնի խոսքով հանդես է գալիս նաև Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պիլիպենկոն:

Հուլիսի 25-ին, հինգշաբթի օրը, Հայոց Հայրապետը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը և հայ եկեղեցու պատվիրակությունը հրաժեշտ են առնում Կիևից և վերադառնում Մայր Աթոռ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի, Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսի և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության այցելությունը Մոսկվա և Կիև հանդիսացավ երկու քույր եկեղեցիների և եղբայրական ժողովուրդների միջև գոյություն ունեցող դարավոր բարեկամության վառ արտահայտությունը, որը շարունակվում է նաև այսօր էկումենիկ ոգով, և որի զարգացման ու ամրապնդման համար աշխատում են երկու Հովվապետները:

Երկու Հայրապետների հանդիպումը մի անգամ ևս եկավ հաստատելու, որ եկեղեցիների կոչումն է՝ հանգցնել գոյություն ունեցող պատերազմի օջախները, պահպանել աշխարհի խաղաղությունը և ամրապնդել եղբայրությունը և բարեկամությունը ժողովուրդների միջև:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

31-ը հուլիսի 1974 թ.,
Ս. Էջմիածին



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՎ ԿԻԵՎՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 16-ին, երեքշաբթի օրը, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին Սրբություն **Տ. Պիմեն Պատրիարքի** եղբայրական սիրալիր հրավերով **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը** ժամանում է Մոսկվա, մասնակցելու համար ռուս պրավոսլավ եկեղեցու եռամեծ վարդապետ ս. Սերգեյ Ռադոնեժսկու հիշատակին նվիրված ամենամյա հանդիսությանը։

Հայոց Հայրապետին ուղեկցում էին Արարատյան հայրապետական թեմի փոխանորդ տ. **Կոմիտաս արք. Տեր-Ստեփանյանը,** Հյուսիսային Կովկասի և Մոսկվայի Հայոց առաջնորդ **տ. Պարգև եպս. Գեորգյանը,** որպես գավազանակիր՝ **տ. Անանիա աբեղա Արաբաջյանը,** և որպես թարգման՝ **պրն. Հայկ Առաքելյանը։**

Մոսկվայի Դոմոդեդովոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում են Մոսկվայի և համայն Ռուսաստանի **Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը,** Մոսկվայի ռուսաց պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ **Յուվենալի միտրոպոլիտը,** Էստոնիայի և Տալլինի **միտրոպոլիտ Ալեքսի արք.,** Օդեսայի **միտրոպոլիտ Սերգեյ արք.** և այլ բարձրաստիճան ռուս հոգևորականներ։

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում են նաև Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքը,** որը հոկտեմբերի 15-ին ժամանել էր Մոսկվա, հրավերով Նորին Սրբություն **Տ. Պիմեն Պատրիարքի,** և Հայ եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում էին Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ և Արգենտինայի Հայոց առաջնորդ **տ. Բարգեն արք. Ապատյանը,** ԱՄՆ-ի հայոց Արևմտյան թեմի առաջնորդ **տ. Վազգեն եպս. Հովսեփյանը,** Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանապետ **տ. Շահե արք. Աճեմյանը** և Երուսաղեմի Հայոց պատրիարքի գավազանակիր **տ. Պարեղ վրդ. Երեցյանը,** որոնք նույնպես ժամանել էին Մոսկվա ամսի 15-ին, որպես Հայոց Հայրապետի շքախմբի անդամները։

ՄԻ ՊԱՀ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԻՑ. ՋԱԳՈՐՍԿ

Львовское Общественное Библиотека

Դոմոդեդովոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում են նաև Մոսկվայի Հայոց ս. Հարություն եկեղեցու խորհրդի անդամները:

Հայ եկեղեցու Հովվապետին և Նրա շքախմբի անդամներին օդանավակայանում դիմավորում և բարի գալուստ է մաղթում ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Պ. Վ. Մակարցևը:**

Զափազանց հուզիչ էր երկու քույր եկեղեցիների Հովվապետների և նրանց շքախմբի անդամների ջերմ ողջագուրումը: Նրանց եղբայրական համբույրի մեջ մի անգամ ևս իրագործվում էր երկու ժողովուրդների հոգեվոր բարեկամությունը:

Հայոց Հայրապետը ժամանել էր Մոսկվա փոխադարձելու համար Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Նորին Սրբություն **Տ. Պիմեն** Պատրիարքի պատմական և պաշտոնական այցը Մայր Աթոռ 1972 թվականի նոյեմբերին:

Օդանավակայանում սրտառուչ ողջագուրումից հետո հայ եկեղեցու պատվիրակությունը առաջնորդվում է «Ուկրաինա» հյուրանոցը:

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Հոկտեմբերի 15-ին, երկուշաբթի օրը, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Նորին Սրբություն **Տ. Պիմեն պատրիարքի** եղբայրական հրավերով Մոսկվա էր ժամանել նաև Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ **տ. Եղիշե սրբազան պատրիարքը՝** ընկերակցությամբ **տ. Շահե արք. Աճեմյանի,** Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու պատվիրակության հետ մասնակցելու համար ս. Սերգեյ Ռադոնեժսկու հիշատակին նվիրված հանդիսությանը:

Մոսկվայի Ծերեմետևոյի միջազգային օդանավակայանում Երուսաղեմի հայոց պատրիարքին և հայ եկեղեցու պատվիրակության մյուս անդամներ **տ. Բաբգեն արք. Ապատյանին, տ. Շահե արք. Աճեմյանին** և **տ. Վաչե եպս. Հովսեփյանին** անձամբ դիմավորում և բարի գալուստ է մաղթում Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը՝ շրջապատված միտրոպոլիտներով և բարձրաստիճան ռուս հոգևորականներով:

Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքին դիմավորում և բարի գալուստ են մաղթում նաև Հյուսիսային Կովկասի և Մոսկվայի հայոց առաջնորդ **տ. Պարգև եպս. Գևորգյանը** և **Անանիա աբեղա Արարաջյանը:**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Հոկտեմբերի 16-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը, ի պատիվ Հայոց Հայրապետի, Երուսաղեմի հայոց պատրիարքի և հայ եկեղեցու պատվիրակության, Մոսկվայի ռուսաց պատրիարքարանի դահլիճում ճաշկերույթ է տալիս:

Առաջին այս սեղանը վերածվում է քրիստոնեական սիրո ճշմարիտ ճաշի: Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը իր շնորհակալությունն է հայտնում Հայոց Հայրապետին և Երուսաղեմի սրբազան պատրիարքին, որ ընդառաջեցին իր եղբայրական հրավերին և պատկառելի մի պատվիրակությամբ եկան մեծարելու հիշատակը ռուս եկեղեցու մեծ վարդապետի ու սրբի և միասին աղոթելու հայ և ռուս եկեղեցիների ու ժողովուրդների անքակտելի բարեկամության ու գործակցության ամրապնդման համար, ինչպես նաև էկումե-

նիկ ոգով՝ Քրիստոսի ընդհանրական եկեղեցու միության համար, հանուն ժողովուրդների ի Քրիստոս եղբայրության և աշխարհի խաղաղության:

Ճաշկերույթի ժամանակ, հանուն Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու պատվիրակության, շնորհակալության սրտագին խոսք է ասում տ. Եղիշե սրբազան պատրիարքը ս. Սերգեյ Ռադոնեժսկու հիշատակին նվիրված հանդիսություններին մասնակցելու հրավերի, ջերմ դիմավորման և հյուրասիրության համար:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱԳՈՐՍԿԻ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Հոկտեմբեր 12-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին Հայոց Հայրապետի և տ. Եղիշե սրբազան պատրիարքի գլխավորությամբ հայ եկեղեցու պատվիրակությունը մեկնում է Զագորսկ, ռուսական հոգևոր մշակույթի կենտրոն և ուխտավայր հանդիսացող պատմական ու նշանավոր վանքը, ուր և գտնվում են այդ վանքի հիմնադիր ս. Սերգեյ Ռադոնեժսկու նվիրական աճյունները:

Ժամը 14-ին հայ եկեղեցու պատվիրակությունը հանդիսավորապես, եկեղեցական թափորով առաջնորդվում է ս. Երրորդություն-Սերգիևսկի վանքը, ուր նրան դիմավորում է մենաստանի վանահայրը, ի գլուխ իր միաբանության:

Հայ եկեղեցու պատվիրակությունը Մայրավանքի զանգերի դողանջի ներքո մուտք է գործում ս. Երրորդություն տաճարը, իր հարգանքը մատուցելու մեծ սրբի աճյուններին:

Ժամը 16-ին, սույն տաճարում հայ եկեղեցու պատվիրակությունը մասնակցում է ս. Սերգեյի հիշատակին նվիրված ժամերգությանը, նախագահությամբ Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի, և մասնակցությամբ ռուս բարձրաստիճան հոգևորականության և այս առթիվ ժամանած արտասահմանյան եկեղեցական պատվիրակությունների, որոնց գլուխն է գտնվում Ալեքսանդրիայի հունաց նորին սրբություն Տ. Նիկոլա Զ պատրիարքը:

Ժամերգությունից հետո տեղի է ունենում գիշերային հսկում և նախատոնակի արարողություն: Հայ եկեղեցու պատվիրակությունը իր մասնակցությունն է բերում հանդիսությանը, ս. Սերգեյի հիշատակին նվիրված՝ աղոթքով և շարականների երգեցողությամբ:

ԸՆԹՐԻՔ ԶԱԳՈՐՍԿԻ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Երեկոյան ժամը 20-ին Զագորսկի վանքի պատրիարքական դահլիճում Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը Հայոց Հայրապետին, տ. Եղիշե Սրբազան պատրիարքին և հայ եկեղեցու պատվիրակությանը մեծարում է մտերմիկ ու հոգևոր բնույթի մի ընթրիքով, ուր ջերմ ու խանդավառ մթնոլորտում արտասանված ճառերը վերածվում են քրիստոնեական եղբայրական սրբազան տոնի և հոգևոր դաշինքի:

Այս առթիվ Հայոց Հայրապետը հուշանվեր է բաժանում ի հուշ պատմական այս հանդիպմանը: Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքին նվիրում է Երևանի բյուրեղապակու գործարանում մասնավոր կերպով պատրաստված ընտիր հախճապակյա, կես մետր բարձրություն ունեցող մի ծաղկաման, ս. Էջմիածնի Մայր տաճարի նկարով և հայրապետական հետևյալ մակագրությամբ «Խաղաղություն Ձեզ»: Սույն չքնաղ և բացառիկ նվերը Հայոց Հայրապետի ձեռքից շնորհակալությամբ ընդունում է Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը, ներկաների խանդավառ ծափերի ներքո:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՈՎ

Նվերներ են առնում նաև ռուս բարձրաստիճան մյուս հոգևորականները համապատասխան իրենց դիրքին կամ պաշտոնին:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Հուլիսի 18-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին, սուրբ Համբարձման տաճարում հանդիսավոր ս. պատարագ են մատուցում **Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը** և Ալեքսանդրիայի հունաց **Տ. Նիկոլա Զ. Պատրիարքը:**

Հավարտ ս. պատարագի, Տ. Պիմեն պատրիարքը մի սրտառուչ ուղերձով ողջունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տ. Եղիշե և հունաց Տ. Նիկոլա Զ պատրիարքների ու հայ եկեղեցու պատվիրակության ներկայությունը, գոհություն մատուցելով Աստծուն, այսպիսի հոգևոր ու չքնաղ մի օրվա համար, երբ հայ, ռուս և հույն երեք մեծ եկեղեցիների հոգևոր պետերը, մղված քրիստոնեական եղբայրության անշահախնդիր ոգուց, հավաքվել են այս սուրբ տաճարի կամարների տակ, մեկտեղ տոնելու հիշատակը ս. Սերգեյի:

Ողջույնի իմաստալից խոսքով հանդես է գալիս նաև հունաց Տ. Նիկոլա Զ Սրբազան Պատրիարքը:

Հայոց Հայրապետը այս հանդիսավոր առիթով արտասանած Իր բովանդակալից խոսքում շնորհակալություն է հայտնում Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի ողջույնի եղբայրական և սրտագին խոսքերի համար, ապա վեր է հանում ս. Սերգեյի՝ որպես ռուս եկեղեցու մեծագույն վարդապետի և սրբի մատուցած ծառայությունները, շեշտելով, որ «ս. Սերգեյի հոգին կենդանի է մնացել միշտ, և նրա աղոթքները օգնել են ռուս ժողովրդին ջախջախելու նաև հիտլերյան Գերմանիայի չար ուժերը, Հայրենական մեծ պատերազմի օրերին այնպես, ինչպես 1985 թվականին Կուլիկովոյի ճակատամարտում, երբ նաև ս. Սերգեյի աղոթքներով և ջանքերով հաղթանակով են պսակվել ռուսաց ազգի մեծ ճակատամարտը ընդդեմ թաթարների»:

Ժամը 14-ին Պատրիարքարանի դահլիճում տեղի է ունենում ճաշկերույթ, որին մասնակցում են օրվա հանդիսությանը ներկա եղող 60 բարձրաստիճան հոգևորականներ:

Ընդունելության ժամանակ Տ. Պիմեն սրբազան Պատրիարքը կրկին անգամ շնորհակալություն է հայտնում քույր եկեղեցիների հոգևոր պետերին, եկեղեցական պատվիրակության անդամներին և բոլոր ներկաներին, որոնք սիրով ընդունեցին ռուս եկեղեցու եղբայրական հրավերը, եկան մասնակցելու ս. Սերգեյի հիշատակին նվիրված հանդիսությանը:

Ընդունելության ժամանակ ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևը, հանուն կառավարության, ողջունում է ներկայությունը հոգևոր պետերի, բարձրաստիճան հոգևորականների և հյուրերի: Պ. Վ. Մակարցևը մասնավոր ջերմությամբ խոսում է Հայոց Հայրապետի հայրենասիրական և խաղաղասիրական գործունեության մասին, որպես մեր օրերի քրիստոնեական եկեղեցու մեծ ղեկավարի և հայրենասեր հոգևորականի:

Հանուն Հայոց Հայրապետի, իր և հայ եկեղեցու պատվիրակության, շնորհակալության և երախտագիտության սրտագին խոսք է ասում տ. Եղիշե սրբազան պատրիարքը, հայ եկեղեցու և նրա հովվապետների հանդեպ ցույց տրված բացառիկ հյուրասիրության, հարգանքի և սիրո համար:

ԱՅՑ ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Հուլիսի 19-ին, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը, ուղեկցությամբ տ. Կոմիտաս արքեպ. **Տեր-Ստեփանյանի**, այցելություն է տալիս ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ **Վ. Կուրոեդովին:**

Նույն օրը, ժամը 12-ին, նախագահ **Վ. Կուրոեդովին** քաղաքավարական այց է տալիս նաև Երուսաղեմի հայոց **տ. Եղիշե** պատրիարքը, ընկերակցությամբ տ. **Շահե** արքեպ. **Աճեմյանի:**

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի Հայոց պատրիարքը իրենց շքախմբերով այցելում են Մոսկվայում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ պրն. **Սուրեն Մելքումյանին:**

ՀՍԿՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻ ՌՈՒՍԱՑ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Հուլիսի 20-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, հայ եկեղեցու պատվիրակությունը այցելում է Ռուբլյովի անվան և Տրետյակովյան պատկերասրահները:

Երեկոյան ժամը 18-ին Հայոց Հայրապետի գլխավորությամբ հայ եկեղեցու պատվիրակությունը ներկա է լինում Մոսկվայի ռուսաց սուրբ Հարություն տաճարում Կազանի ս. Աստվածածնին նշանավոր սրբանկարի տոնին նվիրված հսկումին:

Սուրբ արարողության ավարտին, հանուն Ռուսաց Նորին Սրբություն Տ. Պիմեն պատրիարքի, Յուվենալի միտրոպոլիտը ողջունում է ներկայությունը հայ եկեղեցու պատվիրակության, հավատացյալ ժողովուրդին ներկայացնելով Հայոց Հայրապետին, Երուսաղեմի սրբազան պատրիարքին և հայ եկեղեցու պատվիրակության անդամներին:

Տ. Յուվենալի միտրոպոլիտը ապա համառոտակի կանգ է առնում հայ ժողովրդի պատմության վրա, հիշելով 1915 թվականի ցեղասպանությունը, որի զոհ են գնացել երկու միլիոն քրիստոնյա հայեր արևմտյան Հայաստանում: Գերաշնորհ միտրոպոլիտը իր խոսքն ավարտում է մաղթելով աշխարհին խաղաղություն և ժողովուրդների միջև եղբայրություն:

Հանուն Հայոց Հայրապետի, հանդես է գալիս պատասխան ուղերձով տ. Եղիշե սրբազան պատրիարքը, որը նախ բերում է ռուս հավատացյալ ներկա ժողովրդին օրհնություն Երուսաղեմից և Փրկչի լույս գերեզմանից ու հայտնում իր տպավորությունները ռուս եկեղեցու և բարեպաշտ ժողովրդի մասին, «որում հավատքին չափն ու խորությունը եղած է միշտ իր ընդարձակածավալ երկրին տարածքով: Հայ և ռուս եկեղեցիները պատմության ընթացքին բնավ դավանաբանական վեճեր չեն ունեցած, որովհետև երկուքն ալ ազգային նկարագիր ունեցող հաստատություններ եղած են և իրենց կրոնական առաքելության գլխավոր նպատակը եղած է իրենց ժողովրդի հավատքի ամրապնդումը: Բոլոր քրիստոնյա ազգերի համար կարելի է ըսել թե անոնք երկու ազգեր են՝ ցեղային և կրոնական զատորոշումներով: Ռուս ե մեր ժողովրդի կրոնական և ազգային հոգեվիճակները սեռն ու սերտ առեջներով թեզանված են իրարու. այս բացառիկ իրողության մեջ է մեր զույգ եկեղեցիներու ուժն ու արտառուչ հանգամանքը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՑՐԱՊԵՏԻ ՆՎԵՐԸ Ն. Ս. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

(Գործ՝ Երևանի դյուրեղապակու գործարանի)

Քրիստոսի եկեղեցին մեր Տիրոջ արյունով թրջված նշխարն է։ Քրիստոսադավան եկեղեցիներեն յուրաքանչյուրը այդ նշխարին մեկ բեկորն է։ Համաշխարհային եկեղեցիներու միության նպատակը ուրիշ բան չէ, բայց այդ սրբազան կտորները, որոնք ժամանակի ընթացքին իրարմե բաժնվելով, քիչ մը շատ ինքնուրույն եղած են՝ իրարու բերել, ամբողջացնելու Քրիստոսի եկեղեցիներին միությունը, սրբությունը և հոգևոր զորությունը»։

Տաճարում միաբերան և դաշն հնչում է հավատացյալ ողջ ժողովրդի աղոթքը՝ «Երկար տարիներ», Հայոց Հայրապետին և հայ եկեղեցուն մաղթանքով։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Հոկտեմբերի 21-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մոսկվայի ռուսաց Եղոխովսկյան պատրիարքական տաճարում մատուցվում է հանդիսավոր սուրբ պատարագ, ներկայությամբ նաև հայ եկեղեցու պատվիրակության։

Ս. պատարագի ավարտին Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը Հայոց Հայրապետին, տ. Եղիշե պատրիարքին և հայ եկեղեցու պատվիրակությանը դիմում է սրտառուչ մի ճառով։

Հայոց Հայրապետը խոսք առնելով, ներկա հավատացյալ ժողովրդին ողջույն և օրհնություն է բերում Մայր Աթոռ ս. Էջմիածնից։

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, ժամը 15-ին, ռուսաց Սրբազան Պատրիրքի անունից, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքի և հայ եկեղեցու պատվիրակության, տրվում է ողջերթի ճաշկերույթ Մոսկվայի «Պրագա» ռեստորանում, մասնակցությամբ բազում հրավիրյալների։

Ողջերթի ընդունելությանը ներկա է լինում նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ պրն. Վ. Կուրոեդովը և նախագահի տեղակալ Պ. Վ. Մակարցևը։

Ճաշկերույթի ընթացքում ջերմ մթնոլորտում ողջերթի սրտագին խոսքեր են փոխանակում Տ. Պիմեն սրբազան պատրիարքը, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը և Կալիֆորնիայի հայոց թեմի առաջնորդ տ. Վաչե եպս. Հովսեփյանը։

(Տ. Պիմեն պատրիարքի ողջերթի ճառը տեսնել «Էջմիածին» ամսագիր, սույն համարում, էջ 8)։

Ողջերթի սույն սեղանին Հայոց Հայրապետին, Երուսաղեմի հայոց պատրիարքին և հայ եկեղեցու պատվիրակության անդամներին ողջունում է նաև պրն. Վ. Կուրոեդովը, շեշտելով մանավանդ Հայոց Հայրապետի գլխավորությամբ հայ հոգևորականության կատարած հայրենասիրական, խաղաղասիրական գործունեությունը, հոգուտ ժողովուրդների բարօրության և աշխարհի խաղաղության։

Հայ եկեղեցու պատվիրակության այցելությունը Մոսկվա, կատարված եկեղեցական հանդիպումները եկեղեցիներում և պաշտոնական ընդունելությունների ժամանակ արտասանված խոսքերը մի անգամ ևս վերածվում էին քրիստոնեական եղբայրության սրբազան տոնի և հոգևոր դաշինքի։

Հայ եկեղեցու պատվիրակությունը լավագույն տպավորություններով հրաժեշտ է առնում Նորին Սրբությունն Տ. Պիմեն Պատրիարքից և ուսա բարձ-

բաստիճան հոգևորականությունից և մեկնում է Կիև, Ուկրաինայի մայրաքաղաքը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԵՎՈՒՄ ԺԱՄԱՆՈՒՄ

Հուլիսի 22-ին, երկուշաբթի օրը, հայ եկեղեցու պատվիրակությունը ժամանում է Կիև, ուղեկցությամբ Սերգեյ միտրոպոլիտի:

Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում Հայոց Հայրապետին, Երուսաղեմի հայոց պատրիարքին և հայ բարձրաստիճան հոգևորականությանը ճանապարհում է Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը, շրջապատված ռուս բարձրաստիճան հոգևորականներով:

Հուզիչ էր քույր եկեղեցիների հովվապետների, տ. Եղիշե սրբազան պատրիարքի, հայ և ռուս բարձրաստիճան հոգևորականության վերջին ողջագուրումն ու ի Քրիստոս եղբայրական համբույրները:

Հայոց Հայրապետի, Երուսաղեմի սրբազան պատրիարքի և հայ եկեղեցու պատվիրակության ժամանումը Կիև ողջունում և բարի գալուստ են մաղթում համայն Ուկրաինայի էկզարխ **Ֆիլարետ միտրոպոլիտը՝** ի գլուխ իր բարձրաստիճան հոգևորական դասի:

Հայ եկեղեցու պատվիրակությանը ողջունում է նաև Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. **Պիլիպենկոն:**

Ողջույնի և բարի գալստյան ջերմ խոսքերից հետո հայ եկեղեցու պատվիրակությունը առաջնորդվում է «Ուկրաինա» հյուրանոցը:

Ժամը 18-ին տ. Ֆիլարետ միտրոպոլիտը հյուրանոցի ճաշասրահում, ի պատիվ հայ եկեղեցու պատվիրակության, ճաշկերույթ է տալիս և ջերմ երախտագիտություն է հայտնում Հայոց Հայրապետին, Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքին, որ հաճեցին այցի գալ նաև Կիև, միասին աղոթելու այս հնագույն քաղաքի սուրբ տաճարների սեղանների առաջ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիսի 23-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հայ եկեղեցու պատվիրակությունը այցելում է Կիևի ս. Սոֆիա նշանավոր տաճարը, որը կառուցված է ԺԱ դարում, և ապա Պեչչերյան վանքը:

Այս առթիվ Հայոց Հայրապետին հաղորդվում է, որ ս. Սոֆիա տաճարում նոր հայտնաբերվել է ԺԴ դարից հայերեն մի արձանագրություն:

Ժամը 14-ին **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը,** տ. Եղիշե սրբազան պատրիարքը, շքախմբի անդամներով, Կիևի «Փառք» այգում ծաղկեպսակ են զետեղում Հայրենական մեծ պատերազմում զոհված Անհայտ զինվորի հիշատակին:

Հանդիսավոր ու վեհ լռության մեջ Հայոց Հայրապետը «հոգվոց» է արտասանում նահատակ մարտիկների հուշարձանին:

Այնուհետև հայ եկեղեցու պատվիրակությունը տ. Ֆիլարետ միտրոպոլիտի առաջնորդությամբ այցելում է Պոկրովսկի կուսանոց-վանքը: Կուսանոցի վանամայր քույր Եկեկոնիտան և տ. Տիմոֆեյ ավագ քահանա Շայդորովը երկյուղած բարեպաշտությամբ դիմավորում են ու ողջունում օրհնաբեր ներկայությունը Հայոց Հայրապետի, ի գլուխ բարեպաշտ ու հավատավոր կույսերի, և առաջնորդում ս. Նիկոլա տաճարը, որ հայ եկեղեցու պատվիրակու-

թյունը մուտք է գործում «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականի երգեցողությամբ:

Այնուհետև Հայոց Հայրապետը կույսերին է դիմում հայրական ողջույնի և օրհնության խոսքով, գովելով նրանց բարեպաշտությունն ու նվիրումը Քրիստոսի սիրույն, ռուս պրավոսլավ եկեղեցու հոգևոր ծառայության:

Վերջում Հայոց Հայրապետը տ. Եղիշե սրբազան պատրիարքի և պատվիրակության մյուս անդամների հետ օրհնում է կուսանոցի աղն ու հացը և նվերներ բաժանելով շնորհակալություն է հայտնում հյուրասիրության համար և հրաժեշտ է առնում:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԿԻԵՎԻ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Կիևի Վլադիմիրյան տաճարում կատարվում է ս. Օլգա կուրսի տոնի նախատոնակը, որին մասնակցում է նաև հայ եկեղեցու պատվիրակությունը:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 24-ին, չորեքշաբթի օրը, ս. Օլգայի տոնի առթիվ մատուցվում է հանդիսավոր սուրբ պատարագ Վլադիմիրյան տաճարում: Հավարտ ս. պատարագի համայն Ուկրաինայի էկզարխ տ. Ֆիլարետ միտրոպոլիտը ողջունում է ներկայությունը Հայոց Հայրապետի և սրտագին երախտագիտություն է հայտնում, որ այսօր, այս տաճարում հավաքվել են ս. Օլգայի տոնի առթիվ հայ և ռուս եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, միասին աղոթելու և միասին փառաբանելու Աստծուն:

Այնուհետև հանդես է գալիս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իմաստալից մի ճառով (տես «Էջմիածին» ամսագիր, սույն համարը, էջ 11):

Փաստը 15-ին «Ուկրաինա» հյուրանոցում, ի պատիվ հայ եկեղեցու պատվիրակության, տրվում է ուղերթի ընդունելություն, որ բարեկամական մթնոլորտում ճառեր են փոխանակում **տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը** և **տ. Եղիշե սրբազան պատրիարքը:**

Ողջույնի խոսքով հանդես է գալիս նաև Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Պիլիպենկոն:**

Հոկտեմբերի 25-ին, հինգշաբթի օրը, Հայոց Հայրապետը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը և հայ եկեղեցու պատվիրակությունը հրաժեշտ են առնում Կիևից և վերադառնում Մայր Աթոռ:

Կիևի օդանավակայանում հայ եկեղեցու պատվիրակությանը ճանապարհում են Համայն Ուկրաինայի էկզարխ տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, Օդեսայի Սերգեյ միտրոպոլիտը և այլ բարձրաստիճան ուկրաինացի հոգևորականներ:

Թանկագին հյուրերին ճանապարհում է նաև Ուկրաինական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պիլիպենկոն:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին և հայ եկեղեցու պատվիրակությանը դիմավորում են Մայր Աթոռի միաբանները լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի** գլխավորությամբ:

Օդանավակայանում հայ եկեղեցու պատվիրակությանը ողջունում և բարի գալուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. **Սարգիս Գասպարյանը:**

Հայոց Հայրապետի, տ. Եղիշե սրբազան պատրիարքի և հայ եկեղեցու պատվիրակության հանդիպումը Մոսկվայում Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի, ռուս բարձրաստիճան հոգևորականության հետ Մոսկվայում և Կիևում հանդիսացավ Հայոց Հայրապետի արտահայտությամբ վկայությունը «ոչ միայն հայ առաքելական եկեղեցու եղբայրական ջերմ զգացումների, այլ նաև վկայությունը հայ ժողովրդի նույնքան ջերմ ու անխորտակելի բարեկամությանը դեպի ռուս մեծ ժողովուրդը»:

Արժան և իրավ:

ԱՆԱՆԻԱ ԱԲԵՂԱ ԱՐԱԲԱՋՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ՎԱՍԻԼԻ ԵՐԱՆԵԼՈՒ ՏԱՃԱՐԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի՝ ԿԻՊՐՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կիպրոսում օրերս տեղի ունեցած տխուր դեպքերը՝ կատարված մի խումբ հույն զինվորականների բռնությամբ, Մեզ խորապես վիշտ պատճառեցին, մանավանդ որ վտանգի տակ էր եղել հույնիսկ կյանքը ի Քրիստոս Մեր Եղբոր՝ Տ. Մակարիոս Սրբազան արքեպիսկոպոսի, որը կիպրացի ժողովրդի միահամուռ կամքով նախագահն է և կորովի ղեկավարը Կիպրոսի հանրապետության:

Այս ողբերգական առիթով Մեր սիրո ոլջույնն ենք ուղարկում Սրբազան Մակարիոս արքեպիսկոպոսին և մաղթում, որ Աստուծո օգնությամբ և Իր օրինավոր իշխանության ներքո վերականգնվի արդարությունը և խաղաղությունը Կիպրոսում:

Մենք կոչ ենք անում մեր բոլոր եկեղեցիներին և պետությանց ղեկավարներին՝ իրենց ձայնը բարձրացնել ի պաշտպանություն Մակարիոս արքեպիսկոպոսի օրինավոր իշխանության, ի պաշտպանություն հաստատված ժողովրդավարական սկզբունքների և ի պաշտպանություն խաղաղության Կիպրոսում:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18-ը հուլիսի 1974 թ.,
Մոսկվա

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 25-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 20-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ Մայր Աթոռ ժամանեցին վերջերս Մոսկվայի և համայն Ռուսիայի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի հրավերով Մոսկվայում և Կիևում գտնվող հայ եկեղեցու պատվիրակության անդամները՝ գլխավորությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք Նորին ամենապատվություն տ. Եղիշե սրբազան արքեպիսկոպոսի:

Հայ եկեղեցու պատվիրակության մաս էին կազմում Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ տ. Բարգեն արքեպ. Ապատյանը, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանապետ տ. Շահե արքեպ. Աճեմյանը, Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի առաջնորդ տ. Վահե եպս. Հովսեփյանը:

Երուսաղեմի Հայոց սրբազան պատրիարքին և հայ եկեղեցու պատվիրակության մյուս անդամներին Երևանի օդանավակայանում դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի միաբանները՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի, ինչպես նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող իտալահայ համայնքի հոգևոր հովիվ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը, Ալեքսանդրիայի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. Զավեն եպս. Չինչինյանը և ԱՄՆ-ից՝ տ. Հմայակ ծ. վրդ. Ինթոյանը:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատվավոր հյուրերին օդանավակայանում դիմավորում և բարի գալուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Դասուպարյանը:

Ժամը 20.30-ին հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները ժամանում են Մայր Աթոռ, Մայր տաճարում կատարում իրենց ուխտն ու աղոթքը:

Այնուհետև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի հյուրերին հրավիրում է ընթրիքի:

Վերջում Մայր Աթոռի հյուրերը մեկնում են Երևան՝ Հայրապետական վիլլա:

ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հուլիսի 26-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, Մայր տաճարում պաշտվում է երեկոյան ժամերգության կարգը, գլխավորությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի և ներկայությամբ Երուսաղեմի Հայոց պատրիարք տ. Եղիշե սրբազան արքեպիսկոպոսի և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների:

Ժամերգության ավարտին Մայր տաճարում, ի պատիվ հյուրերի, տեղի է ունենում հոգևոր համերգ:

Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ պրն. Խորեն Մելյանեջյանի, բացառիկ հաջողությամբ կատարում է հետևյալ գեղարվեստական ծրագիրը.

Կոմիտաս վարդապետ.—Խորհուրդ խորին, նվագ երգեհոնի վրա՝ Լևոն Աբրահամյան:

Տաղ Հարության՝ «Ի գերեզմանէն»՝ Լուսինե Զաքարյան:

Մոցարտ.—«Գլորիա»:

Ամերիկյան ժողովրդական երգ «Գլորի Ալելուիա»:

Բախ—Գունո.—«Ավե Մարիա»՝ Լուսինե Զաքարյան:

Մոցարտի ռեքվիեմից երեք հատված. մեներգումները՝ Լուսինե Զաքարյանի, Արաքսի Մասուրյանի, Հովհաննես Բախտաչյանի և Կոստյա Սիմոնյանի:

Չայկովսկի.—«Տէր ողորմեա»:

Դիմիտրի Բորդիանսկի.—«Փառք բարձրելոյն Աստուծոյ»:

Բախ.—Ոչ մինոր պրելյուդ և ֆուգա՝ երգեհոնի վրա՝ Լևոն Աբրահամյան:

Միջնադարյան տաղ «Խնկի ծառ»՝ Մարիա Գեղունի:

Համերգի վերջում Մայր տաճարի երգչախումբը Խորեն Մելյանեջյանի շնորհալի ղեկավարությամբ կատարում է Կոմիտաս վարդապետի «Գովեա Երուսաղէմ» շարականը և Մ. Եկմալյանի «Ցամենայնի» և «Հայր մեր» երգերը:

Վերջում հնչում է Հայրապետական մաղթերգը:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ

Հուլիսի 27-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Երուսաղեմի Հայոց պատրիարքը և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները ուխտի են գնում Եղեգնաձորի ս. Խաչ վանքը:

Եղեգնաձորի ս. Խաչ վանքի դարպասների առջև Երուսաղեմի հայոց պատրիարքին և մյուս հոգևորականներին ողջունում է բարի գալուստ է մաղթում ս. Խաչ վանքի վանահայր տ. Սարգիս քհն. Չուխուրյանը:

Վեհափառ Հայրապետը տ. Եղիշե սրբազան պատրիարքի Մայր Աթոռում գտնվելու օրերին մասնավոր տեսակցություն և խորհրդակցու-

թյուն է ունենում նրա հետ, որպես Եպիսկոպոսաց ժողովի ծիսական բարեկարգությանց հանձնաժողովի նախագահի, մի շարք հարցերի շուրջ, հարցեր, որոնց մասին հանձնաժողովը որոշ եզրակացությունների չէր հանգել և կամ քննարկման չի ենթարկել դրանք:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 28-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում պաշտվում է հանդիսավոր ս. պատարագ:

Պատարագում է Երուսաղեմի հայոց վանքի միաբան տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

«Ողջույն»-ից հետո եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր տաճար են մտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց պատրիարքը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով վերջերս Մոսկվայի և Համայն Ռուսիայի Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի հրավերով Իր այցելությանը Մոսկվա և Կիև:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հավատացյալ ժողովրդին է ներկայացնում Մայր Աթոռի հյուրերին, վերջում հանգամանորեն կանգ առնելով Երուսաղեմի Հայոց պատրիարքության դերի և տ. Եղիշե սրբազան պատրիարքի գահակալության օրերին Երուսաղեմի հայոց վանքում կատարված եկեղեցաշեն, մշակութային և կրթական արդյունավետ գործունեության վրա:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանում տրվում է պաշտոնական բարի գալուստյան հաշկերույթը, ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի:

Ճաշկերույթին ներկա էր նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամ ժողովը, Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը, տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Հովհաննիսյանը, տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը, տ. Շահե արքեպ. Աճեմյանը, տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը, տ. Զավեն եպս. Չինչինյանը, տ. Հմայակ ծ. վրդ. Ինթոյանը, տ. Աղան վրդ. Բալիոզյանը և «Էջմիածին» ամսագրի քարտուղար տ. Եզնիկ աբեղա Պետրոսյանը:

Ճաշկերույթին ներկա էր նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամ ժողովրդական ընկարիչ այրն. Գրիգոր Խանջյանը:

Ճաշկերույթի ընթացքում մեկ անգամ ևս հյուրերին ողջունում և բարի գալուստ է մաղթում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև հյուրերի անունից Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհակալության ջերմ խոսք է ասում տ. Շահե արքեպ. Աճեմյանը:

Ճաշկերույթի ավարտին Վեհափառ Հայրապետը վարդապետական լանջախաչ է նվիրում Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի միաբան տ. Աղան վրդ. Բալիոզյանին, նրա քահանայական ձեռնադրության 6-ամյակի առթիվ:

Տ. Աղան վարդապետը վերջին երեք տարիներին սովորում էր Երևանի պետական համալսարանում և կրոնական, եկեղեցագիտական առարկաներ էր դասավանդում ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 31-ին, չորեքշաբթի օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի և տ. Շա-

ճեռ արքեպ. Աճեմյանի պատվին տրվում է ողջերթի ճաշկերույթ, որին ներկա են լինում տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Զավեն, տ. Զգոն, տ. Նարեկ, տ. Գեվորգ սրբազանները տ. Աղան, տ. Պարետ վարդապետները և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Ողջերթի սույն սեղանին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանը։

Ընդունելության ժամանակ ողջերթի ջերմ խոսքեր են արտասանում Վեհափառ Հայրապետը և պրն. Ս. Գասպարյանը։

Ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքը Հայոց Հայրապետին ուղղյալ շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք է ասում իր, տ. Բաբգեն և տ. Շահե արքեպ. անունից, Ռուսաց Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի Մոսկվա և Կիև այցելության եղբայրական հրավերի և ապա Մայր Աթոռ ս. Էջմիածին այս այցելության առիթով։

Ողջերթի սույն սեղանն ավարտվում է ջերմ մթնոլորտում։

Օգոստոսի 1-ին տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Բաբգեն և տ. Շահե արքեպիսկոպոսները ժամը 12-ին ժամանում են Մայր Աթոռ Հայոց Հայրապետի հետ վերջին տեսակցությունը ունենալու և հրաժեշտ առնելու Մայր Աթոռից։

Ժամը 13.30-ին Երևանի օդանավակայանում Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքին, տ. Բաբգեն և տ. Շահե արքեպիսկոպոսներին, հանում Հայոց Հայրապետի ճանապարհում և ողջերթ են մաղթում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանը և տ. Հմայակ ծ. վրդ. Ինթոյանը և տ. Աղան վրդ. Բալիոզյանը։

Տ. Եղիշե պատրիարքին, տ. Բաբգեն և տ. Շահե արքեպիսկոպոսներին ճանապարհում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանը։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԷՆ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՂՏԱՏ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Աստուծոյ ողորմութեամբ, ի սփիւռս աշխարհի Մեր պանդուխտ զաւակները, բնակութիւն հաստատած հիւրընկալ բարի ափերու վրայ, խաղաղութեան մէջ կ'ապրին ու կը գոյատևեն, կազմակերպուած իբրև կրօնական համայնքներ՝ Հայաստանեայց Մայր եկեղեցւոյ ապահով հովանիին ներքև:

Հայ սփիւռքի տարածքի վրայ, բախտաւոր է մանաւանդ Իրաքի բարեխնամ երկրի մէջ բնակող մեր հաւատացեալ ժողովուրդը, որ կը վայելէ ամէն բարենպաստ պայմաններ՝ շէն ու պայծառ պահելու իր եկեղեցիները, իր կրթական հաստատութիւնները և մշակութային ազգային կազմակերպութիւնները:

Այս իրողութիւնը Մեզի անսահման ուրախութիւն կը պատճառէ, և Մենք կ'աղօթենք որ Տէրը յաւէտ խաղաղութեան և բարօրութեան մէջ պահպանէ իրաքեան մեծ հայրենիքը և ազնուահոգի արաբ ժողովուրդը:

Մենք երջանիկ ենք այսօր յատկապէս ողջունելու յիսուն տարիներու բեղմնաւոր գործունէութիւնը Պաղտատի Հայ երիտասարդաց միութեան, որ իրաքահայ կեանքի ամենավառ ու ամենակենսունակ արտայայտութիւններէն մին կը հանդիսանայ, իր հոգևոր ու ազգային առողջ ոգիով, իր բազմամեայ մշակութային և ազգային ծաւալուն գործունէութեամբ:

Ջերմօրէն կը շնորհաւորենք Հայ երիտասարդաց միութեան - յիսնամեայ յոբելեանը, բարձրօրէն կը գնահատենք անոր կէսդարեան վաստակը և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնէն կը յղենք Մեր հայրապետական օրհնութիւնը, մաղթելով որ ան շարունակէ իր ազգանուէր գործունէութիւնը այն ոգիով և այն ուխտով, որ Մեծ եղեռնէն փրկուած հերոսական սերունդինը եղաւ:

Իրաքի հայ երիտասարդութեան ներշնչումի աղբիւր թող հանդիսանան նաև վերածնած մեր մայր հայրենիքը և աստուածակառոյց Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, որոնք կա՛ն ու կը մնա՛ն անսասան և յաւիտենական, ինչպէս վեհափառ լեռը հայոց՝ Արարատ:

Մենք կը մաղթենք, որ Իրաքի հայ երիտասարդ սերունդները այս տեսիլքով ապրին, աճին ու ծաղկին Աստուծոյ շնորհներով, իբրև հարազատ զաւակները մեր սուրբ եկեղեցիին ու ազգին և իբրև հաւատարիմ քաղաքացիները իրաքեան բարեխնամ երկրին:

Հայրական ողջո՛յն և օրհնութի՛ւն Պաղտատի Հայ երիտասարդաց միութեան ղեկավարներուն և բոլոր անդամներուն, այժմ և յաւիտեան. ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 1-ը յուլիսի
1974 փրկչական ամի,
և ի՛ տումարիս հայոց ՌՆԻԳ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄՐ. 776

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և պաշտոնական հրավերով Կահիրեի, Ալեքսանդրիայի և Բաղդադի թեմական խորհուրդների, սույն թվականի մայիսի 28-ից մինչև հունիսի 26-ը Միջին Արևելքի վերոհիշյալ քաղաքներում էր գտնվում Մայր Աթոռի պատգամավորությունը՝ անձամբ տանելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները տիրախնամ այդ թեմերի հոգևորականությանը, ազգային, եկեղեցական մարմիններին, մշակութային կազմակերպություններին, մամուլին և հայ հավատացյալ ժողովրդին:

Պատվիրակության կազմում էին Մայր Աթոռի դիվանապետ և Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ **տ. Արսեն եպս. Բերբերյանն** ու «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս **Արթուն Հատիտյանը:**

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՀԻՐԵՈՒՄ

Մայիսի 28-ին, երեքշաբթի **օրը,** առավոտյան ժամը 10-ին, Երևանի օդանավակայանում Մայր Աթոռի պատվիրակությանը ճանապարհում են վրահայոց թեմի առաջնորդ **տ. Գևորգ եպս. Սերայդարյանը,** հոգևոր ճեմարանի տեսուչ **տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:**

Ժամը 16-ին, Բեյրութի ճանապարհով, պատվիրակությունը ժամանում է Կահիրե, ուր նրան ջերմորեն դիմավորում և բարի գալուստ են մաղթում եգիպտահայոց թեմի առաջնորդական տեղապահ **տ. Ներսեհ ծ. վրդ. Բապուճյանը,** Կահիրեի Թեմական և Քաղաքական ժողովների ատենապետներ պրն. պրն. **Արտո Պոլոգտանյանն** ու **Հայկազուն Քյուրքճյանը,** Ալեքսանդրիայի Քաղաքական ժողովի անդամ պրն. **Նազարեթ Մարկոսյանը:**

Այնուհետև պատվիրակությունն առաջնորդվում է օդանավակայանի պատվո հյուրերի հատուկ սրահ, ուր նրան դիմավորում և բարի գալուստ են մաղթում տ. **Սահակ ավագ քհն. Շաքարյանը, տ. Նարեկ քհն. Ֆրրնճյանը,** Քաղաքական և Թեմական ժողովների, եկեղեցու հոգաբարձության պատվարժան անդամները, երեսփոխաններ, Գալուստյան և Նուպարյան ազգային վարժարանների տնօրենները ու մշակութային ակումբների, «Արև» և «Հուսաբեր» օրաթերթերի պատասխանատու ներկայացուցիչներ:

Մայր Աթոռի պատվիրակությանը դիմավորելու համար Ալեքսանդրիայից Կահիրեի օդանավակայան էին ժամանել նաև ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. **Զավեն եպս. Ղինչինյանը,** ազգային իշխանության կողմից՝ **Մուրադ Քյոշկերյանը,** Հ. Բ. Ը Միության Ալեքսանդրիայի մասնաճյուղի ատենապետ և «Տիգրան Երկաթ» մշակութային միության կողմից՝ **Բենիամին Մամուրյանը** և ուրիշներ:

Ապա պատվիրակությունն առաջնորդվում է Կահիրեի ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, ուր տ. Արսեն եպիսկոպոսը մուտք է գործում «Հրաշափառ»-ով:

Առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծ. վարդապետը եգիպտահայ թեմի ազգային իշխանությանց անունից սրտագին ողջունում է ժամանումը Մայր Աթոռի պատվիրակությանը՝ շեշտելով, որ «այս այցելությունը հրճվանքով կլեցնե մեր բոլորին սրտերը, որովհետև դուք կուգաք դարավոր ու աստվածակառույց, մեր ժողովուրդի հավատքի, մշակույթի, հոգևոր կյանքի և լույսի կեդրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնեն բերելու մեզի մեր առաքելատիպ և հույժ սիրեցյալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու հայրական ողջույնները»:

Իր պատասխան խոսքի մեջ տ. Արսեն եպիսկոպոսը, հանուն Մայր Աթոռի պատվիրակության, սրտագին շնորհակալություն է հայտնում այս ջերմ դիմավորության և ողջույնի անկեղծ արտահայտությունների համար և ապա առաջին իսկ առիթով հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջույնները:

Այնուհետև Մայր Աթոռի պատվիրակները առաջնորդվում են «Կղեոպատրա» հյուրանոց:

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 30-ին, հինգշաբթի օրը, Մայր Աթոռի պատվիրակները առավոտյան ժամը 10.30-ին, ընկերակցությամբ առաջնորդական տեղապահ հոր և Քաղաքական ժողովի երկրորդ ատենապետ պրն. **Պոլ Քիլիճյանի,** այցելում են Գալուստյան ազգային վարժարան, ուր ընդունվում են վարժարանի տնօրեն **Նշան Վարդյանի,** ուսուցչական կազմի, հոգաբարձության և ծնողական խորհրդի անդամների կողմից և առաջնորդվում տեսչարան, ուր հարգելի տնօրենը բարի գալուստ է մաղթում պատվիրակներին:

Խոսք են առնում նաև Մայր Աթոռի պատվիրակները, հաղորդում Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և շեշտում՝ հայ եկեղեցու կողքին հայ դպրոցի կատարած շնորհակալ մեծ առաքելությունը սփյուռքի մեր պայմաններում հայ նոր սերնդի քրիստոնեական ու հայեցի դաստիարակության և հայապահպանման սրբազան գործում:

Կահիրեի Գալուստյան վարժարանում այժմ սովորում են շուրջ 160 պշակերտ-աշակերտուհիներ:

Ժամը 12.30-ին պատվիրակները, ընկերակցությամբ առաջնորդական տեղապահ հոր, այցելում են Հելիոպոլսի Նուպարյան ազգային վարժարան, ուր սովորում են շուրջ 120 աշակերտ-աշակերտուհիներ։

Վարժարանի տեսչարանում տնօրեն Արամ Մովսիսյանը, բարի գալուստ մաղթելով պատվիրակության անդամներին, ներկայացնում է ուսուցչական կազմի անդամներին և ապա բոլոր ներկաներին հրավիրում վարժարանին առընթեր «Պըլըգտանյան» հանդիսասրահ՝ հանդիպում ունենալու Մայր Աթոռի Ներկայացուցիչների հետ։

Հանդիսության բացումը կատարում է առաջնորդական տեղապահ հայր սուրբը։ Ազգային իշխանության անունից պատվիրակներին ողջունում է պրն. Արտո Պըլըգտանյանն ու ապա վարժարանի հարգելի տնօրենը։

Այստեղ ևս խոսք են առնում զույգ պատվիրակները և իրենց հայրենաբույր ելույթներով խանդավառում աշակերտությանն ու ուսուցչական կազմին։

Արդարև, սփյուռքի մեջ, ի գին անհուն նյութական ու բարոյական զոհողության, հայ դպրոցների գոյությունն ու պահպանումը սփյուռքի հայության մեծագույն ներդն է մեր վերածնված մայր հայրենիքի և հայ ժողովրդի համար։

Ժամը 13.30-ին պատվիրակները, ընկերակցությամբ տ. Ներսեհ ծ. վարդապետի և պրն. Արտա Պըլըգտանյանի, այցելում են Հելիոպոլսի «Այծեմնիկ» հանգստյան տուն կամ ծերանոց, ուր պատսպարվում են շուրջ 40 ծերունիներ՝ անվճար վայելելով եգիպտահայության հոգածությունն ու Տիկնանց Այծեմնիկ խնամակալության անդամների գուրգուրանքը։ Ամեն ամիս ծերանոցի համար ծախսվում է 500 եգիպտական ոսկի։ Եգիպտոսի հյուրընկալ հողի վրա «Այծեմնիկ» ծերանոցը հայ անվանը պատիվ բերող մի օրինակելի հաստատություն է և միաժամանակ պայծառ վկայությունը մեր ժողովրդի քրիստոնեական և մարդասիրական տոհմիկ առաքինությունների։

Իրենց այցելության առիթով պատվիրակները, հանուն Հայոց Հայրապետի, 200 եգիպտական ոսկի են նվիրում «Այծեմնիկ» ծերանոցին՝ ի վարձատրություն այդ հաստատության գովելի աշխատանքների։

Մայր Աթոռի պատվիրակներն այցելում են ծերանոցի զանազան բաժինները և ապա սեղանակից լինում հայ մամիկների և պապիկների կեսօրվա ճաշին՝ մասնակցությամբ վարչության անդամուհիների։

Ճաշի ընթացքում Ա. Հատիտյանը խոսք առնելով շեշտում է մեր ժողովրդի եկեղեցական, մշակութային, կրթական ու հայրենասիրական կյանքում հայ կնոջ կատարած պատմական դերը ինչպես անցյալում, նաև այսօր՝ բարձր գնահատելով նաև «Այծեմնիկ»-ի աստվածահաճո և մարդասիրական ծառայությունները եգիպտահայ համայնքի ծոցում։

«Կահիրեի հայությունը քանի մը օրերե ի վեր ցնծության օրեր կապրի,— գրում էր «Արև» օրաթերթում (հունիս 9 և 11) խմբագիր և Քաղաքական ժողովի անդամ Կարապետ Դեմիրճյանը,—ոգևորություն և հետաքրքրություն կտիրե ամենուրեք, որովհետև մեր մեջ կգտնվին ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատվիրակները՝ հանձինս տ. Արսեն եպս. Ղերբերյանի և պրոֆ. Արթուն Հատիտյանի, որոնց շուրջ սիրո և հարգանքի ալիք մը ստեղծված է և անոնք ուշադրության, հոգածության առարկան են տեղապահ հայր սուրբին, ազգային իշխանության անդամներուն և ազգայիններուն։

Վստահ ենք որ բնականաբար նույն զգացումները կտածեն նաև անոնք, մեր սիրելի պատվիրակները, ս. Էջմիածնի հոգևոր զավակներուն՝ եգիպտա-

հայության հանդեպ։ Օրվան բոլոր ժամերուն անոնք շփման մեջ են ազգային-ներու հետ, ամեն հայ անհատի կամ կազմակերպության ներկայացուցիչ, որ կփափաքեր տեսակցություն ունենալ իրենց հետ, բոլորին անխտիր գոհացում տվին և այս ազնիվ վերաբերմունքի իբրև հետևանք իրենց հանգիստը զոհեցին։ Անոնք համեստությամբ, հասկացողությամբ և անհուն ներողամտությամբ լսեցին բոլորը, խրատեցին, խրախուսեցին և կոչ ուղղեցին համերաշխության, ուժերու միացման, հօգուտ մեր ազգին և եկեղեցիին։ Ս. Էջմիածնեն ու մայր հայրենիքեն տեղեկություններ և խապրիկներ հաղորդեցին։ Այն հյուրանոցը ուր իջևանած են, ուխտատեղիի մը վերածված է։ Այցելուները անդադար են»։

Մայր Աթոռի պատվիրակությունը հյուրանոցում սիրով ընդունում է հաջորդաբար այցելությունները Քաղաքական ու Թեմական ժողովի անդամներ-ի, **Հակոբ Էքսերճյանի, Հակոբ Համբիկյանի, Նորայր Տովլաթյանի, Թուրեն Գագազյանի**, Հայ գեղարվեստասիրաց միության վարչության ատենապետուհի տիկ. **Շաքե Իփեքյանի**, Բ ատենապետ **Պերճ Թերզյանի**, անդամներ տիկ. **Ալիս Տեփոյանի** և **Ժիրայր Թովմասյանի** և «Արև»-ի կողմից՝ **Կարապետ Դեմիրճյանի**, «Հուսաբեր»-ի և Մշակութային ընկերակցության կողմից՝ **Կայծ Կոկանյանի, Սարգիս Վ. Սարգսյանի**, դոկտ. **Սուրեն Բայրամյանի**, «Ջահակիր» ազգային-գրական, ընկերային շաբաթաթերթի խմբագիր և Քաղաքակ'անի անդամ **Սարգիս Պալայանի**, Գալուստյան վարժարանի ծնողքուսուցիչ խորհրդի անդամների՝ գլխավորությամբ տնօրեն **Ն. Վարդյանի** և **Հովակիմ Սիրքեճյանի**։

Մայիսի 30-ին, հինգշաբթի օրը, Ալեքսանդրիայից ժամանել էր Քաղաքական ժողովի ատենապետ պրն. **Վահան Ալեքսանյանը**՝ անձամբ հրավիրելու համար Մայր Աթոռի պատվիրակությանը այցելելու Ալեքսանդրիա։

Պատվիրակությունն այցելում է նաև առաջնորդարանին առընթեր Եգիպտոսի նախկին առաջնորդ և ապա Երուսաղեմի պատրիարք Թորգոմ Գուշակյանի անվան Թորգոմյան մատենադարան։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ

Հունիսի 2-ին, կիրակի։ Հոգեգալստյան տոն է։

Կահիրեի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը. «Եւ ամենեքեան լցան Հոգւով սրբով» բնաբանով քարոզում օրվա տոնի նշանակության և խորհրդի մասին, հաղորդելով նաև Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները՝ Եգիպտոսի օրհնյալ հողի վրա խաղաղ և բարօր կյանքով ապրող եգիպտահայությանը։

Ս. պատարագի երգեցողությունը կատարում է «Ծնորհալի» երգչախումբը՝ ղեկավարությամբ մաեստրո **Էդվարդ Հակոբյանի**։

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն՝ հայրենիքի ազատության համար նահատակված հերոսների հիշատակին։

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հունիսի 2-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 20.30-ին, ազգային իշխանության կազմակերպությամբ և հովանավորությամբ Մայր Աթոռի պատվիրակները համաժողովրդական հանդիպում են ունենում եգիպտահայության

հետ, Հելիոպոլսի Նուպարյան ազգային վարժարանին առընթեր «Պլլրգ-տանյան» հանդիսասրահում:

Հանդիպմանը ներկա են լինում Կահիրեի Քաղաքական և թեմական ժողովի անդամներ՝ երեսփոխաններ, հոգաբարձությանց, ազգային այլ կազմակերպությունների և եգիպտահայ մամուլի ներկայացուցիչներ, մշակութային, մարզական միությունների և ակումբների վարչականներ, ազգային զույգ վարժարանների տնօրեններն ու ուսուցիչները և ժողովրդի մի հոծ բազմություն:

Հանդիպումը սկսվում է Հայրապետական մաղթերգի հոտնկայս ունկնդրությամբ: Հանդիսության բացման խոսքը կատարում է առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծ. վարդապետը, որը, հանուն եգիպտահայության, որդիական շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Հայոց Հայրապետին, որ բարեհաճել էր Եգիպտոս ուղարկել Իր պատվիրակներին, որոնք հոգևոր ցնծության, ազգային հպարտության և հայրենասիրության անմոռանալի ապրումներ պարգևեցին եգիպտահայությանը: Ապա գործադրության է դրվում գեղարվեստական մի ծրագիր, որից հետո առաջինը խոսք է առնում տ. Արսեն եպիսկոպոսը, համառոտ, բայց ամբողջական պատմականն է անում Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր, եկեղեցական, մշակութային ու ազգային առաքելության մեր ժողովրդի պատմության մեջ ինչպես անցյալում, նաև այսօր՝ շեշտելով և թվելով հատկապես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի վերջին 20-ամյակի ընթացքում ս. Էջմիածնում ծավալած բազմակողմանի և արդյունավետ գործունեության բացառիկ նշանակությունը, համահայկական և միջեկեղեցական մակարդակների վրա:

Այնուհետև խոսք է առնում «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, որն իր խոսքի սկզբում շնորհակալության ջերմ խոսք է ասում Կահիրեի եկեղեցական-ազգային իշխանությանց, կազմակերպություններին, հայ մամուլին և եգիպտահայ ժողովրդին, այն ուշադրության, հարգանքի և սիրո համար, որոնցով շրջապատված է Մայր Աթոռի պատվիրակությունը Կահիրեում:

Այս ամենը, շեշտում է հարգելի բանախոսը, հասցեագրված է համազգային այն մեծ սրբավայրին, հայ եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնին, դեպի նրա աստվածարյալ և առաքելաշավիղ Գահակալը, որն Իր սուրբ և բարի ձեռքերում է պահում հայ եկեղեցու գերագույն հոգևոր իշխանությունը, եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեությամբ:

Այնուհետև պրն. Ա. Հատիտյանը համառոտ պատմականն է անում անցյալի մեր ժողովրդի ողբերգության և հուզումնալից արտահայտություններով խոսում ս. Էջմիածնի—մայր հայրենիք և սփյուռք փոխադարձ հարաբերությունների և հոգևոր-հայրենասիրական կապերի մասին՝ նշելով, որ հայ ժողովուրդն ու հայ եկեղեցին, 1915 թվականի համազգային մեծ ողբերգությունից հետո, իրենց հոգում կենսունակության անսպառ ուժեր գտան և կարողացան այդ նահատակությունը վերածել հրաշքի համազգային համահայկական վերածննդյան և՛ սփյուռքի տարածքի վրա, և՛ մանավանդ մայր հայրենիքում: Գնահատում են սփյուռքը իր վերապրումի և վերակազմության ճիգերի մեջ: Գիտենք նաև նրա դժվարություններն ու մտահոգությունները: «Բայց,— շեշտում է հարգելի բանախոսը,—սփյուռքը իր ապրումների, իր հաջողությունների մեջ գոյատևելու համար անհրաժեշտորեն կարիք ունի ս. Էջմիածնի հոգևոր առաջնորդության, և վերածնված Հայոց աշխարհի ներշնչանքին»:

Հայոց Հայրապետին, ս. Էջմիածնին, հայրենի մեր ժողովրդին,—ասում է բանախոսը,—մտահոգող միակ ու հիմնական հարցը սփյուռքի հայության ապագայի և ապահովության հարցն է: Սփյուռքում պայքարներ թող լինեն, սակայն հայրենիքի և հայ եկեղեցու գերագույն շահերի առաջ պետք է խոնարհվեն բոլոր դրոշակները և լռեն բոլոր հատվածական տարակարծությունները: Մայր Աթոռի և հայրենիքի գերագույն շահերի ապահովումն ու գիտակցությունը, եկեղեցական-հայրենասիրական միասնականությունն առաջնահերթ իդեալն ու միակ մտահոգությունը պետք է լինեն սփյուռքի բոլոր ղեկավար մարմիններին: Այս է ժամանակի թելադրանքը: Այս են պահանջում մեր գաղութների և մեր ժողովրդի գերագույն շահերը,—եզրակացնում է բանախոսը, ընդհանուր խանդավառության և ջերմ ծափերի մեջ:

Մայր Աթոռի պատվիրակության համաժողովրդական այս հանդիպումն ավարտվում է առաջնորդական տեղապահ հոր շնորհակալական խոսքով և տ. Արսեն եպիսկոպոսի «Պահպանիչ»-ով:

ԿԱՀԻՐԵԻ ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Հունիսի 5-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 20-ին, Մայր Աթոռի պատվիրակները առաջնորդարանում ներկա են լինում Քաղաքական ժողովի և Թեմական ժողովի դիվանի համատեղ նիստին, ուր, հաղորդելով Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի օրհնությունները ու ողջույնները, բարեմաղթություններ են կատարում ազգային իշխանության եկեղեցաշեն, կրթանվեր գործունեության հետագայում է՛լ ավելի հաջողության համար:

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, «Թեքեյան» սրահի մեջ Կահիրեի հայ գեղարվեստասիրաց միությունն ընդունելություն էր կազմակերպել ի պատիվ Մայր Աթոռի պատվիրակների:

Ընդունելությունը խանդավառորեն ղեկավարում է Հ. Գ. Միության բազմամյա ատենապետ և վետերան-անդամ պրն. **Վահագն Տեփոյանը,** որը հակիրճ խոսքով ներկայացնում է օրվա հյուրերին և բաժակ է բարձրացնում Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության և Մայր Աթոռի պայծառության համար:

Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական գեղեցիկ մի հայտագիր՝ խմբերգերից և արտասանություններից կազմված:

Ընդունելության ժամանակ խոսք են առնում տ. Արսեն եպս. Բերբերյանն ու պրն. Ա. Հատիտյանը, որոնք իրենց սրտառուչ ելույթներով մի անգամ ևս խանդավառություն են ստեղծում բոլոր ներկաների սրտերում:

Ընդունելությունն անցնում է խանդավառ ու շինիչ մթնոլորտում, ս. Էջմիածնի խորհրդով և վերածնված մայր հայրենիքի մշակութային, գիտական, տնտեսական խոստումնալից կյանքի պայծառ հեռանկարով:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ

Հունիսի 6-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Մայր Աթոռի պատվիրակները, ընկերակցությամբ առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծ. վարդապետի, մեկնում են Ալեքսանդրիա:

Քաղաքի կայարանում պատվիրակներին դիմավորում և բարի գալուստ են մաղթում, **տ. Զավեն եպիսկոպոսի** գլխավորությամբ, Քաղաքական և Թեմական ժողովների ատենապետները՝ պրն. **Մարտիկ Զարպհանալյանն** ու

Վահան Ալեքսանյանը, ազգային իշխանության և եկեղեցու հոգաբարձության պատվարժան անդամները, այդ թվում՝ պրն. պրն. Ստեփան Ստեփանյանը, Մուրադ Քյոշկերյանը, Հակոբ Վարդապետյանը, Պետրոս Աշճյանը, Հակոբ Քեհյայանը, Գառնիկ Սարաֆյանը, Նազարեթ Մարկոսյանը, Վահրամ Թոսունյանը:

Տ. Զավեն և տ. Արսեն սրբազանները «Հրաշափառ»-ով մուտք են գործում Ալեքսանդրիայի հայոց ս. Պողոս-Պետրոս եկեղեցի, ուր տ. Զավեն եպիսկոպոսը բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի պատվիրակներին և թեմի ուրախությունն է հայտնում այս բարեպատեհ առիթով:

Ապա տ. Արսեն եպիսկոպոսը, հանուն պատվիրակության, շնորհակալություն է հայտնում ցուցաբերված ջերմ ընդունելության և տ. Զավեն եպիսկոպոսի սրտագին խոսքերի համար և հաղորդում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները Ալեքսանդրիայի հայոց ազգային իշխանության և հավատացյալ ժողովրդին:

Այնուհետև Մայր Աթոռի պատվիրակները բարձրանում են առաջնորդարան, ուր Քաղաքական ժողովի ատենապետ պրն. Վահան Ալեքսանյանը, հանուն թեմի ազգային իշխանության, ջերմ խոսքերով բարի գալուստ է մաղթում նրանց:

Առաջնորդարանում ապա տեղի է ունենում պատվիրակների և բոլոր ներկաների միջև մտերմիկ զրույց՝ ջերմ մթնոլորտում:

Պատշաճ հյուրասիրությունից հետո պատվիրակները տ. Զավեն եպիսկոպոսի և ազգային իշխանության անդամների ուղեկցությամբ այցելում են Պողոսյան ազգային վարժարան ու Մելքոնյան մանկապարտեզ, ուր աշակերտության կողմից գործադրվում է գեղարվեստական հաճելի մի ծրագիր:

Այնուհետև Մայր Աթոռի պատվիրակները առաջնորդվում են ծովափնյա «Սեսիլ» հյուրանոց, ուր հաջորդ օրերին ընդունում են բազում այցելություններ և տեսակցություններ են ունենում զանազան կազմակերպությունների ղեկավարների և անհատ ազգայինների հետ, ազգային-եկեղեցական և թեմական մի շարք հարցերի շուրջ:

Մայր Աթոռի պատվիրակներն Ալեքսանդրիայում իրենց կեցության օրերին այցելում են «Տիգրան Երկաթ», «Հառաջդիմասեր» մշակութային և մարզական կազմակերպություններ, ուր իրենց ոգեշունչ և հայրենաբույր ելույթներով, Մայր Աթոռի և հայրենիքի մասին իրենց տված տեղեկություններով խանդավառում են բոլորին: Պատվիրակներն այցելում են նաև Ալեքսանդրիայի հայոց ազգային գերեզմանատուն ու տեղի գեղեցիկ մատուռ:

Հունիսի 8-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռի պատվիրակները, ուղեկցությամբ տ. Զավեն եպիսկոպոսի և Քաղաքականի ատենապետ պրն. Վահան Ալեքսանյանի, քաղաքավարական այցելություն են տալիս Համայն Աֆրիկայի Պապ և Ալեքսանդրիայի հունաց Նիկոլա Զ Սրբազան Պատրիարքին: Քույր եկեղեցու հոգևոր պետի և հայ եկեղեցու ներկայացուցիչների միջև տեղի է ունենում էկումենիկ ոգով զրույց, որի ընթացքում տ. Արսեն եպիսկոպոսն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջույններն է հաղորդում հունաց Սրբազան Պատրիարքին:

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, Մայր Աթոռի պատվիրակներն առաջնորդարանի դահլիճում մասնակցում են Քաղաքական ժողովի և Թեմականի դիվանի համատեղ նիստին, որի ընթացքում բարիգալստյան և ողջույնի խոսքերից հետո պատվիրակները հետաքրքրվում են Ալեքսանդրիայի եկեղեցական և մշակութային կյանքով և այս առթիվ իրենց ուրախությունն

ու գնահատանքն են հայտնում թեմի կյանքի հոգևոր կենսունակության, այնտեղ տիրող համերաշխ ոգու և կատարվող եկեղեցաշեն, կրթանվեր աշխատանքների համար։

Հունիսի 9-ին, կիրակի օրը, տ. Արսեն եպիսկոպոսը պատարագ է մատուցում ս. Պողոս-Պետրոս եկեղեցում՝ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, ապա «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» բնաբանով քարոզում և մխիթարում հավատացյալ հոծ բազմությանը։

Ժամը 13-ին, ի պատիվ Մայր Աթոռի պատվիրակների, ծովահայաց «Ցախթ կլուպ»-ում հրաժեշտի ճաշկերույթ է տրվում ազգային իշխանության կողմից, որին մասնակցում են շուրջ 100 հրավիրյալներ։

Ժամը 16-ին պատվիրակները ներկա են լինում Պողոսյան ազգային վարժարանի մարզահանդեսին։

Ժամը 18-ին առաջնորդարանին առընթեր «Կոմիտաս» սրահում Մայր Աթոռի պատվիրակները խանդավառ մթնոլորտում ու հոծ բազմության ներկայությամբ հրապարակային հանդիպում են ունենում Ալեքսանդրիայի հայության հետ, ուր հանդես են գալիս ոգևորիչ բանախոսությամբ՝ մի անգամ ևս հաղորդելով Հայոց Հայրապետի օրհնությունները։

Հունիսի 11-ին, երեքշաբթի օրը, Մայր Աթոռի պատվիրակները հրաժեշտ են առնում Ալեքսանդրիայի ազգային իշխանություններից և ժողովրդից և լավագույն տպավորություններով վերադառնում Կահիրե՝ ինքնաշարժերով։

Մայր Աթոռի պատվիրակության այցը Ալեքսանդրիայի հայոց համայնքին կմնա հիշատակելի և անմոռանալի։

ՋԵՐՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Հելիոպոլսում «Հուսաբեր» մշակութային ընկերակցությունն իր «Լ. և Ս. Գարագաշյան» հանդիսասրահում, ի պատիվ Մայր Աթոռի պատվիրակության, խանդավառ մթնոլորտում ընդունելություն է կազմակերպում։

Հանդիսությունը ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքով բացում է **Սարգիս Վ. Սարգիսյանը** և այն ղեկավարում ձեռնհասորեն։

Գործադրության է դրվում օրվա հանդիսությանը նվիրված գեղարվեստական պատշաճ մի ծրագիր։

Հանուն «Հուսաբեր» մշակութային ընկերակցության նախագահ պրն. **Ավետիս Զագրճյանի** ընկերակցության վարչության բազմամյա ատենապետ պրն. **Կայծ Կոկանյանը** գրավոր ու մի ջերմ ուղերձով ողջունում է ներկայությունը հայրապետական պատվիրակների՝ ներկայացնելով նաև համառոտ պատկերը ընկերակցության գործունեության։

Հանուն երիտասարդ նոր սերնդի բովանդակալից մի ուղերձով պատվիրակության բարի գալուստ է մաղթում նաև դոկտ. **Սուրեն Բայրամյանը**՝ շեշտելով սփյուռքի պայմաններում հասակ ստնող հայրենազուրկ և ձուլման վտանգին ենթակա մեր նոր սերնդի առողջ ու հայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը հայրենիքի և հայության համար։

Ընդունելության ժամանակ հանդես են գալիս նաև պատվիրակները՝ շեշտելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ մեր ազգային-եկեղեցական միասնականության անհրաժեշտությունը՝ հաղթահարելու համար

սանուվանդ հայապահպանման գործում սփյուռքի հայության առաջ կանգնած ներքին և արտաքին խոչընդոտներն ու դիմագրավելու դժվարին կացությունները, ապրելու համար որպես հայկական մեկ ոգեկանություն, մեկ եկեղեցի և մեկ հայրենիք։

ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՌՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ

Հունիսի 12-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի պատվիրակները պաշտոնական այցելություն են տալիս Կահիրեում եգիպտական կառավարության մոտ Սովետական Միության արտակարգ լիազոր-դեսպան Նորին Գերազանցություն Վլադիմիր Պոլյակովին։

Մեծահարգ պրն. դեսպանի և Մայր Աթոռի պատվիրակության անդամների միջև տեղի է ունենում մտերիմ զրույց։

Երեկոյան ժամը 18-ին Մայր Աթոռի պատվիրակներն առաջնորդարանում ներկա են լինում Քաղաքական ժողովի հերթական նիստին, որի ընթացքում նրանց համառոտ տեղեկություններ են տրվում Կահիրեի եկեղեցական, մշակութային և կրթական կյանքի մասին։ Պատվիրակներն իրենց ուրախությունն ու գնահատանքն են արտահայտում ազգային իշխանության անդուլ ջանքերի շնորհիվ համերաշխության և միասնականության ոգով կատարված աշխատանքների համար։

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Կահիրեի ազգային իշխանությունը Հելիոպոլսի «Մերիլենդ» ճաշարանի սրահում, ի պատիվ Մայր Աթոռի պատվիրակության, ողջերթի ընդունելություն է կազմակերպում, որին ներկա են լինում առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծ. վարդապետը, տ. Զավեն եպիսկոպոսը, Կահիրեի Թեմական ու Քաղաքական ժողովի ատենապետներ պրն. պրն. Արտո Պոլոգտանյանը, Հայկազուն Քյուրքճյանը, Ալեքսանդրիայի Քաղաքական ժողովի ատենապետ պրն. Վահան Ալեքսանյանը, ազգային երեսփոխաններ, ազգային իշխանությանն առընթեր մարմինների անդամներ, մշակութային միությունների ղեկավարներ, եգիպտահայ մամուլի ներկայացուցիչներ, Կահիրեի և Ալեքսանդրիայի եկեղեցիների հոգաբարձության անդամներ, տիկնանց խնամակալության անդամուհիներ, ինչպես նաև պաշտոնական այլ անձինք և հրավիրյալներ, շուրջ 100 հոգի։

Հրաժեշտի սիրո սեղանն էր այդ։

Երազի նման, արագ, բայց բովանդակալից ու հուզումնառատ անցել էին Մայր Աթոռի պատվիրակության այցելության օրերը եգիպտական հյուրընկալ հողի վրա, հայ ժողովրդի ծոցում, և այժմ հրաժեշտի վերջին պահն էր։

Հուզվել էին բոլորը՝ հյուրընկալներն ու հրավիրյալները հավասարապես, բայց և ուրախ՝ Մայր Աթոռի պատվիրակների այս պատմական այցելության առիթով։

Այս հուզումն ու ուրախությունն արտահայտվում էին ի դեմս ողջ եգիպտահայության, Թեմականի ատենապետ պրն. **Արտո Պոլոգտանյանի** ողջերթի ուղերձի հետևյալ գեղեցիկ ու պատկերավոր արտահայտությունների մեջ։

«Հասավ հարգելի պատվիրակներու մեկնումի օրը։ Շատ կարճ թվեցավ մեզ՝ բոլորիս, իրենց կեցությունը մեր մեջ, որովհետև չի հագեցանք իրենցմով։ Գիտենք, կնախազգանք և համոզված ենք որ իրենց մեկնումեն վերջ՝ պիտի փնտրենք զիրենք, պիտի հիշենք իրենց փառավոր ու շքեղ ներկայությունը մեր մեջ, լսել իրենց բոցեղեն ու իրապես հրաշունչ խոսքերը, և վերապրել մեր մեջ խորաքանդակված և մեր աչքերեն արցունքներ խլած հա-

կատքի, հայրենասիրության, կարոտի այդ հայրենաբույր խոսքերում հոգևոր և հայրենասիրական անկրկնելի ապրումները:

Մեկը բերած էր իր հետ գմբեթավոր ս. Էջմիածինը, ցույը իր ձեռքին նահապետ իր Գահակալովը, մյուսը՝ ամբողջ Հայաստանը և որ իր գուրգուրոտ ձեռքերում մեջ մեզ կերկարեր ազգին համար բաբախող տա՜ք, տա՜ք իր սիրտը: Ծնորհիվ սրբազան հոր, ս. Էջմիածնի ավազանին մեջ մենք մկրտվեցանք կրկին ու ապա հաղորդվեցանք բոլորս Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի սուրբ Աջով և օրհնություններով, մինչ պրոֆ. Հատիտյան, մեր հուզումնե դողդողացող ձեռքեն բռնած, մեզ կառաջնորդեր Էջմիածնեն դեպի Զվարթնոց, դեպի Ծիծեռնակաբերդ և վերջապես դեպի հաղթապանծ ու ղողանջող Սարդարապատը:

Որքա՜ն փափաքելի պիտի ըլլար ավելի հաճախ ունենալ այսպիսի այցելություններ, հայրենիքեն ու ս. Էջմիածնեն, սփյուռքի ամբողջ մեր գաղութներուն համար: Ամեն բանե առաջ **ազգապահպանումն** է որ կօգտվի և սփյուռքահայությունը կգոտեպնդվի այս կենդանի ուղղակի և շոշափելի ջերմ կապով:

Հանուն Կահիրեի ազգային իշխանության և էջմիածնական այս թեմին, այս հանդիսավոր պահուն, մենք բոլորս անգամ մը ևս կկրկնենք, կվերանորոգենք մեր բոլորանվեր ու անսակարկ հավատարմության ուխտը, ս. Էջմիածնին և անոր անզուգական Գահակալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի հանդեպ, ու կմնանք միշտ աղոթող ս. Էջմիածնի անսասանության, բարգավաճման և սիրելի հայրենիքի բարօրության համար»:

Նույնպիսի ջերմ, հայաշունչ ողջերթի խոսքեր են արտասանում նաև տ. **Զավեն** եպիսկոպոսը և ազգային երեսփոխան պրն. **Հակոբ Համբիկյանը:**

Այնուհետև հրաժեշտի այս պատմական սեղանին, խորապես հուզված, խոսք են առնում Մայր Աթոռի պատվիրակները՝ տ. **Արսեն** **եպս. Բերբերյանն** ու պրն. **Արթուն Հատիտյանը,** որոնք իրենց զգացված շնորհակալությունն են հայտնում Կահիրեի և Ալեքսանդրիայի ազգային իշխանությանց, բոլոր կազմակերպություններին, մամուլին և ողջ եգիպտահայության անցնող 17 օրերի ընթացքում, որպես Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչների, իրենց ցույց տրված անվերապահ, սրտաբաց ընդունելության, հյուրասիրության, սիրո և հարգանքի համար:

Հրաժեշտի սույն ընդունելությունն ավարտվում է տ. Արսեն եպիսկոպոսի «Պահպանիչ»-ով և միաբերան երգված Տերունական աղոթքով:

Հունիսի 18-ին, հինգշաբթի օրը, ժամը 16-ին, Մայր Աթոռի պատվիրակները, անմոռանալի տպավորություններով և սրտագին հուշերով հրաժեշտ են առնում եգիպտահայ պատվական գաղութից և Բեյրութի վրայով մեկնում Բաղդադ:

Կահիրեի միջազգային օդանավակայանում Մայր Աթոռի պատվիրակությանը նույնպիսի հանդիսավորությամբ ճանապարհում են Եգիպտոսի ազգային իշխանությունները, բոլոր կազմակերպությունները, ինչպես ժամանման օրը՝ մայիսի 28-ին:

Եգիպտահայ թեմն իր առաջնորդարաններով, ազգային իշխանության մարմիններով, եկեղեցական, կրթական իր հաստատություններով, մշակութային եռուն իր կյանքով և իր կազմակերպություններով սփյուռքի մեր տիրախնամ թեմերի մեջ իր հնությամբ և իր կենսունակությամբ գրավում է որոշյալ տեղ:

Երբեմնի 40—50 հազար հայություն հաշվող այս թեմն այսօր իր ծոցում

հաշվում է շուրջ 12 հազար հայություն, որից 9000-ը Կահիրեում, 3000՝ Ալեքսանդրիայում։

Եգիպտոսի ամենքնչական այս հողում այսօր էլ բաց են մեր ազգի տները, հայկական ճարտարությամբ կառուցված մեր հոյակապ տաճարները, կանգուն՝ մեր դպրոցները, կենդանի՝ մեր ազգային-եկեղեցական ավանդությունները ու բարքերը, հայրենասիրության շունչն ու ոգին, օրհնության ներքո Մայր Աթոռ ս. Էջմիածնի, սիրով ու պաշտամունքով վերածնված Հայոց աշխարհին։

Եգիպտահայ թեմի, նրա խոստումնալից ու կազմակերպված կյանքի վկաներն են հանդիսանում Մայր Աթոռի պատվիրակները, ականատեսի իրենց տպավորություններով ու հուշերով։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԲԱՂԴԱԴՈՒՄ

Հունիսի 18-ին, հինգշաբթի օրը, գիշերվա ժամը 24-ին, Բեյրութի ճանապարհով Բաղդադ են ժամանում Մայր Աթոռի պատվիրակները՝ տ. Արսեն եպս. Բերբերյանն ու պրն. Արթուն Հատիտյանը՝ հաղորդելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները Իրաքի օրհնյալ հողի վրա ապրող տիրախնամ մեր թեմին և Իրաքի ողջ հայությանը։

Բաղդադի օդանավակայանում հայրապետական պատվիրակներին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Իրաքի հայոց թեմի առաջնորդ **տ. Ասողիկ եպս. Ղազարյանը, տ. Զավեն քհն. Փոլատյանը,** Իրաքի ազգային կենտրոնական վարչության անդամները՝ **դոկտ. Հասրաթ Միքայելյանը,** պրն. պրն. **Աբրահամ Շահինյանը, Լևոն Մելքոնյանը, Տիրան Նասրը, Հայկ Պոսթանյանը, Հ. Բ. Ը.** միության կողմից՝ պրն. **Երջանիկ Թաջիրյանն** ու դոկտ. **Մովսես Տեր-Հակոբյանը,** և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Օդանավակայանում բարիգալստյան և ողջույնի ջերմ խոսքերից հետո, Մայր Աթոռի պատվիրակությունը առաջնորդվում է «Օմար Խայամ» հյուրանոց։

Հունիսի 14-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, պատվիրակներն այցելում են Հայոց առաջնորդարան, ուր նրանց ընդունում է առաջնորդ սրբազանը՝ շրջապատված կենտրոնական վարչության պատվարժան անդամներով։

Առաջնորդ սրբազանի, պատվիրակների և վարչության անդամների միջև տեղի է ունենում մտերմիկ զրույց։

Այնուհետև պատվիրակներն այցելում են ս. Գրիգոր Լուսավորիչ գեղեցիկ եկեղեցին, Ազգային միացյալ Թարգմանչաց-Սվաճյան վարժարան, ուր սովորում են շուրջ 1600 աշակերտ-աշակերտուհիներ, առաջնորդարանի դիվանատուն, հարակից բաժիններ, լավագույն ու վառ տպավորություններով։

Ժամը 18-ին պատվիրակները, առաջնորդ սրբազանի, դոկտ. Հասրաթ Միքայելյանի և պրն. Հայկ Պոսթանյանի ուղեկցությամբ, այցելում են Տիգրոնի պատմական ավերակներ։

Դեպի Բաղդադ իրենց ճանապարհի վրա պատվիրակներն այցելում են 1970 թվականին կառուցված հայ ծերանոց՝ նվիրատվությամբ տիկին **Վերջինե-Կարապետ Իսկենդերյանի՝** ի հիշատակ իր վաղամեռիկ դստեր՝ Մելինե Դանիել-Գևորգ Իսկենդերյանի, ծերանոցին առընթեր ս. Կարապետ գոլտրիկ մատուռ և ապա երկրորդական վարժարանի նորակերտ շենք, որն

իր տեսակի մեջ փառավոր կրթական մի հաստատություն է:

Թե՛ ծերանոցի, թե՛ մատուռի, թե՛ երկրորդական վարժարանի ընդարձակ հողերը սիրով նվիրել է ազգին տիկին Վերջինե Իսկենդերյանը:

Երկրորդական վարժարանը կառուցված է **Գալուստ Կյուլպենկյան** հաստատության 50000 իրաքյան դինարի նվիրատվությամբ:

Ծերանոցի, մատուռի և երկրորդական վարժարանի կառուցման, բարեկարգման և պահպանման աշխատանքներին իր արժանավոր ու գնահատելի ծառայությունն է բերել կենտրոնական վարչության և Հ. Բ. Ը. միության վարչության անդամ, Իրաքի համալսարանի ֆիզիկայի դասախոս սղերդցի պրն. **Աբրահամ Շահինյանը**, որի աշխատանքն արժանի է ազգային երախտագիտության:

Հունիսի 15-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 6-ին, պատվիրակներն այցելում են աստվածաշնչական Բաբելոնի ավերակները:

Երեկոյան ժամը 21-ին պատվիրակները ներկա են լինում, առաջնորդ սրբազանի ուղեկցությամբ, Հայ երիտասարդաց երկսեռ ընկերակցության բացօթյա հանդիսությանը, որը նվիրված էր գաղութի ծանոթ մտավորական, Հ. Բ. Ը. միության և կենտրոնական վարչության նախկին անդամ ու վաստակավոր հասարակական գործիչ պրն. **Լևոն Շաղոյանի** մեծարմանը՝ գաղութից մեկնելու առիթով:

Հանդիսությանը ելույթ են ունենում նաև Մայր Աթոռի պատվիրակները՝ հաղորդելով Հայոց Հայրապետի օրհնություններն ու ողջույնները թե՛ հոբելյարին և թե՛ բոլոր ներկաներին:

Հունիսի 16-ին, կիրակի օրը, ս. Էջմիածնի տոնի հանդիսավոր առիթով, տ. Արսեն եպիսկոպոսը ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պատարագ է մատուցում և քարոզում «Եկայք շինեսցուք զսուրբ խորանն լուսոյ» բնաբանով՝ հաղորդելով նաև Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Քարոզից առաջ առաջնորդ սրբազանը ջերմ սիրով, հանուն իր, ազգային կենտրոնական վարչության, Բաղդադի ողջ հայության, ողջունում է ներկայությունը Մայր Աթոռի պատվիրակության՝ հայտնելով թեմի երախտագիտությունն ու հավատարմությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հայրապետական մաղթանք:

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Հայ երիտասարդաց երկսեռ ընկերակցության բացօթյա, կանաչազարդ այգում Մայր Աթոռի պատվիրակները, ազգային կենտրոնական վարչության նախաձեռնությամբ և կազմակերպությամբ, համաժողովրդական հանդիպում են ունենում Բաղդադի հայության հետ և հանդես գալիս հայ ժողովրդի կյանքում և մեր մշակույթի պատմության մեջ ս. Էջմիածնի կատարած փառավոր առաքելությանը և դերին նվիրված խանդավառ ելույթով:

Մայր Աթոռի պատվիրակներն իրենց ելույթներում հանգամանորեն ներկայացնում են նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի ընթացքում կատարված եկեղեցաշեն ու հայրենանվեր փառավոր գործունեությունը նաև միջեկեղեցական մակարդակի վրա:

Համաժողովրդական այս առաջին հանդիպումից հետո ազգային կենտրոնական իշխանությունն ի պատիվ պատվիրակության ընդունելությունհաշկերույթ է կազմակերպում, որն անցնում է խանդավառ, հայրենասիրական մթնոլորտում:

Հունիսի 17-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի պատվիրակները, առաջնորդ տ. Ատոռիկ սրբազանի ընկերակցությամբ,

այցելում են Բաղդադի քրիստոնյա քույր եկեղեցիների հոգևոր պետերին և ապա պապական նվիրակ Նորին Գերազանցությունն Տ. Ժան Ռյուպ արքեպիսկոպոսին:

Երեկոյան ժամը 21-ին Հ. Բ. Ը. միության տեղական մասնաճյուղն իր հյուրընկալ հարկի տակ, այգում, մեծարում է Մայր Աթոռի պատվիրակությանը:

Հանդիսության ժամանակ ելույթ են ունենում նաև մեր պատվիրակները՝ շեշտելով Հ. Բ. Ը. միության կատարած եկեղեցանվեր ու մշակութային-կրթական, հայապահպանման մեծ ծառայությունը սփյուռքի մեր ժողովրդի կյանքում:

Այստեղ ևս, բանախոսությունից հետո, ի պատիվ պատվիրակության, կազմակերպվել էր ընդունելություն-ճաշկերույթ՝ ջերմ մթնոլորտում:

Հունիսի 18-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի պատվիրակությունը, տ. Ասողիկ սրբազանի ընկերակցությամբ, քաղաքապարական այցելություն է տալիս Իրաքի բարեխնամ կառավարության մոտ Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան Նորին Գերազանցություն Անատոլի Ալեքսանդրովիչ Բարկովսկուն:

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, ազգային կենտրոնական իշխանությունն ու առաջնորդարանը, ի պատիվ Մայր Աթոռի պատվիրակության, ողջերթի ընդունելություն են կազմակերպում նորակերտ ծերանոցի զովասուն ու ընդարձակ այգում, որին ներկա են լինում ավելի քան 300 հրավիրյալներ:

Ընդունելության ժամանակ պատվիրակությանն ուղղված ողջերթի սրտագին ու ջերմ խոսքեր են ասում առաջնորդ տ. Ասողիկ սրբազանը, կենտրոնական վարչության անունից՝ պրն. Լևոն Մելքոնյանը, հայ կաթողիկե հայության առաջնորդ տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանը:

Զարիազանց ջերմ ու սրտագին էր խոսքը նաև Հայոց Հայրապետի անձնական ներկայի, պապական նվիրակ Տ. Ժան Ռյուպ արքեպիսկոպոսի, որն ընդունվում է երախտագիտությամբ և սիրով:

Ընդունելության ժամանակ խոսք են առնում նաև մեր պատվիրակները և սրտագին շնորհակալություն հայտնում առաջնորդ սրբազանին, ազգային կենտրոնական վարչությանը, բոլոր կազմակերպություններին և Բաղդադի ողջ հայությանը՝ իրենց հանդեպ ցույց տրված ջերմ ընդունելության, հյուրգանքի և սիրո համար:

Ողջերթի սույն ընդունելությունը ղեկավարում էր դոկտ. Հասրաթ Միքայելյանը, որն իր եզրափակիչ խոսքում, հանուն ազգային կենտրոնական վարչության, շնորհակալություն հայտնելով Մայր Աթոռի պատվիրակությանը իրենց ներկայության համար, ասում է.

«Պատվիրակները եկան, տեսան և հաղթեցին, գրավեցին մեր բոլորին սրտերը, հիացուցին մեզի իրենց հայրենասիրական, էջմիածնաշունչ խոսքերով, իրենց տաք հայկական սիրտերով ու հոգիներով և անմոռանալի տպավորություն ու հուշեր ձգեցին այս պատվական գաղութի պատմության մեջ: Այս թեմը պետք ունի նման արժանավոր պատգամավորներու հաճախակի այցելության, խոսքերուն, և մանավանդ օրհնության ու հովանիին Ամենայն Հայոց մեր սիրելի Վեհափառին, հա՛յ մնալու և հա՛յ ապրելու համար:

Մինչև պատգամավորներուն գալը այստեղ, մենք մեզի ս. Էջմիածնի խորթ զավակները կնկատեինք, այժմ զգացինք որ մենք ալ հարազատ զավակներն ենք Մայր Աթոռին»:

Հունիսի 19-ին, չորեքշաբթի օրը, ժամը 13-ին, պապական նվիրակ Տ.

Ժան Ռյուպ արքեպիսկոպոսը իր պալատին մեջ ողջերթի ընդունելությամբ պատվում է Հայոց Հայրապետի ներկայացուցիչներին:

Ընդունելությանը ներկա են լինում նաև առաջնորդ տ. Ասողիկ սրբազանը և հայ կաթողիկե համայնքի պետ տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, առաջնորդարանում գումարվում է Իրաքի հայոց ազգային կենտրոնական վարչության նիստը, որին ներկա են լինում նաև Մայր Աթոռի պատվիրակները:

Հոտնկայս ընթերցվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մայիս 27 թվակիր պաշտոնական գրությունը՝ պատվիրակների Բաղդադ ժամանման մասին:

Առաջնորդ սրբազանը, խոսք առնելով, խնդրում է պատվիրակներին՝ Իրաքի ազգային-եկեղեցական իշխանության և բովանդակ հայության որդիական երախտագիտությունը, ու ջերմ սերը հայտնել Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետին՝ մի անգամ ևս հավաստիացնելով Նրան, որ տիրախնամ այս թեմը 1640 թվականից ի վեր կապված է եղել ու միշտ կապված էլ կմնա Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

Տ. Ասողիկ եպիսկոպոսը ցանկություն է հայտնում նաև, որ հետագայում էլ նման պատգամավորություն այցելության գա ս. Էջմիածնից, որպեսզի է՛լ ավելի ամրապնդվի հոգևոր, հայրենասիրական կապը հայ եկեղեցու դարավոր կենտրոնի հետ և երկարաձգվի այս թեմի կյանքը այս օրհնյալ ու հյուրընկալ իրաքյան հողի վրա, ուր հայ ժողովուրդը վայելում է բարեխնամ կառավարության պաշտպանությունն ու հովանին և Իրաքի ազնիվ ու աշխատասեր ժողովրդի ապահովությունը:

Նույնպիսի ջերմ ու անկեղծ արտահայտություններ են ունենում ազգային կենտրոնական վարչության ատենապետ **Արամ Սեթյանը, դոկտ. Հասրաթ Միքայելյանը, Լևոն Մելքոնյանը, Աբրահամ Շահինյանը, Հայկ Պոսթանյանը:**

Հունիսի 20-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 8-ին, Մայր Աթոռի պատվիրակները հրաժեշտ են առնում Բաղդադից և մեկնում Բեյրութ՝ անմոռանալի ու վառ տպավորություններով:

Բաղդադի հայկական թեմը Միջին Արևելքի մեր տիրախնամ համայնքներից հնագույններից մեկ է:

Իրաքյան հողի վրա հայ համայնքի հաստատումը բարձրանում է մինչև 1638 թվականը: Բաղդադի Մեյդան հայկական թաղամասում 1640 թվականին կառուցվում է ս. Էջմիածին անունով եկեղեցի, որը միաժամանակ առաջին քրիստոնեական աղոթավայրն է եղել ողջ Իրաքում:

Իրաքում այսօր ապրում է շուրջ 20000 հայություն՝ կենտրոնացած Բաղդադ, Մուսուլ, Զախո, Քերքուկ, Բասրա և այլ քաղաքներում:

Այստեղ ևս բաց են հայ աղոթքի տները, հայկական ճարտարապետությամբ կառուցված մեր եկեղեցիները, պայծառ ու կանգուն են մեր կրթական օջախները ու դպրոցները, ազգային-բարեգործական հաստատությունները, վառ ու կենդանի են մեր ազգային ավանդությունները ու բարքերը, էջմիածնասիրությունն ու հայրենասիրությունը մեր ժողովրդի ծոցում:

Իրաքի այս թեմը նույնպես ապրում է իր կազմակերպված բարգավաճ ու խաղաղ ազգային-եկեղեցական կյանքը՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանու ն օրհնության ներքո, ազգային կենտրոնական վարչության և առաջնորդ

սրբազան նոր միաւնական, համերաշխ գործակցության շնորհիվ և Իրապի ողջ հայության գիտակից օժանդակությամբ:

Այսպիսի բարի և խանդավառ վկայություններով են վերադարձել Մայր Աթոռի պատվիրակները Բաղդադից:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ

Հունիսի 20-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի պատվիրակները, դեպի ս. Էջմիածին իրենց վերադարձի ճանապարհի վրա, ժամանում են Բեյրութ, ուր մնում են մի քանի օր՝ որպես մասնավոր հյուրերը «Զարթոնք» օրաթերթի:

Բեյրութի օդանավակայանում պատվիրակությանը դիմավորում են տ. **Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը, «Զարթոնք»** օրաթերթի ներկայացուցիչները և այլ պաշտոնական անձինք:

Պատվիրակներն առաջնորդվում են **«Ալգազար»** հյուրանոց:

Հունիսի 21-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռի պատվիրակները, տ. Գևորգ ծ. վարդապետի ընկերակցությամբ, այցելում են Բեյրութում սովետական դեսպանատուն և ջերմ զրույց ունենում դեսպանատան երկրորդ քարտուղար պրն. **Բաբգեն Տեր-Միքայելյանի** հետ:

Ժամը 13-ին վաստակաշատ ու հանրածանոթ հասարակական գործիչ պրոֆ. Բարունակ Թովմասյանն իր ընտանեկան հարկի տակ ճաշկերույթով մեծարում է Մայր Աթոռի պատվիրակությանը:

Ճաշկերույթին երկա են լինում **տ. Գևորգ ծ. վարդապետը,** ծանոթ ու սիրված մտավորական, բանաստեղծ **Վահե Վահյանը** ու հասարակական գործիչ և ազգային բարերար պրն. **Հայկաշեն Ուզունյանը:**

Ժամը 17-ին Մայր Աթոռի պատվիրակները, տ. Գևորգ ծ. վարդապետի ուղեկցությամբ, այցելում են **«Զարթոնք», «Արարատ»** և ապա **«Նայիրի»** թերթերի խմբագրություններ և շահեկան խոսակցություն ունենում հարգելի խմբագրապետների հետ:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, պրոֆ. Բարունակ Թովմասյանի ընկերակցությամբ, Մայր Աթոռի պատվիրակները Բեյրութի **«Ֆանդում»** հյուրանոցում այցելություն են տալիս Երուսաղեմի ամենապատիվ տ. **Եղիշե սրբազան պատրիարքին,** որ դեպի Եվրոպա և ԱՄՆ իր ճանապարհին մեկ օրով ժամանել էր այստեղ:

Սրբազան պատրիարքը պատվում է իր հյուրերին՝ մտերմիկ սեղանի շուրջ, ուր ծավալվում է հաճելի ու հետաքրքիր զրույց:

Հունիսի 22-ին, շաբաթ օրը, ժամը 14-ին, Բեյրութի էջմիածնասեր տիկնանց համախմբումը Պիգֆայայում, ամառանոցային մի ճաշարանում, պատվում է Մայր Աթոռի պատվիրակությանը:

Ճաշկերույթի ընթացքում եղույթ են ունենում Մայր Աթոռի պատվիրակները, հաղորդում Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, գնահատանքի ջերմ խոսքեր ասում էջմիածնասեր տիկնանց համախմբումի կատարած օգտաշատ և աստվածահաճո գործունեության մասին և հաջողություն մաղթում նրան՝ իր ապագա գործունեության մեջ:

Տ. Գևորգ ծ. վարդապետը, որպես այս համախմբումի նախագահ, համառոտակի ներկայացնում է միության գործունեությունն ու հետագա ծրագրերը:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Մայր Աթոռի պատվիրակների անու-

նից պրն. Արթուն Հատիտյանը, տ. Գևորգ ծ. վարդապետի ընկերակցությամբ, ներկա է լինում Հ. Բ. Ը. միության Լևոն Նազարյանի անվան ազգային վարժարանի ամավերջի հանդիսությանը և ուր պաշտոնապես դպրոցի տնօրենությանն է հանձնում ս. Էջմիածնից բերված և Հայոց Հայրապետի ձեռքով օծված մի խաչքար՝ բոլոր ներկաների երախտագիտական արտահայտությունների և խանդավառ ծափերի մեջ: Այնուհետև պրն. Ա. Հատիտյանը հանդես է գալիս շրջանավարտներին ուղղված բովանդակալից ու հայրենաշունչ «Հուսկ բանք»-ով:

Հունիսի 28-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի պատվիրակները ներկա են լինում ս. Գևորգ եկեղեցում տ. Գևորգ ծ. վարդապետի մատուցած պատարագին:

«Հայր մեր»-ից առաջ եկեղեցու քարոզիչ **տ. Գնել եպս. Ճերեճյանը** ողջունում է ներկայությունը Մայր Աթոռի պատվիրակության և բարի գալուստ մաղթում: Այնուհետև քարոզում է տ. Արսեն սրբազանը՝ հաղորդելով Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Հունիսի 24-ին, երկուշաբթի օրը, Մայր Աթոռի պատվիրակները, երեկոյան ժամը 20-ին, ներկա են լինում Հ. Բ. Ը. միության Երվանդ Դեմիրճյանի անվան ազգային վարժարանի ամավերջի հանդիսությանը և, մասնակցելով վկայականների բաշխման և մրցանակաբաշխության հանդիսություններին, հանդես են գալիս աշակերտության ուղղված ոգևորիչ «Հուսկ բանք»-երով:

Հունիսի 24-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, պատվիրակներն այցելում են Լիբանանի հայոց առաջնորդ **տ. Տաճատ արքեպ. Ուրֆալյանին** և սրտաբաց ու անկեղծ մթնոլորտում զրույց ունենում մի շարք ազգային-եկեղեցական հարցերի շուրջ:

Ժամը 16-ին տ. Գևորգ ծ. վարդապետի ուղեկցությամբ պատվիրակներն այցելում են Նաև Թեքեյան մշակութային կենտրոնի փառավոր շենքն ու հարակից բաժինները՝ լավագույն տպավորություններով:

Հունիսի 26-ին, չորեքշաբթի օրը, ժամը 15-ին, Մայր Աթոռի պատվիրակները հրաժեշտ են առնում Բեյրութից և, ավարտելով իրենց այցելությունը Միջին Արևելքի հայկական թեմերին, լավագույն տպավորություններով վերադառնում են Մայր Աթոռ:

Տ. ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆՆ ՈՒ Տ. ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիս ամսվա սկզբներին ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Միլանի հայոց հոգևոր հովիվ տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանն ու Ալեքսանդրիայից տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանը։

Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո սրբազան հայրերը Վեհարանում ներկայացան Հայոց Հայրապետին և աջահամբույրով ստացան Նորին Ս. Օծության օրհնությունները։

Մայր Աթոռում իրենց կեցության օրերին սրբազան հայրերը մասնակցեցին Մայր տաճարում եկեղեցական արարողություններին, այցելեցին վաղարշապատի վանքերն ու պատմական հուշարձանները և մայրաքաղաքի տեսարժան վայրերը։

Հուլիսի 13-ին, շաբաթ օրը, տ. Զգոն և տ. Զավեն սրբազանները, Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանի հրավերով այցելում են Լենինականի հայոց ս. Աստվածածին եկեղեցին։

Հուլիսի 14-ին, կիրակի օրը, տ. Զավեն եպիսկ. Չինչինյանը, Լենինականի ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում ս. պատարագ է մատուցում։

«Հայր մեր»-ից առաջ առաջնորդ տ. Նարեկ սրբազանը ջերմորեն ողջունում է ներկայությունը տ. Զգոն և տ. Զավեն սրբազանների և հանուն Ծիրակի թեմի նրանց բարի գալուստ է մաղթում։

Այնուհետև քարոզում է տ. Զգոն եպիսկ. Տեր-Հակոբյանը, շնորհակալություն է հայտնում ընծայված այս հոգևոր առիթի համար և հաղորդում է Միլանի հայության եղբայրական ողջույնները։

Հուլիսի 15—17 օրերին տ. Զգոն և տ. Զավեն եպիսկոպոսները, թեմական առաջնորդ տ. Նարեկ սրբազանի ընկերակցությամբ, այցելում են Հառիճա և Մարմաշեն վանքերը, ապա Օձունի եկեղեցին և այնուհետև Սանահնի և Հաղբատի, Հաղարծնի, Գոշի, Սևանի և Կեչառիսի վանքերը։

Հուլիսի 21-ին, կիրակի, Վարդավառի տոնին, տ. Զավեն եպիսկոպոս

Զինչինյանը Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և քարոզում «Համբարձիս զմեզ, Տէր, առաւել քան զգալիս թափօրականն զլեառն, յերկնաբերձ եւ յիմանալի խորանսն» շարականի բնաբանով։

Օգոստոսի 7—9 օրերին, տ. Զգոն և տ. Զավեն եպիսկոպոսները, ընկերակցությամբ Շիրակի թեմի հայոց առաջնորդ տ. Նարեկ եպիսկ. Շաքարյանի, Վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկ. Սերայդարյանի, ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Հմայակ ծ. վարդապետ Ինթոյանի և տ. Նշան քահանա Բեյլերյանի, այցելում են Տաթևի ս. Խաչ և Թանահատի վանքերը։

Օգոստոսի 11-ին, կիրակի օրը, տ. Զավեն եպիսկոպոս Զինչինյանը հրաժեշտ է առնում Մայր Աթոռից և, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ ու Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանի հրավերով, ԱՄՆ-ի վրայով գործուղվում է Բուենոս-Այրես և Սան-Պավլո քաղաքները, տանելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 4-ին, հինգշաբթի.—Սրբոց Թարգմանչաց մերոց Սահակայ եւ Մեսրովպայ.

Այսօր Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Հուլիսի 5-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռի միաբանությունն արշավի է մեկնում Ամբերդ:

*
* *

Հուլիսի 7-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Հոգեգալստեան. Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Ներսես քհն. Մեպեճյանը:

Ս. Պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 9-ին, երեքշաբթի.—Այսօր Եգիպտոսից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Զավեն եպս. Չինչինյանը:

Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո սրբազան հայրը Վեհարանում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Հուլիսի 14-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Վրթանես քհն. Գալայճյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 21-ին, կիրակի.—Վարդավառ. Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, օրվա հանդիսավոր առիթով, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Զավեն եպս. Չինչինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Համբարձի զմեզ Տէր աւելի քան զգալի թափորական զլեառն յերկնաբերձ եւ իմանալի խորանս» բնաբանով:

*
* *

Հուլիսի 22-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գուրգեն քհն. Աշուրյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Նույն օրը ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Հմայակ ծ. վրդ. Ինդոյանը:

Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը

կատարելուց հետո հայր սուրբը Վեհարանում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Հուլիսի 28-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վարդավառի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղաճ վրդ. Բալիոզյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 1-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհարանում տեղի է ունենում Գերագույն հոգեվոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Օգոստոսի 4-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Վարդավառի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 5-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնում է Կիսլովոդսկ՝ հանգստանալու տեղի «Կրասնի կամեն» առողջարանում:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ է մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

*
* *

Օգոստոսի 11-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Վարդավառի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

*
* *

Օգոստոսի 18-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Այսօր, օրվա հանդիսավոր առիթով, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ»:

*
* *

Օգոստոսի 19-ին, երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 25-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վերափոխման.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Նույն օրը ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Հմայակ ծ. վրդ. Ինդոյանը:

*
* *

Օգոստոսի 30-ին, ուրբաթ.—Այսօր Կիսլովոդսկից Մայր Աթոռ է ժամանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:



ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և հրավերով Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, մայիսի 1—2 օրերին հոգևորականաց տարեկան համագումարին մասնակցեցին Մայր Աթոռից Պլովդիվի հայոց հոգեվոր հովիվ տ. Մեսրոպ քահանա Բենլիյանը և Երևանի ս. Սարգիս եկեղեցուց տ. Սարգիս քահանա Թաշչյանը:

Մայիսի 1-ին Նյու-Յորքի հայոց առաջնորդարանում տեղի է ունեցել ժողովի բացումը և դիվանի ընտրությունը նախագահությամբ առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսի: Ժողովին մասնակցում են շուրջ 35 պատգամավորներ:

Երկու օրերի ընթացքում ըստ ծրագրի կարդացվում են հետևյալ դասախոսությունները:

1. Հայոց եկեղեցին արևելյան Եվրոպայում. տ. Մեսրոպ քհն. Բենլիյան:
2. Պավլիկյանք. Սեզար սարկավագ Գոնտրալյան:
3. Քահանայի նվիրական կոչումը Հայաստանում. տ. Սարգիս քհն. Թաշչյան:
4. Քոլեջի տարիներ և եկեղեցին. տ. Միքայել քահանա Բուդերո. անգլերեն լեզվով:

Յուրաքանչյուր դասախոսությունը լսվել է հետաքրքրությամբ:

Քահանա հայրերը այնուհետև պատասխանել են ներկաների բազում հարցերին:

Հոգևորականաց համագումարը իր աշխատանքները ավարտում է երկու օրվա ընթացքում եղբայրական սիրալիր մթնոլորտում: Մի շարք հարցերի շուրջ ընդունվում են համապատասխան որոշումներ:

Մայիսի 3-ից—4 օրերին Նյու-Յորքի հայոց ս. Վարդան Մայր եկեղեցում գումարվում է ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի 72-րդ տարեկան պատգամավորական ժողով, որին ներկա են լինում նաև Մայր Աթոռի ներկայացուցիչները:

Ժողովում հոտնկայս ընթերցվում է այս առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության և ողջույնի գիրը:

Ժողովում ողջույնի խոսքով հանդես է գալիս նաև տ. Մեսրոպ քահանա Բենլիյանը և հաղորդելով Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, հաջողություն է մաղթում ժողովի աշխատանքներին: Սույն թեմական պատգամավորական ժողովը արևելյան թեմի հայոց առաջնորդ է վերընտրում տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին:

Մայր Աթոռի ներկայացուցիչ հայրերը այնուհետև լինում են մի շարք քաղաքներում, հաղորդում են Հայոց Հայրապետի ողջույնները և օրհնությունները, ս. պատարագ մատուցում և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում ժողովրդին:

Տ. Մեսրոպ քահանա Բենլյանը պատարագում և քարոզում է Նյու-Յորքի հայոց ս. Վարդան Մայր տաճարում, Ուոտրտաունի ս. Հակոբ եկեղեցում, Ֆիլադելֆիայի ս. Սահակ և ս. Մեսրոպ եկեղեցիներում և ապա Նյու-Յորքի ս. Խաչ եկեղեցում:

Տ. Սարգիս քահանա Թաշչյանը պատարագում և քարոզում է հետևյալ եկեղեցիներում.

Սպրինգֆիլդի հայոց եկեղեցում, Դետրոյտի հայոց ս. Հովհաննես եկեղեցում, Ուստրի հայոց եկեղեցում և Նյու-Յորքի ս. Վարդան Մայր տաճարում:

Բացի այն եկեղեցիներից, որ մեր լահանա հայրերը պատարագեցին և քարոզեցին, նրանք ներկա են լինում ճաշկերույթների, որտեղ խոսում են եկեղեցասիրության, էջմիածնասիրության, բարեպաշտության, ինչպես նաև մեր վերածաղկող մայր հայրենիքի և այնտեղ խաղաղ ու բարօր ապրող մեր ժողովրդի պայծառ կյանքի մասին, շեշտելով, որ բաց են նաև հայրենի հողի վրա մեր աղոթքի տները, որոնց խորանների առաջ ամեն օր նախնյաց հավատով և երկյուղածորեն աղոթում են մեր ժողովրդի զավակները:

Քահանա հայրերը սիրով պատասխանում են ներկաների հարցերին: Արդարև թեև սփյուռքի բոլոր տարածքի վրա եկեղեցաշեն ու կրթանվեր կյանքով ապրում է մեր հավատացյալ ժողովուրդը, բայց սփյուռքը կարող է գոյատևել ս. Էջմիածնով և վերածնած հայրենի երկրի հանդեպ իր սիրով և հավատարմությամբ:

Քահանա հայրերը մասնավոր կարևորությամբ խոսում են նաև Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շուրջ քսանամյա եկեղեցանվեր, հոգևոր, վանական, շինարարական, մշակութային, կրթական բեղուն գործունեության մասին, գործունեություն, որը հպարտությամբ և երախտագիտությամբ է լցնում յուրաքանչյուր հայ մարդու սիրտը:

Մայր Աթոռի ներկայացուցիչները վերադարձան լավագույն տպավորություններով, բերելով իրենց հետ և այն վկայությունը, որ ամերիկահայ մեր ժողովուրդը միշտ և ամեն տեղ ծարավի է Հայոց Հայրապետի և ս. Էջմիածնի օրհնության և հայրենիքի ջերմացնող շնչին:



«ՇԻՐԱԿ» ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԱՄՍԱԳԻՐԸ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Երկար տարիներ Բեյրութում լույս տեսնող «Շիրակ» գրականության և արվեստների ամսագրի 1973 թվականի միացյալ՝ ԹԻՄ 11—12-ը ամբողջությամբ նվիրվել է



ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյա հոբելյանին:

Ամսագրի շապկի վրա տպված է ս. Ներսես Շնորհալու դիմանկար-մանրանկարը:

Հանդեսը բացվում է ս. Ներսես Շնորհալու կյանքի, եկեղեցական, պետական, միջեկեղեցական և հայրենասիրական գործունեության ու մատենագրական բազմաժանր վաստակի մասին գրված բովանդակալից ու սպառիչ հոդվածով, տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանի ստորագրությամբ (էջ 1—21):

Ս. Ներսես Շնորհալու հանելուկների բովանդակությունն ու արժեքն է՝ վեր հանել Պարույր Աղպաշյանը իր «Ներսես Շնորհալի հանելուկագիրը» հոդվածով (էջ 22—27):

Հայ եկեղեցական և ժողովրդական երաժշտությանը մատուցած ս. Ներսես Շնորհալու նորարարությունների և դրանց դերի մասին խոսում է ծանոթ երաժշտագետ Աշոտ Պատմագրյանն իր «Ներսես Շնորհալի երգահանը» հոդվածում (էջ 28—40):

«Ներսես Շնորհալիի հայրենասիրական շարականները» (էջ 41—49) հոդվածով շնորհալիագետ Գրիգոր Հակոբյանը հանդեսի ընթերցողներին է ներկայացնում ս. Ներսես Շնորհալու հայրենասիրական շարականները, մանավանդ Վարդանանց «Նորահրաշ»-ը, տաղերն ու գանձերը՝ պատմական վերլուծումներով:

Վերոհիշյալ հոդվածներից հետո հանդեսում տպված են երկու հատված հ. Ղևոնդ Ալիշանի «Շնորհալի և պարագայ իւր» արժեքավոր գրքից՝ Շնորհալու տաղաչափական արվեստի (էջ 50—57) և Շնորհալու «Գոութ»-ի (էջ 57—58) մասին:

Այնուհետև ամսագրի էջերում տեղ են գտել Շնորհալու մի քանի ստեղծագործություններ՝ «Աշխարհ ամենայն»-ը և «Նորաստեղծեալ»-ը՝ տ. Եղիշե եպս. Դուրյանի ա-

ռեվմտահայ թարգմանությամբ, և «Առաւօտ լուսոյ» ու «Նորահրաշ պսակաւոր» շարականների գրաբար բնագրերը (էջ 59—65):

«Ներսես Շնորհալու կերպարը միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ» (էջ 66—74) հոդվածով բանասիրական գիտությունների դոկտոր Շուշանիկ Նազարյանը հանգամանորեն անդրադարձել է այն ներգործությանը, որ ունեցել է ս. Ներսես Շնորհալին միջնադարյան գեղարվեստական մտածողության վրա:

Հավատարիմ իր մշակութային առաքելությանն ու ավանդությանը, Թեքեյան մշակութային միությունը վերջերս մեծ հանդիսությամբ նշել է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը: Ոգեկոչումի այդ հանդեսին քանախոսություններով հանդես են եկել տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը և սիրված, տաղանդավոր բանաստեղծ Վահե Վահյանը:

Տ. Գևորգ ծ. վարդապետի բանախոսությամբ բացվել է «Շիրակ»-ի սույն համարը, իսկ Վահե Վահյանի «Ներսես Շնորհալի բանաստեղծը» հոդվածով (էջ 75—81)՝ փակվել այն՝ հետևյալ գեղեցիկ բնութագրումով.

«Շնորհալին հանդիսացավ դարագլուխ բացող դեմք մը, որ գործածեց ու մեր բանաստեղծության մեջ ընդհանրացուց վճիտ գեղեցկությունը «Մեկին Բանին», հակադրելով զայն «ծածուկ ճառին» (խրթնաբանության): Արտաբուխ իր ժողովրդասիրությունն ու կարեկից մարդկայնությունը առաջնորդեցին զինք դեպի գանձատունը ժողովրդային ստեղծագործության, բանահյուսության ու երաժշտության: Գերազանց ճաշակով մը քաղեց ինք տարրեր այդ երկուքեն, այլև անոնցմով պայծառացուց, կենսավետեց մեր գրավոր դպրությունն ու եկեղեցական երգեցողությունը: Կրոնքին չափ նաև հայրենիքին, աշխարհիկ կյանքին մեջ՝ ազատության, արդարության և արժանապատվության սիրույն ինկած հերոսները բարձրացուց մարտիրոսներու պատվանդանին, դասեց զիրենք սուրբերու կարգին:

Շնորհալիին շունչին տակ, Հայաստանյայց եկեղեցին հանդիսացավ՝ ինչպես խորան քաղցրամրմունջ ու հոգեպարար աղոթքներու, նույնպես և բեմ՝ ազգային-հայրենասիրական հագներգության:

Ու կմտածե մարդ—կրնայի՞նք անցնիլ մենք մեր պատմության գիշերներեն, անոնց հրդեհներեն, կործանումներեն ու կոտորածներեն, ու հասնիլ այս օրերու լուսաբացին, եթե չունենայինք մեր վրա ճառագայթող, մեզ արիացնող, մեզի ճանապարհ ցույց տվող ջահերը Շնորհալիին և զինք կանխող և իրեն հետևորդ մյուս առաքելաշունչ հոգիներուն»:

Հանդեսում տեղ են գտել նաև ս. Ներսես Շնորհալու երկու այլ դիմանկարներ:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սփյուռքի տարածքի վրա ստեղծված բազմաթիվ հայապահպանման օջախների կողքին իր շնորհակալ ու օգտավետ գործն է կատարում ԱՄՆ-ի Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդական կազմակերպությունը:

1970 թվականին լրացավ այդ կազմակերպության 25-ամյակը:

Այս առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր օրհնությունը հղեց Ամերիկայի հայ երիտասարդներին 17 հունիս 1970 թվակիր կոնդակով՝ ասելով.

«Մեր պարտականությունն է պատվեր տալ ձեզի, սիրելի երիտասարդներ, որ ձեր սիրտն ու միտքը բանաք հավիտենական ճշմարտություններուն և մնայուն արժեքներուն, որոնց աղբյուրներն են՝ Քրիստոսի Ավետարանը, մեր սուրբ եկեղեցվո ժառանգությունը և մեր ժողովրդի ազգային մշակույթի գանձարանը»:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը ս. Էջմիածին և մայր հայրենիք հրավիրեց ԱՄՆ-ի Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդական կազմակերպության մի խումբ անդամների:

Այդ հրավերը դարձավ ավանդական և արդեն 5-րդ տարին է, որ ամերիկահայ երիտասարդները գալիս են մայր հայրենիք և ս. Էջմիածին, իրև հյուրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Այս տարի խումբը բաղկացած էր 24 անդամներից, ղեկավարությամբ տ. Ներսես քհն. Մեպեճյանի: Խմբին մաս էր կազմում նաև տ. Վրթանես քհն. Գալայճյանը:

Հունիսի 30-ին խումբը այցելեց Մայր Աթոռ ս. Էջմիածին, ծնրադիր ու գլխահակ Վեհափառ Հայրապետը ամերիկահայ եղբորելու Մայր տաճարի կամարների տակ: Երիտասարդներին սիրով ընդունեց և բարի գալուստ մաղթեց, որոնք առաջին իսկ առիթով աջահամբույրով ստացան Նրա օրհնությունը:

Խմբի անունից Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք ասաց տ. Ներսես քհն. Մեպեճյանը, մայր հայրենիք և ս. Էջմիածին այցելելու իրենց ընծայված այս բարեպատեհ առիթի համար:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն մասնավոր դասավանդություններ էր կազմակերպել ամերիկահայ երիտասարդների համար, ավելի հանգամանորեն ծանոթացնելով նրանց մայրենի լեզվին, հայ մշակույթին, ազգային պատմությանը, երաժշտությանը, պարարվեստին:

Դասերից ազատ ժամերին խմբի անդամները եղան նաև Հայաստանի զանազան շրջաններում, այցելեցին պատմական հուշարձանները, վանքերը, հանդիպումներ ունեցան մտավորականների, արվեստի գործիչների հետ:

Հուլիսի 17-ին, կիրակի օրը, խումբը այցելեց ս. Էջմիածին և Վեհափառ Հայրապետին:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Օրվա պատարագիչն էր տ. Ներսես քհն. Մեպեճյանը: Ամերիկահայ երիտասարդները ամենայն երկյուղածությամբ հետևում էին ս. պատարագին:

Հաղորդության պահն է: Բոլորը անձկությամբ մոտենում են Ավագ խորանին և ճաշակում Քրիստոսի մարմինն ու արյունը:

Հուլիսի 24-ն է, վերջին օրը: Ամերիկահայ երիտասարդները այցելում են Ծիծեռնակաբերդ և թարմ ծաղիկներ դնում Եղեռնի նահատակների անմահ շիրիմին:

«Կրավե նայիլ այս տղոց ու աղջկանց թաց աչերուն և հասկնալ, որ իրենց սրտեն մասնիկ մը կձգեն հոս՝ հայրենի տան մեջ և հոգիները լեցուցած կվերադառնան իրենց բնակավայրերը,—ասաց հրաժեշտի պահին տ. Վրթանես քհն. Գալայճյանը և շարունակեց,—Երևանը հիմա արդեն այն ժամադրավայրն է, ուր պիտի գանք պարբերաբար լցվելու մեր հայրերուն հոգիով, ներկայի վստահությամբ, շարունակելու պայքարը հանուն ապագայի գոյատևման։ Անոնք գիտեն հիմա, որ հաջողության ճամփան երևանեն կանցնի»։

ԿՐԹԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ՕՋԱԽ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ

Երախտագետ սրտով և գոհունակությամբ պետք է արձանագրել, որ վերջին տարիներին Լիբանանի հյուրընկալ հողի վրա և մանավանդ Բեյրութում հոգևոր, կրթական, ազգային-եկեղեցական խոստումնալից մի զարթոնք է ապրում հայությունը, խաղաղ ու բարօր կյանքի պայմաններում, տեղի արաբ սգնիվ ու աշխատասեր ժողովրդի ապաստանության և տեղական իշխանությունների հոգածու, բարյացակամության շնորհիվ, զարթոնք, որի շոշափելի արտահայտություններն են հանդիսանում հայկական նոր եկեղեցիների և կրթական նոր օջախների, մշակութային հաստատությունների, ակումբների կառուցումներին, որոնց շուրջ էլ համախմբվում է մեր ազգային-եկեղեցական կյանքը սփյուռքում:

Այսօր սփյուռքի մեր հոծ ու կազմակերպված կարևորագույն ու բազմամարդ համայնքներից մեկն է լիբանանահայ գաղութը, որտեղ հայ եկեղեցին և դպրոցը հայ նոր սերնդի յրիստոնեական և հայեցի դաստիարակության, հայապահպանման և մեր գոյության, ինքնությանը երկու հիմնական ու հաստատուն սյուներն են հանդիսանում, երկու ամուր կրվանններ, որոնք նախախնամական դեր են կատարում մանավանդ սփյուռքի պայմաններում մեր ժողովրդի կյանքում:

Վերջերս Բեյրութում դարձյալ հայկական կրթական մի նոր օջախ իր դռներն է բացում աշակերտության առաջ:

1979 թվականի դեկտեմբերի 28-ին, կիրակի օրը, Բեյրութում, խանդավառ մթնոլորտում և հոծ բազմության ներկայությամբ, Հ. Բ. Ը. միության Լիբանանի շրջանային հանձնախմբի հովանավորությամբ, կատարվում է Հ. Բ. Ը. միության Պողոս Կարմիրյան վարժարանի հիմնարկեքի արարողությունը:

Նոր կառուցվելիք վարժարանի հիմնարկեքի եկեղեցական հանդիսությունը կատարվում է տ. Տաճատ, տ. Գնել սրբազանների, տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանի և քահանայական դասի մասնակցությամբ:

Հանդիսությանը ներկա են լինում պաշտոնական, պետական անձնավորություններ, այդ թվում, հանուն Լիբանանի հանրապետության նախագահ Սուլեյման Բեկֆրանժեի՝ կրթական նախարար Էդմոն Ռիզքը, տուրիզմի նախարար Սուրեն Խանամիրյանը, երեսփոխան դոկտ. Անդրանիկ Մանուկյանը, Բեյրութի քաղաքապետության, ազգային-եկեղեցական, մշակութային մարմինների, մամուլի ներկայացուցիչներ:

Հիմնարկեքի արարողության ավարտին տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը ընթերցում

է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը։

Ն. Ս. Օծությունն Իր հայրապետական

Ս. Էջմիածնից ուղարկված խաչքարի զետեղումը Նորակերտ վարժարանի մուտքի սրահի ներքո

օրհնության հետ միասին բարեհաճել էր ուղարկել նաև մի գեղեցիկ խաչքար, որը, օծվելուց հետո, զետեղվում է Նորակերտ վարժարանի մուտքի սրահի տակ, պատի վրա՝ որպես մնայուն և ներշնչող խորհրդանշանը Մայր Աթոռի հովանու և օրհնության՝ էջմիածնաբույր մի կենդանի մթնոլորտ ստեղծելով դպրոցի կամարների տակ և աշակերտության սրտերում, աշակերտություն, որը պատրաստվում և դաստիարակվում է մեր կրոնաշունչ և հայրենաբույր ավանդությունների ոգով և հայոց պատմության շունչով՝ իր սպասը բերելու մեր ժողովրդի ծառայության և ապագայի առաջընթացին։

«ԳԵՂԱՐԴ» ԿՐՈՆԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ-ԾԽԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ

Մայր Աթոռի միաբան և Նիցցայի ու շրջակայքի (Ֆրանսիա) հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Մերեճյանը վերջերս վերսկսել է հրատարակել «Գեղարդ» եռամսյա ծխական պարբերաթերթը:

«Գեղարդ»-ը հրատարակվել է 1967 թվականին՝ իբրև ծխական պարբերաթերթ Մարսելի ս. Անտուան եկեղեցու, Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ տ. Վազգեն վրդ. Քեշիշյանի և տ. Տարոն վրդ. Մերեճյանի կողմից:

Երկրորդ անգամ պարբերաթերթը (թիվ 1—դեկտեմբեր 1973—փետրվար 1974) բացվում է Վեհափառ Հայրապետի ս. Ծննդյան պատգամով և պարբերաթերթի հրատարակության մասին խմբագրականով:

Նման պարբերաթերթի հրատարակումը արդարև «կարևոր է, անհրաժեշտ և հրամայական» ֆրանսիական հյուրընկալ հողի վրա հասակ առնող հայ նոր սերնդին բերելու համար ձայնը մեր եկեղեցու, քաղցրությունը մեր ազգային-եկեղեցական սրբությունների, պատգամը հայոց պատմության և Մայր Աթոռի հովանու ներքո հայ մնալու ու հայ ապրելու ազգային արժանապատվությունն ու հպարտությունը:

Պարբերաթերթն ունի հաղորդագրությունների, ազգային-եկեղեցական և էկումենիկ հարաբերությունների լուրերի և գրական բաժիններ՝ առնչված Նիցցայի հայ գաղութին:

Գրական բաժնում տպագրված է Ժաք Հակոբյանի «Հայր, հայերեն սորվնցուր» բառատուն բանաստեղծությունը, որը հայրենասիրական ջերմ շնչով գրված մի բանաստեղծություն է.

«...Տղուդ քերրի մտքին մեջ, հայր, անհաշիվ դուն ցանե
Հպլ բառերու լույս հունտերը ապագայի իբրև ծառ,
Որուն շուքին կարենաս փակել աչքերդ հեշտաբար»:

Նիցցայում և շրջակայքում այսօր ապրում են 730 ընտանիքներ: Համայնքը գնալով աճում ու բազմանում է: Համայնքի ազգային-եկեղեցական մարմինների և ծնողների գլխավոր մտահոգությունն է «մեր ժողովուրդի այսօրվան երիտասարդ ու պատանի սերունդին ազգային փրկության խնդիրը, ...ի շինություն և ի պայծառություն մեր դարավոր Մոր՝ Հայաստանյայց սուրբ եկեղեցվո և ի փառս մեր բազմաչարչար հարազատ ժողովուրդին»:

Այս ազնիվ, եկեղեցանվեր ու ազգային գործունեության ճանապարհի վրա գաղութի միացյալ ու համատեղ ջանքերով է՛լ ավելի հաջողության հասնելու համար վերջերս Նիցցայում տեղի են ունեցել Կրոնական ընկերակցության հոգաբարձության և թաղական խորհրդի նոր ընտրություններ՝ ըստ հետևյալ կազմի.

Կրոնական ընկերակցություն-հոգաբարձություն

Մուշեղ Մերճյան՝ պատվո նախագահ.
Էմրագաս Փափազյան՝ նախագահ (Գանի ներկայացուցիչ).

Թորգոմ Ղարիպյան՝ փոխ-նախագահ (Մոնակո-Մանթո)·
Հարություն Փիլիճյան՝ ատենադպիր.
Տիգրան Տեմիրյան՝ փոխ-ատենադպիր.
Հարություն Հաթեմյան՝ գլխավոր գանձապահ.
Սուրեն Հանգեսյան, խորհրդատու.
Նուրհան Թագվորյան՝ խորհրդատու:

Թաղականություն

Մարկոս Կյուտենյան՝ ատենապետ.
Հովհաննես Տոնիկյան՝ ատենադպիր.
Միշել Փափազյան՝ գանձապահ.
Երամ Մարտիրոսյան.
Հարություն Տոմպուլյան:

1974 թվականի հունվարին «Նիսահայ տիկնանց միության հոգատարության Ներքեվ» կատարվել է նաև վերաբացումը տեղի «հայ միօրյա դպրոցի»: Դպրոցը գործում է չորեքշաբթի օրերին: Դպրոցում հայոց լեզու է դասավանդում հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Մերեճյանը:

Պարբերաթերթի վերջում տրված է 1973 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 1974 թվականի մարտի 31-ի եկեղեցական տոնական օրերի օրացույցը:

«Գեղարդ»-ն ունի նաև ֆրանսերեն մի բաժին՝ ֆրանսիախոս հայ նոր սերնդի համար՝ նպատակ ունենալով նրանց ծանոթացնել մեր ազգային սրբությունները, մեր ազգը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն ողջունում է «Գեղարդ»-ի վերահրատարակությունը՝ մաղթելով հրատարակիչ հոգևոր հովվին հաջողություն և հարատևություն իր ազգօգուտ, եկեղեցանվեր ծառայության ճանապարհի վրա:

Ա. ՏԱՑԱՆ

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԵՐԿԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Ըստ մատենագիտական աղբյուրների*, միջնադարյան հայ մեծ բանաստեղծ և մատենագիր Ներսես Շնորհալու երկերի թարգմանությունները ունեն շուրջ 150 տարվա պատմություն:

Ներսես Շնորհալու երկերի թարգմանությունները օտար լեզուներով սկսվել են 19-րդ դարի առաջին երեսնամյակում:

Առաջին անգամ 1825-ին Վենետիկում Մխիթարյան միաբանների նախաձեռնությամբ լույս է տեսնում Ներսես Շնորհալու դավանաբանական ճառերից և բազմաթիվ նամակներից բաղկացած մի հատոր ֆրանսերեն թարգմանությամբ (Nersés IV Glajetzi. Discours synodal, suivi d'un grand nombre de ses lettres. Venise, St. Lazare, 1825. 332 p.):

Ապա 1829-ին Վենետիկում լույս է տեսնում Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը լատիներեն թարգմանությամբ. թարգմանիչն էր իտալացի հայագետ Ջուզեպպե Կապելլետտին (Nerses IV Glajetzi. Epistola pastoralis, quam ex Armenio latinitade primum donatum... publici juris facit J. Cappelletti. Venetiis, S. Lazzarus, 1829):

Ապա 1830-ին Վենետիկում ստվար հատորով լույս է տեսնում Ներսես Շնորհալու հոգևոր և պատմական բովանդակությամբ բանաստեղծությունները ֆրանսերեն թարգմանությամբ (Nersès IV Glajetzi. Poésies sacrées et historiques. Venise, St. Lazare, 1830. 620 p.):

Երեք տարի անց, 1833-ին, Վենետիկում երկու հատորով լույս է տեսնում Ներսես Շնորհալու դավանաբանական նամակները լատիներեն թարգմանությամբ. թարգմանիչն էր հիշյալ իտալացի հայագետ Ջուզեպպե Կապելլետտին (Nersès IV Glajetzi. Correspondances dogmatiques. Trad. de l'arménien en latin par J. Cappelletti. Venise. St. Lazare, 1833, 2 vol.):

Այնուհետև Վիեննայի Մխիթարյանները 1861-ին լույս են ընծայում Ներսես Շնորհալու հոգևոր երգերից բաղկացած մի գրքույկ գերմաներեն թարգմանությամբ (Nerses IV Glajetzi. Gebete von Patriarchen der Armenier S. Nerses Glajense verfasst. Wien, Mechitaristen, 1861. 23 p.):

Հետաքրքրական է Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ի բազմալեզվյան հրատարակությունները Վենետիկի Մխիթարյանների ջանքերով:

Մխիթարյան միաբանները «Հավատով խոստովանիմ»-ը, 24 տներից բաղկացած այդ գեղեցիկ աղոթք-բանաստեղծությունը, առաջին անգամ 1810-ին լույս են ընծայում 6 լեզուներով, ապա 1812-ին հրատարակում են 10 լեզուներով, 1815-ին՝ 14 լեզուներով, 1818-ին՝ 16 լեզուներով, 1828 և 1827 թվականներին՝ 24 լեզուներով (վերջին երկու

---

* Այդ աղբյուրներից հատկապես կարևոր է հետևյալ աշխատությունը, որից քաղել ենք մեր հիմնական տեղեկությունները. Արմենակ Սալմասյան, Հայկական մատենագիտություն—Bibliographie de l'Arménie — ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969: Մեզ հասար մյուս տեղեկատու աղբյուրները եղան՝ Հայկ Դավթյան, «Հայ գիրքը 1801—1850 թվականներին», Երևան, 1967. Սուրեն Ստիկյան, «Հայ գրականության ժամանակագրություն» (1801—1850), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978. Հ. Արսեն Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի», Վենետիկ, 1909:

Շնորհալու օտար հրատարակությունները փակագծերի մեջ կամ այլապես ներկայացրել ենք իրենց վերնագրերով, ըստ Ա. Սալմասյանի մատենագիտության

հրատարակություններից յուրաքանչյուրը կազմում է շուրջ 430 էջ), և վերջապես 1882-ին հրատարակում են 36 լեզուներով: Վերջին հրատարակությունը, որ կազմում էր 600 էջանոց մի հատոր, կրում էր լատիներեն հետևյալ ընդհանուր տիտղոսաթերթը՝ Nerses IV Glajetzi. Preces Sancti N. Clajensis Armenforum Patriarchae, triginta sex linguis editae. Venetiis, S. Lazari, 1882:

Վաստակավոր միաբանների այս գեղեցիկ ձեռնարկը, որի շնորհիվ այդքան լայն հորիզոններ էր բացվում Ներսես Շնորհալու այդ ոգեշունչ և զմայլելի ստեղծագործության առաջ, բացառիկ երևույթ է հայ գրականության պատմության մեջ:

Նույն «Հավատով խոստովանիմ»-ը բազմալեզվյան մի հրատարակություն է ունենում նաև Մոսկվայում, ուր 1830-ին Լազարյան ճեմարանի տպարանից լույս է տեսնում 12 լեզուներով, հայերեն և ռուսերեն հետևյալ վերնագրով. «Հռչակաւոր աղօթք տեառն Ներսեսի սրբազան կաթողիկոսի Հայոց, տպագրեալ երկոտասան լեզուօք: Молитва св. Патриарха Нерсеса. Изданная на 12 языках»:

Ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլորիեն 1869-ին Փարիզում հրատարակած հայագիտական ուսումնասիրությունների մի հատորում թարգմանաբար զետեղել էր Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմից ընդարձակ հատվածներ (Ed. Dulaurier. Documents arméniens. Paris, 1869, pp. 226—268):

Այնուհետև բելգիացի հայագետ Ֆելիքս Նևը 1886-ին Լուվենում լույս է ընծայում „L'Arménie chrétienne et sa littérature" («Քրիստոնյա Հայաստանը և իր գրականությունը») խորագրով ֆրանսերեն մի աշխատություն, ուր հեղինակը թարգմանաբար զետեղել էր Շնորհալու շարականներից մի հատընտիր: Նույն 1886 թվականին Ֆելիքս Նևը Լուվենում հրատարակում է Ներսես Շնորհալուն նվիրված ֆրանսերեն մի ուսումնասիրություն հետևյալ վերնագրով. „Le Patriarche Nersès IV, dit Schnorhali, envisagé comme écrivain" («Հայրապետ Ներսես Շնորհալին որպես գրող»):

Արշակ Չոպանյանը իր „La roseraie d'Arménie" («Բուրաստան Հայաստանի») երկրորդ հատորում, որ լույս տեսավ Փարիզում 1923-ին, թարգմանաբար զետեղել էր Շնորհալուց 11 հաճեղուկներ:

Ապա Բոստոնում 1941-ին լույս է տեսնում Շնորհալու դավանաբանական երկերից բաղկացած անգլերեն մի գրքույկ Դերենիկ վրդ. Փոլադյանի թարգմանությամբ, ներածականով և բացատրականով (Nerses IV Glajetzi. The Profession of Faith of the Armenian Churche. Transl. with Introduction and Comment by T. Vart. Poladian. Boston, 1941):

Այնուհետև Նյու-Յորքում 1947-ին լույս է տեսնում Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը անգլերեն թարգմանությամբ: Թարգմանիչն էր հայագետ, ամերիկուհի Ջեն Վինգատը (Nerses IV Glajetzi. Jesus Son, Only-Begotten of the Father. Rendered into English by J. S. Wingate, New York, 1947):

Վերջապես Ներսես Շնորհալու 800-ամյակի առիթով Վենետիկի ս. Ղազարի տպարանից 1973 թ. վերջերին լույս է տեսնում միջնադարյան հայ մեծ բանաստեղծի հոգևոր երգերը պարունակող մի հատոր՝ իտալերեն թարգմանությամբ:

Շուրջ 250 էջ և 6000 տող կազմող ներկա հատորը շքեղատիպ մի հրատարակություն է, որով Ներսես Շնորհալու հոգևոր երգերը առաջին անգամ օտար ընթերցողին են ներկայացվում այդքան ծավալուն չափերով:

Հատորը կազմել, թարգմանել և ներածական հոդվածը ստորագրել է Մխիթարյան բազմավաստակ բանասեր, բանաստեղծ և գրականագետ հ. Մեսրոպ Ճանաշյանը, իսկ հատորի առաջաբանը ստորագրել է իտալացի հայագետ Ուգո Ֆազոլոն:

Հ. Մեսրոպ Ճանաշյանն իր ներածության մեջ նշել է. «Մեր ընտրությունը եղել է շատ խիստ, մենք սահմանափակվել ենք այն շարականներով, որոնք ավելի վստահելի են և վավերական են ճանաչված բանավոր կամ գրավոր ավանդության տվյալներով, չհաշված այն շարականները, որոնք տարբեր ճանապարհով (ակրոստիքոսի կազմությամբ) ինքնին ստույգ են և առիթ չեն տալիս որևէ տարակույսի»:

Թարգմանությունը կատարված է նրբախնդիր ճաշակով, հայերեն բնագրի ոգուն ու արվեստին քաջահմուտ և իտալերեն լեզվի նրբություններին խորագիտակ մարդու ձեռնահասությամբ. իտալերեն թարգմանության մեջ հաջողապես պահպանված է Շնորհալու շարականների պարզությունն ու գեղեցկությունը. կարելի է ասել, որ իտալերեն թարգմանությունը հարազատ հայելացումն է հայերեն բնագրի, ի բաց առյալ բնագրի հանգերը, որոնք դիտմամբ զանց է առել թարգմանիչը, լավագույնս և անխաթար կերպով փոխանցելու համար իտալացի ընթերցողին Շնորհալու շարականների ներքին հմայքը:

Այսպիսով իտալացի ընթերցողն առաջին անգամ հ. Մեսրոպ Ճանաշյանի գեղեցիկ թարգմանությամբ հնարավորություն է

ստանում հաղորդվելու միջնադարյան մեր երկու մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Ծնորհալու ստեղծագործության կարևոր մի մասին, ինչպես որ ֆրանսիացի ընթերցողը 1961 թվին առաջին անգամ հ. Սահակ Քեշիշյանի թարգմանությամբ հնարավորություն ունեցավ ծանոթանալու միջնադարյան մեր երկու մեծագույն բանաստեղծներից մյուսի՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը իր ամբողջության մեջ:

Այստեղ խոսքը տանք իտալացի հայագետին, որի առաջաբանը այնքան գեղեցիկ և այնքան տպավորիչ է, որ մենք թարգմանարար բերում ենք ամբողջապես:

Ուգո Ֆազոլոն գրել է.

«Այսօրվա կեղծ միթոսներին անվերապահ հարումը մեզ հեռացնում է մեր էության խոր արմատներից և մեզ տանում է դեպի անորոշ ապագայի անգո միրաժը: Անցյալ ժամանակների հորձանքի վանումը կառաջացներ նաև վանումն այն ամենի, ինչ լուսավորել է մարդու հոգին, հետևաբար և կառաջացներ կորուստը մի հարրստության, որը կարևոր ազդակ է առաջադիմության համար: Մարդ եղկելի և մոլորված կլիներ առանց պատմության և ավանդության, առանց այն սնունդի, որ հայրերը նախապատրաստել են ի պետս որդիների:

Հոգեկան կյանքում փորձառության թելադրած խոսքերի կուտակումը հիմնական մաս են կազմում այն պարգևի, որ անցյալը ընծայում է ներկայի մարդուն իր գոյության և վաղվա գոյատևման համար, և դա այն պտուղն է, որ ժամանակի տևողությունից ոչ խամրում է, ոչ չորանում, ոչ փտում:

Բանաստեղծությունը նույնպես կապված չէ մատերիայի էնտրոպիկ անկման օրենքի հետ. նա ապրում է ոգու շրջանակում, որի կյանքը դուրս է տվյալ դարաշրջանից, տվյալ ժամանակից: Այդ պատճառով է, որ անցյալ դարերի բանաստեղծության խոսքերն ապրում են և կարող են մեզ վերահայտնվել իրենց սկզբնական գունավորությամբ. նրանք իրենց մեջ կրում են ցոլացումն անանցական Հավերժի:

Այս էջերում առաջին անգամ իտալերեն լեզվով մեզ ներկայացվում է Ներսես Կլայեցի Ծնորհալու քնարական ստեղծագործությունը: Ավելի քան ութ դար է անցել այն օրից, երբ մերձակա ազգերի հալածանքներից տանջված հարազատ Հայաստանում Ներսես Ծնորհալին ապրել և գործել է՝ պաշտպանելու համար քրիստոնեական հավատը և իր հայրենիքը: Մեծապես կարևոր եղավ նրա դավանաբանական ու կրոնական գործունեությունը, բայց նույնքան կարևոր եղավ նաև նրա գրական գործունեությունը, քանի որ նրան են պարտական հայերենի տաղաչափական և ոճական նորամուծությունները: Նրա տաղաչափության ցայտուն հատկանիշները մի ուրիշ լեզվի փոխադրելու դժվարությունը մեծ մասամբ կախված էր նրա պոեզիայի ոչ բավարար ճանաչողությունից: Հ. Մեսրոպ Ճանաշյանը մոտեցել է դժվարին խնդրին, ու զինված իր մայրենի հայ լեզվի հմտությամբ և իտալերեն լեզվի տիրացումով, որ նա ձեռք է բերել Վենետիկում իր երկարամյա բնակությամբ, կարողացել է գլուխ բերել գործը:

Փոքրիկ պոեմներ, օրհներգեր, տաղեր՝ ահա սրանք են բանաստեղծական այն երկերը, որոնք կազմում են մեզ ներկայացված ներկա հատորյակը: Զանց առնելով բանաստեղծի մեծ պոեմները, թարգմանիչը ընտրել և մի ուրիշ ազգի լեզվով ներկայացրել է այն գործերը, որոնք իրենց անմիջական ապրումով ավելի լավ են զգացնում հեղինակի քնարական շունչը: Հոգևոր երգերի այս հավաքածուի մեջ ներկա է աստվածաբանն ու գեղագետը և սակայն բանաստեղծի ձիրքը այնպիսին է, որ ոչ թե սահմանափակել, այլ որոշ իմաստով ավելի է զորացրել արտահայտչական կերպավորումը: Քնարական զեղումը ազատ է, մըշտակա, առանց թուլացումների: Սուրբ Գրքի տվյալները, որոնք առկա են քերթվածներում, աստվածաբանական փաստերը, որոնք հավաստվում են նրանց մեջ, ստանում են քնարական պատկերների ձև, հույզի և ոգու լուսարձակումներ: Բանաստեղծական անսպառ գյուտերի թարմությունը, որ տող առ տող ծավալվում է մեծ մասամբ ութ վանկանի տողերի վրա հիմնված ճարտարահյուս տաղաչափության մեջ, միայն բանաստեղծ Ճանաշյանի գրչով կարող էր հաջողապես փոխադրվել մի ուրիշ լեզվի: Փառաբանության, օրհնության, միզերերեի, երգերի ու ներբողների շարականները հաջորդում են մեկը մյուսին և մեզ բարձրացնում լուսեղեն մի միջավայրում, ուր ապրում են հրեշտակները, ուր հավատը լուսավոր մի ներդաշնակություն է, որի մեջ «...դաշտերը սնուցված են արդարությամբ, անապատները գեղեցկացած են կուսական մաքրությամբ»: Այս էջերը ողողված են բանաստեղծի, բանաստեղծի ու սրբակյացի ոգեկան սիրո խանդով. նրա խոսքերը դեռ այսօր էլ կարող են հոգեկան սնունդ լինել և բերկրանք պատճառել: Ոգու լույսը, որ իր մեջ է միաձուլում միտքը և հավատը, կենսապարար լույս է և չի հանգի ժամանակի տևողությունից. այս էջերը մի անգամ ևս այդ են ապացուցում»:

Այստեղ հարկ է ավելացնել, որ հ. Մեսրոպ Ճանաշյանի ջանքերի արդյունքն է ոչ

միայն Ներսես Շնորհալու ներկա իտալերեն թարգմանությունը, այլև ավելի վաղ սփյուռքահայ և հայրենի պոեզիայի ընտիր նմուշների իտալերեն թարգմանությունները, որոնց միջոցով իտալացի ընթերցողը հաղորդակից դարձավ հայ նորագույն պոեզիայի լավագույն արժեքներին:

Շնորհալու իտալերեն ներկա հատորյակը զարդարված է միջնադարյան կիլիկյան շրջանի հայ մեծագույն մանրանկարիչ Թորոս Ռոսլինի Երևանյան չորս մանրանկարների արտատպությամբ, իսկ հատորի կազմը՝ Ներսես Շնորհալու գունատիպ պատկերով:

ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
(Միաբան Մայր Աթոռի, 1836—1906)

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը, աշխարհական անունով Գևորգ, ծնվել է 1832 թվականին Լեռնային Ղարաբաղի Շուշի գավառի Խանաձախ գյուղում: Գյուղում դպրոց չի եղել: Հայրը նրան տալիս է մի դերձակի, որի մոտ նա սովորում է այդ արհեստը և գրաճանաչություն:

Երեսուն տարեկան հասակում ուխտի է գնում Երուսաղեմ: 1862 թվականից մինչև 1868 թվականը սովորում է Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանում և 1869 թվականին սարկավագ է ձեռնադրվում և մի տարի հետո էլ՝ վարդապետ, Նսայի պատրիարքի ձեռքով:

1880 թվականին մտել է Մայր Աթոռի միաբանության շարքերը: Այնուհետև ուսուցչական, թեմական, վանական բեղուն գործունեություն է ունեցել Շուշիում, Սաղիանի վանքում, Ծամախում, Ալեքսանդրապոլում:

1894 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվել և նշանակվել լուսարարապետ Մայր տաճարի ու Սինոդի անդամ:

Տ. Մակար եպիսկոպոսն «անձամբ շրջել է շատ գավառներ, ժողովել հայկական կյանքի հնության հիշատակարաններ, որոնցից մի մասը հրատարակել է յուր «Աղուանից երկրի պատմութիւն» և «Արցախ» գրքերի մեջ» («Արարատ», 1906, էջ 117):

Տ. Մակար եպիսկոպոսը վախճանվել է 1906 թվականի փետրվարի 6-ին և թաղվել է ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը:

Մակար եպիսկոպոսը Էջմիածնում իրեն նվիրում է գրական աշխատանքի: Նա թողել է մի շարք գրական գործեր՝ գեղարվեստական և պատմա-գիտական և կրոնական ուղղությամբ: Գրական մի քանի աշխատանք կրում են հեղինակի «ուստա Գևորգ Բարխուդարյան» անունը, որովհետև աշխարհական անունը եղել է Գևորգ, իսկ մյուս գործերը շարադրել է հոգևորականի կոչումն ընդունելուց հետո, երբ կրել է Մակար կրոնական անունը: Գրական աշխատանքն սկսել է 1875 թվականից:

Նրա գրչին պատկանում են հետևյալ գրական վաստակները՝

«Միրզա և Աննա» (Զմյուռնիա, 1876), «Պոլը Պուլի» (Թիֆլիս, 1883), «Զրազլ տարին կտարի» (Շուշի, 1883, ուստա Գեվորգ Բարխուդարյան անունով), «Ընաշխարհիկ տղա» (Շուշի, 1886), «Քննադատություն քննադատությանց» (Տփխիս, 1888), «Աղուանից երկիր և դրացիք» (Թիֆլիս, 1893), «Արցախ» (Բաքու, 1895), «Զորանն ու նշանաձը» (Թիֆլիս, 1898, ուստա Գևորգ Բարխուդարյան անունով),

«Հարոյական առածներ» (Թիֆլիս, 1898), «Պատմութիւն Աղուանից» (հատոր Ա, Բ, Թիֆլիս, 1902—1907):

Հեղինակի «Միրզա և Աննա», «Արազը տարին կտարի», «Զորանն ու նշանածը» Ղարաբաղի բարբառով գրված գեղարվեստական գործեր են: Հեղինակը պայքարում է ամուսնության հին ավանդույթի դեմ, որի համաձայն ծնողներն են ընտրում հարսնացուն և արգելք հանդիսանում փոխադարձ սիրո վրա կառուցած ամուսնության:

Ուշագրավ են Բարխուդարյանի պատմական աշխատությունները, որոնցից առաջինը կրում է «Պատմութիւն Աղուանից» վերնագիրը: Պատմական այս աշխատությունը բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորը լույս է տեսել 1902 թվականին Վաղարշապատում և տպագրվել է Մայր Աթոռ-



ոի տպարանում: Գիրքը բաղկացած է 57 գլխից և պարունակում է 213 էջ: Գրքի վերջում տրված է հատուկ անունների ցանկ: Գրքի ներածականում նկարագրում են Աղվանից երկրի աշխարհագրական սահմանները՝ արևելքից՝ Կասպից ծովը և Երասխ գետը, հյուսիսից՝ Դարբանդի երկարաձիգ պարիսպը մինչև Ալազան գետի ակունքները, արևմուտքից՝ Ալազան գետը և Ջորագետը, իսկ հարավից՝ Արցախի լեռները և Հագարի գետը (Հաքարի) մինչև Երասխին միանալը:

Այս երկիրը հայերն անվանել են Աղվանք, Աշխարհ Առանա, վրացիները՝ Ռանի, զեղերը՝ Այերիանո (առ երի Հայոց), պարսիկները՝ Առան-շահ, արաբները՝ Ռանի, թաթարները՝ Առանի, եվրոպացիները՝ Ալբանիա:

Աղվանքի բնակիչները, գրում է հեղինակը, բազմատեսակ են և խոսում են «այլազան բարբառներով»: Այդտեղ բնակվել են գարդմանցիք, խաչլանք կամ խաչենյանք, ուտեացիները, ծավդեացիները, գարգարացիները, աղվանները, շակերը կամ սադերը (շակք կամ սագք), կազբերը (կազբք), մազքութները, հեճմատակները, բաղասականները, խազիրները, սևորդիները, հրեաներ և պարսիկներ:

Աղվանից երկրում կա երկու գարդման գավառ և երկու գարդման բերդ: Մեկը գտնվում է Արցախում, մյուսը՝ Շամախում, որ կոչվում է Գիրդիման-Գարդման: Գարդմանցիների իշխանները կոչվել են առանշահիկ կամ եռանշահիկ: Հայ և աղվանից մատենագիրները իրենց աշխատություններում գործածել են Գարդման անունը առանց տարբերելու Արցախի Գարդմանը Շամախու Գարդմանից: Այնուհետև բացատրում է հիշյալ ցեղերի ծագումը՝ հիմնվելով մատենագրական տվյալների վրա, ու անցնում բուն պատմական նյութին:

Առաջին գլխում հատորը բաժանված է շրջանների: Առաջին շրջանը կրում է «Նահապետական շրջան» վերնագիրը, որը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում նկարագրում է աղվանների տոհմային սովորությունները, բնակարանները, կրոնը և պաշտամունքը, ցույց է տալիս, որ հայկական ծագում ունեն գարդմանցիները, խաչենյանները, ուտիացիները և գարգարացիները, որոնք ունեն հայկական սովորություններ, և բնակարանները հայկական են:

Բ գլխում կանգ է պոել աղվանների պատմության վրա, Ածդահակի առասպելը, Կյուրոսի և Տիգրանի միացյալ ուժով կործանվում է մարերի և բաբելացիների իշխանությունը:

Գ գլխում նկարագրում է հայերի և պարսիկների կռիվները և աղվանների ու վրացիների մասնակցությունը Արքելալի ճակատամարտին, որ հայերը մղում են Ալեքսանդր Մակեդոնացու դեմ:

Երկրորդ շրջանը կոչվում է Կուսակալության շրջան, որ սկսվում է չորրորդ գլխից և ավարտվում վեցերորդում:

Դ գլխում. Արշակունիների ծագումը, Վաղարշակի կարգադրությունները և Առանը աղվանների կուսակալ:

Ե գլխում. աղվանների զորքերն «ըստ սովորության» օգնում են հայերին պատերազմների ժամանակ:

Զ գլուխ. օտար պատմիչները աղվանից զորքերի ու նրանց քաջության մասին: Հիմնվում է Տակիտոսի տեղեկությունների վրա:

Երրորդ շրջանը կոչվում է «Թագավորական շրջան», սկսվում է 7-րդ գլխից և ավարտվում 15-ում

Է գլուխ. Աղվանից Վաչագան Ա թագավոր. ընտրությունը աղվանից երկրի, նրանց թագավորի, զորքի, քրմապետի մասին, նրանց բնավորությունը, ռազմական ուժը. բնավորությամբ պարզ են, չգիտեն հարյուրից ավելի հարվել, պատերազմում են ձի հեծած, գործածում են նետ, վահան, սաղավարտ գազանների մորթուց շինված, զինված են հայերի նման:

Ը գլուխ. Եղիշե առաքյալը Աղվանքում և նրա քարոզությունները և նահատակությունը:

Թ գլուխ. ալանների արշավանքը, Արտաշեսի հաղթությունը և ամուսնությունը ալանների թագավորի աղջկա հետ:

Ժ գլուխ. խազարների արշավանքը, Հայոց և Աղվանից երկրները պարսկական տիրապետության տակ:

ԺԱ գլուխ. Հայոց Տրդատ թագավորը և նրա պատերազմները պարսիկների հետ, Ուռնայրը աղվանների թագավոր: Քրիստոնեության տարածումը Աղվանքում:

ԺԲ գլուխ. հոների արշավանքը, հայոց և աղվանից համատեղ պայքարը պարսիկների դեմ և հայերի հաղթությունը:

ԺԳ գլուխ. Գրիգորիս կաթողիկոս և նրա քարոզությունը:

ԺԴ գլուխ. Սասանյանների հզորանալը, հայերի և աղվանների տկարանալը, Ջիրավի պատերազմը: պարսիկների պարտությունը: Ուռնայր թագավորի մահը:

ԺԵ գլուխ. կաթողիկոսների հաջորդություններ, երկրի ծանր վիճակը, գրերի տարածումը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով Աղվանքում և Վրաստանում:

ԺԶ գլուխ. ս. Մեսրոպի առաքելությունը:

ԺԷ գլուխ. համառոտություն Կաղան Կատվաքու պատմության Բ հատորի Ա գլխի: Այստեղ պատմում է Ինուիրի ավերումը և Բաբիկի քաջությունն ու Սյունիքի վերականգնումը:

ԺԸ գլուխ. Ս. Մեսրոպ Մաշտոցի աշակերտները:

ԺԹ գլուխ. Արշակունի թագավորներ, Սասանյանների ոխակալությունը Արշակունիներին:

Ի գլուխ. Պարտավ քաղաքի կառուցումը:

ԻԱ գլուխ. Պերոզի գահակալությունը, Գյուտ եպիսկոպոսի նամակը Վաչե թագավորին:

ԻԲ գլուխ. Պերոզի չարությունքը. Վաչագան Գ թագավոր։ Շուշիհաշիոն կաթողիկոսի կանոնադրությունը։

ԻԳ գլուխ. Վաղարշապատի ժողովը 491 թվականին և Քաղկեդոնի ժողովի մերժումը, Վաչագանի օրով հաստատված խաղաղությունը Աղվանից երկրում։

ԻԴ գլուխ. Աթոռի փոխադրությունը Դարբանդից Պարտավ։

Չորրորդ իշխանական շրջան

ԻԵ գլուխ. Առանձնահիկ իշխաններ. վրաց, հայոց, աղվանից եկեղեցիների բաժանումը 608 թվականին վրաց Կյուրիոն կաթողիկոսի առաջարկով։

ԻԶ գլուխ. աղվանների ապստամբությունը պարսից դեմ։ Մորիկ կայսեր մտավոր պարսկական խոսքով թագավորին «Ազգ մի խոտոր և անհնազանդ են»։ Ակնարկը վերաբերում է հայ ժողովրդին։

ԻԷ գլուխ. հունական Հերակլ կայսեր արշավանքները պարսիկների վրա։

ԻԸ գլուխ. Դարբանդից Ալազան ձգված պարսպի մասին, որ ունի 400 վերստ երկարություն. Դարբանդի անցքը կրել է զանազան անուններ՝ Դուռն Ալանաց, Դուռն Երկաթեայ, Դուռն ճորայ (Ճորայ սյահակ), Դուռն Հոնաց, Կապան ճորայ, Դուռն Խազրաց, Դուռն կամ Դրունք Կասպից, Կասպան ճորայ, Դրունք դրանց (արտերևն Բաբ-Ալ-աբուար), Դարբանդ, Դամուր Ղափու (ընդ անցք)։

ԻԹ գլուխ. խազարների արշավանքը, խազարներն ավերում են Թիֆլիսը։

Լ գլուխ. խազարների հեռանալը Աղվանքից։

ԼԱ գլուխ. արաբների արշավանքը, նրանց բաղաքականությանը. պատմիչները նրանց տալիս են զանազան անուններ՝ արաբ, արաբացի, հագարացի, իսմայելացի, սարակինոս, տաճիկ, մահմեդական։

ԼԲ գլուխ. Ջիվանշիր սպարապետ, պարսիկների հարձակումը. Ջիվանշիրի հաղթությունը։

ԼԳ գլուխ. սասանյանների անկումը, խազարների արշավանքը։

ԼԴ գլուխ. Ջիվանշիր իշխանը ամիրապետի մոտ, վերջինիս պարգևատրությունը Ջիվանշիրին՝ փիղ, թութակ, ոսկեպատյան և մարգարտազարդ թուր, արքայական ծիրանի, 52 արաբական ձիուց և մեծ Սյունիքի իշխանությունը։

ԼԵ գլուխ. Ջիվանշիրի սպանությունը, Սև հոների արշավանքը։

ԼԶ գլուխ. Պարտավի ժողովը, հոներն ընդունում են հայոց և աղվանից կրոնը։

ԼԷ գլուխ. Աղվանից հասարակության ճյուղական և բարոյական տագնապը. Վարազ-Տրդատի և իր որդիների բանտարկությունը։

ԼԸ գլուխ. Հայոց և աղվանից եկեղեցիների ամբակտելի միության համար ժողով Պարտավ մայրաքաղաքում և միության գրությունը Սիմոն կաթողիկոսին։

ԼԹ գլուխ. Պարտավը ամբոխանիստ արտաքին իշխանության Աղվանքում, խազարների այցելությունը, 708-ի ժողովը Պարտավում։

Խ գլուխ. Միհրանյան տոհմի ազգաբանության շարունակությունը, Կանճակ քալաքի կառուցումը։

Հինգերորդ շրջան Աղվանից իշխանական ցեղերի մասին

ԽԱ գլուխ. ազգաբանություն Ծարի իշխանների։ Առանձնահիկ կամ եռանձնահիկ տոհմ, ազգաբանություն Սոդի իշխանաց, ազգաբանություն Հաթերքի իշխանաց, ազգաբանություն Ջալալյան տոհմին, ազ-

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՂՈՒԱՆԻՑ

Ա. ՀԱՏՈՐ

Ի ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿ ԲԱՐԽԱՒՏԱՐԵԱՆՑ

Վ. Ա. Գ. Ա Ր Շ Ա. Պ Ա. Ց

Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

1902

կաթանություն Խաղբակյան տոհմի, ազգաբանություն մեծ-կողմանց կամ Կուենից իշխանացն, ազգաբանություն Ջրաբերդի իշխանաց, ազգաբանություն Կյայստանի իշխանաց, Արցախի Գարդմանի իշխողներ, ազգաբանություն Կյուրիկյանց, Ոսկանապատի իշխաններ, Փառիսոս և Քաւս գավառների իշխողներ, Պարտավի իշխաններ, Կողթ գավառի իշխողներ, Ջավեթի գավառի իշխողներ։

ԽԲ գլուխ. Աղվանից Բերդերի մասին։

ԽԳ գլուխ. Աղվանից իշխանների գերեվարությունը, նահատակությունները։

Վեցերորդ շրջան. դարձյալ թագավորական շրջան

ԽԴ գլուխ. իշխանների դարձը, երկարատև պատերազմ։

ԽԵ գլուխ. Համամ թագավորի ծագումն և գործերի մասին։

ԽԶ գլուխ. Ատրներսեհ թագավոր Աղվանից, Գագիկ ինքնակոչ, Մեծ ժողով Խաչենում:

ԽԷ գլուխ. Աղվանից Փիլիպպոս կամ Փիլիպպե թագավոր, արաբացիների անհետանալը. Աշոտ ողորմած թագավորի օծման առթիվ, Գուրգենը թագավոր Աղվանից արևմտյան մասի: Քրիստոնեության վերանորոգումը:

ԽԸ գլուխ. Դելմն ցեղի և ռուսաց արշավանքները, Մովսես Դ թագավոր Փառիսոսի, Խաչենի, Դարբանդի և Զորագետի թագավորները:

ԽԹ գլուխ. Դավիթ Անհող և Բագրատունի Գագիկ Ա թագավոր: Պետրոս Գետադարձ կրկին հայոց կաթողիկոս, Գանձակի գրավումը:

Ծ գլուխ. Բաղաց (Մեծ Սյունիքի) Սենեքերիմ թագավորի սպանությունը, Պուղա զորավարի արշավանքը:

ԾԱ գլուխ. Կյուրիկե թագավորի վերջին գործերը՝ կառուցել է Հաղբատի և Սանահնի վանքերը: Եղտուզ զորավարի արշավանքը:

ԾԲ գլուխ. երկրաշարժ Գանձակում:

ԾԳ գլուխ. վերստին իշխանական շրջան: Արցախի մնացած իշխանները և նրանց իշխանանիստ վայրերը, Արցախի վանքերն ու նշանավոր հոգևորականները:

ԾԴ գլուխ. Սև հոների արշավանքը. թաթարների ծագումը և աշխարհակալությունը, Չինգիզ խան, Ջալալեդդին, թաթարների բարբարոսությունները:

ԾԵ գլուխ. ավերումնք և փախուստ, ներքին պատերազմ, Բակտու խանը գաղթող և Ամտրասի թանկագին հնությունների գրավումը. Ջալալյան, Թոփչան և Ծիրանշահի շրջանի իշխանների գահակալությունը: Սաստիկ կոիվ գահակալության համար խաների միջև:

ԾԶ գլուխ. Լանկ Թամուրի ծագումը, զորանալը, արշավանքները Բարեզոնի, Արարատյան, Մեծ Սյունիքի, Վրաց, Աղվանից, Դամասկոսի, Վանի, Ռուսաստանի նահանգների վրա և նրա մահը:

ԾԷ գլուխ. Լանկ Թամուրի ցեղի ջնջվելը, Սկանդարի արշավանքը, Երնջակի պաշարումը, մելիքության և յուզրաշիության ծագումը:

Երկրորդ հատորը տպագրվել է Թիֆլիսում, 1907 թվականին, բաժանված է 35 գլխի և բաղկացած է 176 էջից:

Առաջին մի շարք գլուխներում թվարկում է հայ թագավորների և իշխանների անունները քաղված մատենագիրներից, գերեզմանների արձանագրություններից, որոնք գտնվում են Աղվանքում, Դարբանդում, Խաչ-մասում, այժմվա Ղուբայում և այլն: Այդ փաստերը ավելորդ անգամ վկայում են, որ դրանք բնիկ հայկական վայրեր են եղել, և ժամանակի սոցիալական պայմանները իրենց անբարենպաստ ազդեցությունն են ունեցել տեղական հայ բնակչության վրա, որը հարկադրանքի թելադրությամբ ստիպված է եղել գաղթել իրենց հայրենիքից: Բովանդակությունը հետևյալն է.

Ա գլուխ. Հովհաննես և Գրիգոր Դարբանդի-Բալա Ղազար-Հովսեփ Բեկ, Ջավատ բեկ և Պետրոս բեկ-Աղվանից տեր Հովհաննես Է.—Տեր Մատթեոս Դ.—Տ. Արիստակես Ա.—Տ. Ներսես. Գ.—Տ. Շմավոն Ա.—Տ. Թովմա Ա.:

Դարբանդի Փիլիպոս թագավորի ժառանգներն են Հովհաննեսը և Գրիգորը, որոնք թաղված են Խաչ-մասի (այժմ Խաչ-մազ) գերեզմանատանը: Նրանց գերեզմանաքարերի վրա փորագրված է «Յովհաննէս Կրեյսոր». (Հավանորեն կայսր): Դրանց հաջորդում է Բալա-Ղազարը, որը քաջությամբ պաշտպանում է տեղական հայերին լեռնականների հարձակումներից և «իբրն Խաչ-մասի տեր ժառանգում է ոչ միայն Խաչ-մասը, այլև ամբողջ գավառը իբրն պապենական սեփականություն» (էջ 1): Հայրը մեռնելուց առաջ գահաժառանգ է նշանակում իր որդի Ջալալ բեկին, որը ուներ երեք որդի՝ Բալա բեկ, Հովսեփ բեկ և Պետրոս բեկ:

Բ գլուխ. Ուզուն Հասան—շահ պարսկական, Հայերի գաղթը Վրաստան: Տեր Առաքել... Տեր Հովհաննես Ը. մահ տարաժամ, սով և գերություն: Տեր Առաքելին հաջորդում է Տեր Արիստակես, որը գահակալում է Գանձասարում:

Գ գլուխ. ազգաբանություն և գործք Գեղարքունյաց և Ծար գավառների իշխողների՝ մելիքների (1155—1804):

Դ գլուխ. ազգաբանություն Ջալալյան տոհմի իշխողների (1515—1806): Մելիք բեկի որդին եղել է Դանիել բեկը, իսկ սրա որդին՝ Բաղդասար Մելտրապոլիտը: Այստեղ հեղինակը գովում է Ջալալյան տոհմի ներկայացուցիչներին, որոնք հայ ժողովրդին պաշտպանել են պարսկական, արաբական, թաթարների, սելջուկների և տաճիկների արշավանքներից, Խաչենում, Ջրաբերդում, Գյուլիստանում, Ռստակում կառուցել են բազմաթիվ բերդեր, ամրոցներ, ինչպես և դպրոցներ, վանքեր, եկեղեցիներ և մատուռներ:

Ե գլուխ. ազգաբանություն Դիզակի իշխանների (մելիքների):

Զ գլուխ. ազգաբանություն Վարանդայի միջին իշխանների (մելիքների):

Է գլուխ. ազգաբանություն Վարանդայի վերջին իշխանների (մելիքների):

Ը գլուխ. ազգաբանություն Արցախի Գարդմանի վերջին իշխողների (մելիքների)[1]:

Թ գլուխ. ազգաբանություն Կյուլիստանի վերջին իշխողաց (մելիքների):

Ժ գլուխ. ազգաբանություն Ջրաբերդի վերջին իշխողաց (մելիքների):

ԺԱ գլուխ. մի քանի մեզ անծանոթ մելիքների մասին՝:

ԺԲ. գլուխ. ...Շահաբաս Ա և նրա նվաճումները, Աղվանից և Հայոց իշխանները Սպահանում, Ջալալիների ավերումները. սով և պատերազմ:

---

[1] Հեղինակը քրտնաթոր աշխատանք է կատարել մելիքների ազգաբանությունը կատարելու համար:

ԺԳ գլուխ. պարսիկների հզորանալը. գաղթականությունն հայոց և աղվանից, հայոց և աղվանից կաթողիկոսների հարաբերության ընդհատումն։

ԺԴ գլուխ. Խանձք գյուղի եկեղեցու կառուցումը, միայնանությունն երկպառակտյալ մելիքների։ Այս ժամանակներում (1850-ական թվականներին) Էջմիածնի կաթողիկոսները բողոքելով պարսկական շահերին Էջմիածնի թեմ ու վիճակ են դարձնում Գանձակը, Շամախին, Ծարը և Դարբանդը։ Պետրոս կաթողիկոսը համոզում է շահին, որ այդ տեղերը եղել են Աղվանից կաթողիկոսների թեմը և վիճակը, և Ծահաբաս Բ հրովարտակով հաստատում է և շնորհում Աղվանքի Պետրոս կաթողիկոսին. «Մեք ևս կաթուղիկոսութիւն Հայոց Գանձասարու, Ղարապաղու, Շիրվանու և այլոց շնորհեցաք անքակտելի հրովարտակաւ և հաստատեցաք զընդունելի զՊետրոս կաթողիկոսի կաթողիկոսութիւնն»։

ԺԵ գլուխ. այստեղ պատմում է հայերի և ռուսների հարաբերության, Անգեղակոթի ժողովի մասին, որտեղ ցատգամավորներ են ընտրվում Իսրայել Օրին և Մինաս Վարդապետը՝ զբաղվելու հայությունը պարսկական և օսմանյան տիրապետությունից ազատագրելու գործով։

ԺԶ գլուխ. Պետրոս Մեծի քաղաքականությունը, հայ մելիքների խորհրդակցությունը Գանձասարի վանքում Նսայի կաթողիկոսի նախագահությամբ։

ԺԷ գլուխ. պատրաստություն Պետրոս Մեծին ընդունելու։ Դարբանդը, Բաքուն և Գիլանն ընկնում են ռուսաց տիրապետության տակ։

ԺԸ գլուխ. օսմանցիների բռնությունները. Դավիթ Բեգ։

ԺԹ գլուխ. 1724 թ. հունիսի 24-ին համաձայնություն ռուսների և օսմանցիների միջև, որով Դարբանդը, Կուբան, Բաքուն, Շաքին, Շամախին և Թիֆլիսն անցնում են ռուսներին, իսկ Մուղանը, Արցախը, Գանձակը, Մեծ Այրարատը, Հին Նախիջևանը, Երևանը մնում են օսմանցիներին, 1728 թվականին վախճանվում է Նսայի կաթողիկոսը։

Ի գլուխ. Նադր-Ղուլի-խանը և հաղթությունները, հաշտությունն և Նադիրի թագադրությունը Աբրահամ Կրետացու մասնակցությամբ, Շամախու կործանումը և նորոգումը։

ԻԱ գլուխ. Վարանդայի մելիքի մահը 1786-ին, նրան հաջորդում է մելիք Հյուսեինը, Նադր շահի սպանությունը, Փանահ խանը ձգտում է խանության։

ԻԲ գլուխ. մելիքները միանում են Հերակլի հետ, Խանծախ և Պալուջա գյուղերը։ 1770 թվականին 120 ընտանիք Զրաբրդից տեղափոխվում են Խաչեն և հիմնում այստեղ Խանծախ և Բալուջա գյուղերը։ Այս գյուղերը շինվեցին խիտ անտառների մեջ, և շինքերի փայտեղենը կոտրում էին հենց իրենց անտառներից։

ԻԳ գլուխ. այստեղ նկարագրում է աղվանից ինքնակոչ Իսրայել կաթողիկոսի անկարգությունները և նրան կարգալույծ անելը։

ԻԴ գլուխ. Մելիք Աղամը և մելիք Հովսեփը Թիֆլիսում, վերջինիս թաքնությունը։ Նիկոլայ Ա կայսրությունի (1762) և Պատյոմկին։

ԻԵ գլուխ. մելիքների իսնդրագիրն առ Նիկոլայ Ա կայսրությունն, Հերակլ թագավորի վերաբերմունքը։

ԻԶ գլուխ. Աղա Մամատ շահի արշավանքը, Գանձակի պաշարումը և Թիֆլիսի ավերումը, Սայաթ-Նովայի սպանությունը։ Այնուհետև 1797 թվականին պարսկական շահը Մուղանի դաշտով արշավում է Շուշու վրա, այրել տալիս դաշտի հասունացած արտերը, Աղդամ գյուղը և մտնում Շուշի, կոտորում շատ մահմեդականների ու հայերի, նյութապես մերկացնում մելիք Զումշուտին, որի տանը հյուրընկալվել էր շահը, սակայն շահն էլ սպանվում է կաշառված սպասավորների ձեռքով։

Անդադրում պատերազմների հետևանքով «կործանում են Աղվանից երկրի, մանավանդ Արցախի տունը, քանզի առաջացնում են ... խղճալի գաղթականություն կամ տեղափոխություն ի Ռուսաստան, Վրաստան, Պարսկաստան, Տաճկաստան և ուրիշ տեղեր»։

Վրաց Գեորգի ԺԲ թագավորը 1802 թվականին կայսեր հրովարտակի հիման վրա մելիքներին տալիս է հողեր՝ մելիք-Փրեյդունին տալիս է Ուզունլար, մելիք Աբովին՝ Բոլնիս Հաչի Կալեի (Աղջկա-Ղալա) մոտ բնակած նոր գաղթականները պատկանում էին մելիք Զումշուտին և մելիք Փրեյդունին։

1805 թվի մայիս ամսին ռուսները նվաճում են Շուշու և Շաքվա խանությունները հարազատ մելիքների հայ զորքի օժանդակությամբ։

ԻԷ գլուխ. հայ և ռուս զորքերի պատերազմը պարսիկների դեմ։ Իբրահիմ խանի սպանությունը, մելիք Աբովի թունավորելը, Մելիք Աբովի նամակը։

ԻԸ գլուխ. Արաս Միրզայի և Ցվեցովի պատերազմը, Լանգարյանի գրավումը, Գյուլիստանի դաշնագրությունը 1813-ին, որով Պարսկաստանը Ռուսաստանի սեփականություն է ճանաչում Թալիշը, Բաքուն, Ղուբան, Դարբանդը, Շամախին, Ծաքին, Գանձակը, Մեծ և Փոքր Այրարատը, Արցախը Ռստի նահանգով միասին, ինարագրում է 1812 թվականին Վրաստանի ապստամբությունը և ձգտումը թոթափելու ռուսական լուծը և Վրաստանի հայերի անձնվեր աջակցությունը ռուսական բանակին այդ ապստամբությունը ճնշելու գործում։

Այս գլխում զետեղված է կառավարչապետ Ռտիշչևի նամակը Ալեքսանդր Ա-ին հայերի մատուցած ծառայության մասին և Ալեքսանդր Ա-ի շնորհակալական հրովարտակը Վրաստանի հայերին 1813 թվականին։

ԻԹ գլուխ. կնյազ Մադաթով, որ ծնվել է Ղարաբաղում, Վարանդայի շրջանի Ավետարանոց գյուղում, Մադաթովի արշավանքը հայ և ռուս զորքով լեռնարնակ լեզգիների վրա, գրավում Հյուսիսային Դաղստանը, Բաղդասար մետրոպոլիտը բողոքում է վանքապատկան կալվածները հափշտակելու դեմ և պահանջում է վերադարձնել տերերին, Մադաթովը համոզիչ խոսքերով խաբում է հայերին, որ ինքը որպես դարաբաղցի բոլոր հողերը և գյուղերը հաստատելու է վանքերի և մելիքների վրա։

Լ գլուխ. Հայոց Նարեկ կաթողիկոսը և Ներսես Աշտարակեցին Շուշում, Մինշիկովը Պարսկաստանում, մահմեդականների ապստամբությունը, Արաս Միրզա և Երմոլով։ Ներսես Աշտարակեցու շրջաբերականը,

Ծուշու պաշարումը. Ասի բեկը քաջ սուրհանդակ, որ պաշարյալների ճամակը հասցնում է Թիֆլիս (ճամակը տրեխի մեջ թաքցնելով), հայերի անձնվեր պայքարը պարսիկների դեմ և պաշտպանությունը Ծուշուն:

ԼԱ գլուխ. Ամիրխան սարդար և Մամատ-Միրզա միացած թուրք խաների հետ հարձակվում են Ծորագյալի և Փամբակի վրա. Գրիգոր արքեպիսկոպոս Մանուչարյանը և նրա քաջագործությունները հոգնած ռուսների Ղազախի, Շամշադինի և Սնանի կողմերում, Աբաս Միրզան տիրում է Գանձակին և ավերում գյուղերը:

ԼԲ գլուխ. Մադաթովը նշանակվում է զորահրամանատար, որը Մանուչարյանի 500-անոց գնդի հետ 1826 թվականին ջարդում է Ամիրխանին և գրավում Գանձակը: Մադաթովին և Մանուչարյանին միանում են Խաչենի և Ջրաբերդի հայերը և ջախջախում Աբաս Միրզային, որը դաշտում թողնում է 2000 դիակ: Պասկևիչը հասնում է Գանձակ նույն թվի սեպտեմբերի 10-ին, որպես ընդհանուր հրամանատար: Երժոլովը և Մադաթովը տանում են մի շարք հաղթանակներ, Պասկևիչը որոշում է տապալել Երժոլովին. Անձնությամբ հաջողվում է հեռացնել նրան պաշտոնից և նշանակվել երկրի կառավարչապետ, նա դավեր է նյութում նաև Մադաթովի դեմ և հեռացնում թե՛ նրան և թե՛ Երժոլովի կողմնակիցներին, իսկ հետագայում նաև՝ Ներսես Աշտարակեցուն:

ԼԳ գլուխ. աղվանից կաթողիկոսների նահատակությունը: Աղվանից կաթողիկոսությունն ունեցավ 1500 տարվա գոյություն և վերացավ Ներսես Աշտարակեցու կարգադրությամբ: Նա վերածվեց երկու թեմի առաջնորդության: Առաջինը հանդիսացավ Արցախի թեմը, որի մեջ մտնում էր Բերդաձորը, Դիզակը, Վարանդան, Խաչենը, Ջրաբերդը, Գյուլիստանը, Լանջարանը, Շաքի քաղաքը, Կապաղակ, Հոդի, Թենի, Կապիճան և Արաշ գավառները, իսկ երկրորդը՝ Շամախիի թեմը, որի կազմի մեջ էր Դարբանդը, Ղուրան, Բաքուն, Սայյանը իրենց գյուղերով:

ԼԴ գլուխ. Հայ կամավորները ռուսաց զորքի մեջ Ներսես Աշտարակեցու ղեկավարությամբ: 1827-ի գարնանը ռուսական բանակը Ներսես Աշտարակեցու և Բեկենդորֆի ղեկավարությամբ գրավում են Էջմիածինը և Սարդարապատը, իսկ Պասկևիչի ղեկավարությամբ՝ Հին Նախիջևանը և Աբասաբադը, ապա ռուսները գրավում են Մարանդը, Թավրիզը, Ուրմին, Արդաբիլը և կնքում Թուրքմենչայի դաշնադրությունը 1828 թվականի փետրվարի 10-ին, որի համաձայն Պարսկաստանից Ռուսաստանին է անցնում Երասխ և Կուր գետերի միջև եղած Հայաստանը, և արգելք չդնել Պարսկաստանից Ռուսաստան գաղթողներին: Ըստ այս պայմանագրի Պարսկաստանից Ռուսաստան է գաղթում 40.000 հայ, Լազարյան Ղազար գնդապետի հրդեհով: Այդ հայությունը բնակվում է Արարատյան նահանգում և Աղվանից երկրում՝ Շաքիի, Ուտի-Առանձնակ և Խաչեն գավառներում:

ԼԵ գլուխ. Վերջաբանություն. վերջին գլուխը երկու հատորի ամփոփումն է, որ ավարտում է ընդգծելով ցարական կառավարության երախտամոռությունը հայ ժողովրդի ցուցաբերած անձնվիրության նկատմամբ.

«Այս իսկ և մի մեծ զարմանք—ինչպես Ռուսաց տերության դեմ անհավատարմություն գործող, նորա թշնամու կողմն անցնող և պարսկական բանակը ռուսների դեմ առաջնորդող ճրս-խաներն ու ճրս-բեկերն դարձյալ ընդունվեցան Անդրկովկասում և դարձյալ նույն կեղծ թղթերով տեր դարձան վանական, մելիքական և ժողովրդական արդար սեփականությանց. իսկ ռուսաց տերության ամենահավատարիմ հպատակ և անձնվեր հայերն զրկվեցան յուրյանց դարավոր պապենական արդար իրավունքներից»:

Հեղինակը սույն երկու աշխատությունը գրելու համար օգտագործել է հայ և օտար պատմիչների երկերը՝ Մովսես, Ստրաբոն, Հովսեպոս և այլն, ինչպես և բազմաթիվ արձանագրություններ եկեղեցիների, վանքերի, գերեզմանաքարերի վրա փորագրված պատմական իրադարձությունները քննում է ազգային պահպանողական դիրքերից և պաշտպանում է ռուսական օրիենտացիան:

Մ. եպս. Բարխուդարյանի մյուս շատ արժեքավոր գործը **«Արցախ»** վերնագիրը կրող աշխատությունն է: Մակար եպս. Բարխուդարյանի «Պատմություն Աղվանից» և «Արցախ» աշխատությունները արժանացել են **Իզմիրլյան մրցանակի:** «Արցախ»-ը տպագրվել է Բաքվում, 1895 թվականին: Գիրքը բաղկացած է 437 էջից: Ունի առաջաբան (յառաջաբանութիւն) բաղկացած 9 (թ) էջից, որի մեջ հեղինակը հանգամանորեն նկարագրում է գրքի բովանդակությունը և շարադրման ծրագիրը: Հեղինակը, որպես բարձրաստիճան հոգևորական, շրջել է և անձամբ նկարագրել Արցախի բոլոր գյուղերն ու քաղաքները և, ինչպես գրում է առաջաբանում, գրքում տեղ է գտել ողջ Արցախը՝ Հայաստանի մեծ նահանգներից մեկը՝ «Նախկին և փոփոխյալ սահմանագլուխները և սոցա մեջ գտնված լեռները և լեռնակները, դաշտերը և դաշտակները, գետերը և գետակները, մեծ աղբյուրները և լճակները, նավթահանքը և հանքային ջրերը, ոսկու և արծաթի, պղնձի և շիպի, երկաթի և պողպատի, երկնաքարի և շինությանց քարերի հանքերը, քարայրները և վիմափորները, անտառները և մացառները, պտղատու և անպտուղ ծառերի և թփերի տեսակների անունները... ինքնաբուխ և ցանված ծանոթ բանջարեղենաց և կանաչեղենաց, ծաղիկների և խոտերի, ընտանի անասնոց և գրաստուց, սուրբ և անսուրբ կենդանյաց և գազանաց, բնիկ և երթևեկ հավքերի, սողունների և զեռունների, օձերի և միջատների, ճանճերի և մեղուկների և միանգամայն տեղական բերքերի տեսակների անունները (տեղ-տեղ տեղական բարբառով):

Բացի առաջաբանում այս նշվածներից, գրքում տեղ են գտել Արցախի լեռների կամ բլուրների վրա կանգնեցրած կոթողները, խաչերը, արձանագրությունները, ինչպես քաղաքներում և գյուղերում գտնված ուսումնարանները, աշակերտ-աշակերտուհիները, նրանց թիվը, վանքերը, անգամ հիվանդությունները և բժշկությունը:

Հայկական այս նահանգը կրել է զանազան անուններ՝ Գարգար (Խորեն), Արցախ (Ասողիկ), Փոքր Սյունիք (Խորենացի, Կաղանկատվացի, Ասողիկ, Սամվել Անեցի), Սյավ Այգի (Սամվել Անեցի), պարսիկները և տաճիկները անվանել են Ղարաբաղ:

Արցախն այժմ կոչվում է Ղարաբաղ: «Արցախի» հեղինակը ներկայացրել է Հայաստանի այդ մեծ նահանգի աշխարհագրական բաժանումները, գավառները՝ թե՛ պատմական և թե՛ ներկա անուններով: Այդ անունները նա հանել է հայ մատենագիրներից (Խորենացի, Բուզանդ, Մովսես Կաղանկատվացի, Վարդան Բարձրաբերդցի, Կիրակոս Գանձակեցի, Սեբեոս, Հովհաննես կաթողիկոս, Ստեփաննոս Օրբելյան, Եսայի կաթողիկոս և այլն): Տքնաջան աշխատանք կատարելով նա ուսումնասիրել է ոչ միայն հայ պատմիչներին, այլև բազմաթիվ սրբանկարություններ, համեմատել, ճշտել անունները և արձանագրել գիտնականին հատուկ օբյեկտիվությամբ ու բարեխղճությամբ:

Ըստ այդ ուսումնասիրության պատմական Արցախը, Հայաստանի այդ մեծ նահանգը, աշխարհագրական դիրքին նայելով բաժանել է երեք մասի՝ դաշտային, լեռնային և հարավային, կամ՝ ստորին, միջին և վերին:

Դաշտային կամ ստորին Արցախի գավառներն են՝[1] Պիանք (այժմ Ջաբրայել կամ Ջիբրայել), Մուխանք կամ Մուղան, Արանդուտ, Տոի, Ռոցպատյան և Աղուե[2] (առաջին երկուսն այժմ կոչվում են Բյաթիրլու, իսկ վերջին երկուսը՝ Ջավանշիր), Տուչկատակ, Տիգրանակերտ[3], Թառնագյուտ (այժմ կոչվում է Շահբուլաղ, ժողովուրդը գործածում է նաև Թառնագյուտ անունը), Ուտի առանձնակ, Ուտի գավառ (այդ երկուսն այժմ կոչվում են Ջուանշիր, որ համապատասխանում է Նուխու անվանը), Եղիզավետպոլի կամ Գանձակի գավառ (որ կոչվել է նաև Շակաշեն, Շիկաշեն, Արշանաշեն), Կողթ, Շամքոր և Ջաջուռ[4] (այժմ կոչվում են Շամշադին և Ղազախ):

Լեռնային կամ միջին Արցախի գավառները 9 են: Դրանք են՝ Դիզակ կամ Ջաբրայել (նախկին Պաղկանք, Պանձկանք), Վարանդա (նախկին Հաբանդ կամ Հաբանդ-Ամաբաս), Խաչեն (նախկին Մեծիշանք, Մեծարանք ,Ներքին Խաչեն), Հաթերք (Ընտիսական, Ըստակ)[5], Թալիշ կամ Գյուլիստան կամ Ջրաբերդ (Մեծ կողմանք, Մեծկուանք, Ջարաբերդ)[7], Գանձակի գավառ (Գարդմանք, Գարդմանա ձոր, Գարթմանիկ)[8], Շամշադին (Փառնես, Փառիս, Փառիսոս), Ղազախ-Մեծ մասը Շամշադին (Քուստի, Քավդ), (Կայենի երկիր, Ջավե, Ջորագետ, Սևորդյաց երկիր (Ղազախի գավառ):

Հարավային կամ վերին գավառները 4 են. Ղարաղշլաղ կամ Ղալա-Դարասի (Բերդաձոր, Բելուկան, Ղարաղշլաղի ձոր), Հաճիշար կամ Հաճի Սամլու (Հարճլանք, Ջառիստ), Վակունիք կամ Վերին Վալկունիք Ջար (Սիսական-Ոստան, Տար, Ջար):

Արցախի բոլոր գավառները թվարկելուց և նրանց սահմանները գծելուց հետո հեղինակը կանգ է առնում յուրաքանչյուր գավառի վրա և հանգամանորեն նկարագրում տվյալ գավառի գյուղերը, բնակչությունը, նրանց ընդհանուր թիվը, զբաղմունքը, կոթողները, սրբավայրերը, հուշարձաններն ու տեսարժան վայրերը և այլն:

Դրքին կցված են ընդարձակ ծանոթագրություններ, որոնք լուսաբանում են բնագրի շատ էլ մութ կետեր:

Շարադրման լեզուն գրաբարախառն աշխարհաբարն է, ոճը՝ հին:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի այս գործը շահեկան մի արժեքավոր աշխատություն է, որ բովանդակում է Արցախն իր ողջ նյութական և հոգևոր կյանքով: Հայաստանի այդ մեծ նահանգի համար գիրքը կենդանի մի հուշարձան է և վստահելի աղբյուր Արցախի պատմության համար[9]:

«Պրլը-Պուդի»—Տպվել է 1883 թվականին, Թիֆլիսում, փոքր դիրքով գրքույկ է՝ բաղկացած 109 էջից: Գրքի սկզբում կա առաջաբան (24 էջից բաղկացած), Ղարաբաղի բարբառի քերականությունը, ապա

---

[1] Մուխանք հիշում է Խորենացին, իսկ Մուղան՝ Կիր. Գանձակեցին, Վարդան Բարձրաբերդցին և Եսայի կաթողիկոսը:

[2] Ընդգծված չորս անունը հիշում է Մովս Կաղանկատվացին (այժմ կոչվում են Ակուանդ):

[3] Հիշում է Սեբեոսը:

[4] Հիշում է Մովս. Կաղանկատվացին:

[5] Առաքել Դավրիժեցին:

[6] Մովսես Կաղանկատվացի:

[7] Մովս. Կաղանկատվացի, Կիր. Գանձակեցի:

[8] Վարդ. Բարձրաբերդցի:

[9] Ադրբեջանի տխրահռչակ Հուշինսկին հերյուրել է Շուշու «պատմությունը» և շինծու ու ստահող տեղեկություններ լցրել իր գրքի մեջ: «Արցախը» մի ապտակ է Հուշինսկու և նրա նման գրպարտիչներին ու Ղարաբաղի պատմությունը աճոգի աղավաղողներին:

բարբառի բառարան՝ բաղկացած 8 թերթից:

Պալը-Պողի նշանակում է խենթ Պողոս: Այնպես անվանել է Վարանդայի մելիք Շահնազարը իր զվարճախոս Պողոսին: Պողոսը, ինչպես գրում է Մակար վարդապետ Բարխուդարյանը, ծնվել է մոտավորապես 1791 թվականին Արցախի Ավետարանոց գյուղում, մեռել է 1810 թվականին և թաղվել Շոշու և Արկաթալա գյուղերի մեջտեղում գտնված քարայրում:

Գիրքը գրված է Ղարաբաղի բարբառով, սակայն հեղինակը չի կարողացել լիովին ճիշտ գրել բառերը: Օրինակ, այդ բարբառով «քյընացալ» բառը հեղինակը արտահայտել է «գինացել» ձևով, կամ նույն բայի հրամայականը գրել է «գինի» փոխանակ «քյընի», «յորա» բառը դարձրել է «երրա», «վընններին» բառը՝ «ոններին» (ոտներին), և այլն: Շատ են այսպիսի արտահայտչական սխալները, որոնք ճշտորեն չեն արտահայտում Ղարաբաղի բարբառը:

Գաղտնիկ Ղարաբաղի: Մակար վարդապետ Բարխուդարյանը այս գիրքը հրատարակել է որպես Ապրես Բեկնազարյանի հեղինակած գործ, սակայն փաստորեն դա պատկանում է Բարխուդարյանի գրչին: Այդ «կեղծիքը» նկատել է Ռաֆֆին և իր ժամանակին քննադատական մի հոդվածով հանդես եկել մամուլի մեջ: Ռաֆֆուն պատասխանում է Մակար Բարխուդարյանը «Քննադատություն քննադատությանց» վերնագիրը կրող մի բրոշյուրով:

«Միրզա և Աննա» և **«Զորանն ու նշանածը»** սիրային թեմայով շարադրված գործեր են: Իբրև գեղարվեստական երկ չի կարող համարվել հաջող, բայց ընդարձակ նյութ է պարունակում Ղարաբաղի հայ ժողովրդի վաչկատուն կյանքի մասին: Շարադրման լեզուն Ղարաբաղի բարբառն է:

Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

7-ՐԴ ԴԱՐԻ ԿՈԹՈՂՆԵՐ ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Հայաստանում վաղ քրիստոնեական շրջանում կանգնեցվել են տարբեր տիպերի կոթողային հուշարձաններ՝ քառակող-պատկերազարդ և հուշասյուն-կոթողներ, խաչարձաններ, դամբարանային կոթողներ և այլն:

Քառակող-պատկերազարդ և 1—5 մետր բարձրությամբ կոթողները սովորաբար կերտվել են երկու մասից՝ խորանարդաձև սյատվանդանից և քառակող սյունից: Նման կոթողների թե՝ սյատվանդանները և թե՝ սյուները քանդակազարդվել են քրիստոնեական բնույթի քանդակներով, խաչերով, բուսական և երկրաչափական պատկերներով: Երբեմն սակայն վաղ շրջանում այդպիսիք իրենց վրա կրում են նաև հեթանոսական շրջանից եկած դրվագներ (Գառընհովիտ, Կարմրաքար և այլն): Նման կոթողները Հայաստանում տարածված են եղել հիմնականում 4—7-րդ դդ.[1], թեև դրանց ծագումն հարկավ ավելի հին է և հեթանոսական շրջանից է գալիս: Նույն այս ժամանակներում Հայաստանում տարածվեցին նաև 1—7 մետր բարձրություն ունեցող հուշասյուն-կոթողներ, որոնց թե՝ ժամանակագրության և թե՝ արտաքին տեսքի մասին արժեքավոր տեղեկություններ է մեզ թողել 5-րդ դարի պատմիչ Ագաթանգեղոսը:

«Եւ տեսանէի ի մէջ լուսաքին խարըսխաձև խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր, և ի վերայ նորա սիւն մի հրեղէն բարձր մինչև յոյժ, և ի վերայ նորա թակաղաղ[2] մի ամպեալ, և խաչն լուսոյ ի վերայ նորա»[3]:

Նման կոթողները բաղկացած են եղել 4 և կամ 5 մասերից և ունեցել աստիճանաձև պատվանդան, խարիսխ, բազմանկյուն կամ կլոր սյուն ու վրան՝ խոյակ (Օշական, Ավան և այլն): Երբեմն սակայն այդ խոյակների վրա դրվել են նաև թեավոր խաչեր, որպիսիք ունենք Դվինից, Զրվեժից և այլ վայրերից:

Նմանօրինակ երկու կոթողներ վերջերս հայտնաբերվեցին մեր կողմից Գեղամա լեռներում, որոնց մասին կխոսվի ստորև: Հիշյալ երկու տիպերի կոթողները մինչև վերջերս էլ նկատվել են որպես մահարձանային հուշարձաններ: Գարեգին արքեպ. Հովսեփյանը բավականին մանրամասն ուսումնասիրելով քառակող-պատկերազարդ կոթողների արվեստը, հանգել է այն հետե-

[1] Քառակող-պատկերազարդ կոթողները հանգամանորեն ուսումնասիրված են երկու հեղինակների կողմից: Տե՛ս Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Գ, ՆյուՅորք, 1944 թ., և Բ. Ն. Առաքելյան, «Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դդ.», Երևան, 1949 թ.:

[2] «Թակաղաղ» նշանակում է սյունագլուխ, խոյակ: Տե՛ս Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հտ. 2-րդ, Երևան, 1973 թ., էջ 141:

[3] Ագաթանգեղոս, «Պատմություն հայոց», Թիֆլիս, 1914 թ., էջ 375:

վության, թե իրր դրանք վաղ քրիստոնեական շրջանի գերեզմանական հուշարձաններ են, բացի մի երկուսից, որոնք կարող են հեթանոսական շրջանին պատկանել[4]:

Այնուհետև հայկական այդ քառակողպատկերազարդ կոթողները «հայոց տապանաքար», «մահարձաններ» կամ «գերեզմանական հուշարձաններ» են համարել Թ. Թորամանյանը[5], Հ. Օրբելին[6], Յու. Սմիրնովը[7], Բ. Առաքելյանը[8], Ս. Բարխուդարյանը[9] և ուրիշներ:



Գեղամա լեռների հուշասյուն-կոթող

Գ. Լևոնյանը[10] նշված կոթողների մի մասը համարում է հին շրջանից մնացած և հեթանոսական պատկերներ արտահայտող հիշատակարաններ: Թ. Թորամանյանը խոսելով Օշականում Մորիկ կայսեր կամ նրա մորը վերագրվող 7-րդ դարի հուշասյան մասին, գրում է, որ «այն շիրիմ է, եթե շիրիմ լինելը չհաստատվի, այնուամենայնիվ հերքելն ալ դժվար է»[11]: Իրավացի է պրոֆ. Բ. Ն. Առաքելյանը, երբ Տաթևի 895 թ. կոթողը համարում է հուշասյուն՝ ոչ-մահարձանի իմաստով[12]:

Հրացառելով հանդերձ 4—7-րդ դդ. քառակող-պատկերազարդ և հուշասյուն-կոթողներին վերագրվող մահարձան-հուշարձանի հնարավոր ենթադրությունը, այնուամենայնիվ մեր պատմիչների ականատեսի վկայություններից և վերջերս Գեղամա լեռներում հայտնաբերված երկու կոթողների վիմական արձանագրություններից պարզվում է, որ դրանք ունեցել են բազմակողմանի նպատակային նշանակություն և տեղադրման բազմապիսի վայրեր:

8-րդ դարի պատմիչ Ղևոնդ վարդապետը, խոսելով Հայաստանում Եզիտ խալիֆի գործունեության մասին (720—724 թթ.), խիստ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում քառակող-պատկերազարդ և հուշասյուն-կոթողների ինչպես ժամանակագրության, այնպես էլ դրանց նպատակային նշանակության ու տարածման վայրերի վերաբերյալ:

Պատմիչը գրում է, որ Եզիտը «...տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղության Տեառն մերոյ և Փրկչին և նորին աշակերտացն»[13]:

Այնուհետև հեղինակը շարունակում է. «Խորտակէր և զնշան տէրունական խաչին Քրիստոսի, որ ուրեք ուրեք կանգնեալ էին յանուն (նորա) ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեան...»[14]:

Ղևոնդի մեկ այլ վկայության մեջ ավելի որոշակի նշված են խաչարձանների և հուշասյուն այդ կոթողների կանգնեցման շարժառիթները, տեղադրությունը և դրանց անվանումները՝ ս. Երրորդության անունով:

Պատմիչը, նկարագրելով Խրամի տաճարում հայ նշանավոր նախարարների նկատ-

[4] Տե՛ս հեղինակի նշված աշխատությունը, էջ 125:

[5] Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ 24—25:

[6] И. А. Орбели, «Армянские искусство», (տե՛ս Новый энциклопедический словарь, том 3, стр. 670.

[7] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 33:

[8] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակներ..., էջ 33, 86:

[9] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ հարտարապետներ և բարգորդ վարպետներ, Երևան, 1963, էջ 121—122:

[10] Գ. Լևոնյան, Գեղարվեստ, № 6, Թիֆլիս, 1917: Տե՛ս Գեղարվեստի ներածությունը:

[11] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1942, էջ 54, նկար 12:

[12] Ղևոնդեայ մեծի վարդապետի, Հայոց պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1857, էջ 99—100:

[13] Բ. Ն. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 36:

[14] Նույն տեղում, էջ 99—100:

մամբ կասարված նախնիները, գրում է, որ արարքները դրանից հետո «...ուս եդեալ ամենայն քաւարանս աղօթից՝ խոկացին կործանել և շփոթել զսրբութիւն եկեղեաց Քրիստոսի, զոր ապաւէն և հովանի յելս և ի մուտս կանգնեալ ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեան...»[15]:

Հեղինակի այս և նախորդ վկայություններից, որպիսիք ցարդ ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել էին, պարզվում է, որ Հայաստանում քառակող-պատկերազարդ և հուշասյուն-կոթողները հանդիսացել են գերազանցապես որպես պաշտամունքային և այլ տարբեր նշանակությամբ հուշարձաններ: Երկրորդ, որ դրանցից ոմանք կոչվել են ս. Երրորդության անունով: Եվ երրորդ, որ այդ կոթողները կանգնեցվել են տարբեր վայրերի ելք ու մուտքերում, հետևաբար և ունեցել են տարածական տարբեր ոլորտներ:

Բայց թե ինչպիսի՞ կամ ի՞նչ վայրեր են դրանք, պարզվում է Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մի այլ կարևոր վկայության շնորհիվ: Հեղինակը, խոսելով Հայաստանում քրիստոնեության տարածման ժամանակ Գրիգոր Լուսավորչի կողմից կանգնեցված խաչերի մասին, գրում է, որ այդ խաչերն ու խաչարձանները կանգնեցվում էին «նոյնպէս և յելս և ի մուտս ճանապարհաց և ի փողոցս և ի հրապարակս և ի ճանապարհակիցս պահ և ապաւէն զերկրպագելոց յամենեցունց զնոյն նշան կանգնէր»[16]:

Վերջերս Գեղամա լեռներում հայտնաբերված[17] երկու հուշասյուն-կոթողները և նրանց արձանագրությունները[18] բառացիորեն հաստատեցին այդ հուշարձանների կանգնեցման տարբեր շարժառիթների և անունների վերաբերյալ մեր պատմիչների հաղորդած գրավոր վկայությունները:

Գեղամա լեռների «Ուղտանիստ» (Դավագյոզի) կոչվող վայրում, Գեղարդավանքից մոտ 35 կմ հարավ-արևելք Ազատ գետի ակունքների մոտ, գտնվում է ս. Հակոբ եկեղեցու ավերակները: Այն շարված է կիսատաշ բազալտ քարով ու կրաշաղախով: Տաճարի շուրջը և ներսը ցիրուցան թափված են կոթողների երկու արձանագրված խարիսխներ, մեկ կլոր սյուն և մեկ խոյակ, բոլորն էլ բազալտ քարից:

1967 և 1968 թթ. տեղում մեր կատարած ուսումնասիրություններից պարզվեց, որ հնում այստեղ եղել են հնագույն մի տաճար, նույնանման և գրեթե նույն մեծությամբ երկու հուշասյուն-կոթողներ՝ համապատասխան արձանագրությամբ: Այդ կոթողները հայագիտությանը մինչև այժմ հայտնի առաջին արձանագրված 7-րդ դարի հուշարձաններ են:

Դրանցից մեկն ամբողջությամբ գրեթե վերականգնվում է, իսկ երկրորդից պահպանվել է միայն նրա սյան խարիսխը: Կոթողների մասերի նույնանման չափերի պատճառով դժվար է ասել, թե տեղում պահպանված միակ հուշասյունը և խոյակը ո՞ր խարսխի վրա է դրված եղել, թեև դա այդ կոթողների հորինվածքային ձևերի մեջ որևէ փոփոխություն չի առաջացնում:

Հուշարձանների խարիսխների բարձրությունը 0,5 մ է, արևմտյան ճակատի լայնքը՝ 0,63 մ, իսկ հարավային և հյուսիսային կողմերի լայնքը՝ 0,68 մ: Խարիսխների վրա 0,1 մ խորությամբ և 0,5×0,55 մ մակերեսով փոս է արված, որտեղ ամրացվել է ներքևում քառանկյուն տաշված կլոր սյունը: Կոթողների խարիսխների սյան և խոյակի՝ իրար միացող մասերի կենտրոնում՝ 0,1 մ խորությամբ ու տրամագծով կլոր փոսիկներ են, հավանաբար երկաթե գամերով և կամ փայտով իրար ամրացնելու նպատակով արված:

Կոթողի պահպանված միակ կլոր սյան բարձրությունը 1,56 մ է, տրամագիծը՝ 0,5 մ: Ի դեպ սյան կենտրոնական մասում փորագրված է քառատող մի փոքրիկ արձանագրություն.

---

[15] Ղևոնդ պատմիչի հիշյալ հաղորդումներից հավանաբար իր ժամանակին օգտվել են և՝ Թովմա Արծրունին, և՝ Ստ. Տարոնացին (Ասողիկ), որովհետև համանման տեղեկություններ պահպանվել են նաև նրանց մոտ, բայց ավելի թերի. դրա համար էլ մենք գերադասեցինք վկայակոչել միայն Ղևոնդ պատմիչի-ականատեսի վկայությունները:

[16] Ագաթանգեղեայ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 397:

[17] Տե՛ս «Հնագիտական նոր հայտնագործություն», Սովետական Հայաստան (օրաթերթ), № 268, 1968, (նոյեմբեր 17): Այս կոթողները հայտնաբերել ենք 1967 թ. հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժայռապատկերների և քարանձավների կոմպլեքսային արշավախմբի՝ դեպի Գեղամա լեռները կատարած արշավի ընթացքում (ղեկ. պատմ. գիտ. դոկտոր Հ. Մարտիրոսյան, որի կազմում էինք նաև մենք): Սակայն պարզվում է, որ դեռևս

[18] 1908 թ. Ն. Մառը և Ե. Սմիրնովը եղել են այս վայրերում և նկատել արձանագրությունները: Ն. Մառի ոուսերեն թարգմանությամբ այդ արձանագրություններից մեկը հրատարակել է Մ. Ռոստովցևը և բյուրիմացաբար այն վերագրել 10-րդ դարին: Տե՛ս М. Ростовцевъ, Апаранская греческая надпись царя Тиридата, Анийская серия, № 6, Անուշ շարք, С. Петербургъ, 1911 г., стр. 30—31.

Տեղում ինչպես կա. Մեր վերծանությամբ

ՍԻՂԳՐԻ	ԲԱՍԻՂ
ԻՐԱՇԲԱ	ԳՐԻԳՈՐ
ԳՈՐՏՈՑ	ՄԱՇՏՈՑ
ԹՈԴՐԱ[19]	ԹՈԴՐԱԿ[20]

Անձավ. կոթողի խարիսխ, VII դ.

Նույն կոթողի խոյակը

Եթե այս արձանագրությունը վերծանելու լինենք փորագրված ձևով և ինչպես որ կա, ապա դրանից ոչինչ չի ստացվի, որովհետև այդ չորս տողերից չորրորդ տողն է միայն ընթերցվում Թոդրա (Թոդրակ?, Թեոդոր): Արձանագրությունը վերծանելու ուղղությամբ մեր կողմից կատարված բազմապիսի փորձերից հետո գալիս ենք այն համոզման, որ արձանագրության գրիչը փորձել է յուրահատուկ ձևով նշել հուշարձանի վարպետների կամ նրա պատվիրատուների անունները:

Մենք այն վերծանում ենք հետևյալ կերպ.

Առաջին տողի երեք տառերը և երրորդ տողի երեք տառերն իրար միացնելով կընտանանք «Գրիգոր» անունը: Այնուհետև, երկրորդ տողի վերջին 2 տառը և առաջին տողի սկզբի 3 տառերն իրար միացնելով ստանում ենք «Բասիղ» (-Բարսեղ կամ Բասիլ-Վասիլ) անունը: Երկրորդ տողի սկզբի 3 տառերը միացնելով երրորդ տողի վերջին 3 տառերին, կկարդանք «Մաշտոց»: Եվ, վերջապես, չորրորդ տողում գրված է ամբողջական մեկ անուն՝ Թոդրա» (Թոդրակ): Նման վերծանում ունի և նույնպիսի ձևով է գրված Գառնհովիտի 7-րդ դարի տաճարի հարավային պատին փորագրված վարպետի անվան մի փոքրիկ հիշատակություն: Անվան յուրաքանչյուր տառն առնված է փոքրիկ շրջանակի մեջ և գրված է ԳՈՐԳՐԻ, որպիսին վերծանվում է ԳՐԻԳՈՐ: Վարպետ-գրչի այդպիսի գրության ձևեր կան նաև այլուր:

Կոթողի խոյակի արևելյան և արևմտյան կողմերում քանդակված են 2-ական խոյեր (խոյակի բարձրությունը 0,5 մ է, ներքևի կլոր մասի տրամագիծը՝ 0,6 մ, իսկ վերևի սեղանակերպ քառակուսու երկարությունը՝ 0,64 մ):

Տեղում պահպանվել են նաև երկու թեվավոր, փոքրիկ քարե խաչերի բեկորներ, որոնցից դատելով, այդ խաչ-խաչարձանների բարձրությունը պիտի լիներ 0,7—0,8 մ: Պարզվում է նաև, որ այդ խաչերի ներքևի երկու կողմերից վեր են բարձրացել տերևաքանդակներ, հար և նման Դվինի, Զրվեժի և Գառնիի համանման հնագույն խաչաքանդակներին: Բայց թե այդ խաչերն իր ժամանակին իրո՞ք դրված են եղել վերը նշված երկու կոթողների խոյակների վրա՝ պնդել չենք կարող, քանի որ վերջիններիս վրա համապատասխան փոսիկներ չեն արված: Զրվեժի՝ նման մի հուշասյուն-կոթողի վրա խաչարձան ամրացվել է մեկ այլ քարի՝ բարձիկի վրա: Եվ եթե դա ճիշտ է, հնարավոր է ենթադրել, որ Անձավի կոթողների խոյակների վրա ևս դրված կարող էին լինել նման բարձիկներ, բայց

[19] Առնում ենք մեր հավաքածուից: Այս արձանագրության վերծանման վրա հրավիրում ենք մասնագետների ուշադրությունը:

[20] Հնարավոր է այս անունը վերծանել նաև ԹՈԴՐՈՍ:

տեղում ոչ մի այդպիսի հետք չի նկատվում:

Գեղամա լեռների հուշասյուն-կոթողների ընդհանուր բարձրությունն անհայտ է, քանի որ դեռևս տեղում չեն հայտնաբերված դրանց ներքևում մեր կողմից ենթադրվող աստիճանաձև ընդհանուր պատվանդանները, որպիսիք տեսնում ենք Ավանում, Զրվեժում, Օշականում և այլուր: Իսկ առանց այդպիսի պատվանդանների աներևակայելի է կոթողի արձանագրված խարիսխը պատկերացնել գետնի վրա դրված: Ավանում և Զրվեժում պատվանդանների նման աստիճաններից յուրաքանչյուրի բարձրությունը 0,27 մ է, ընդ որում Ավանի կոթողի պատվանդանն ունեցել է 5, իսկ Զրվեժինը՝ 7 աստիճան: Զրվեժի հուշասյան ընդհանուր բարձրությունը 6,5 մ է:

Եթե մի պահ ենթադրենք, որ Անձավի հուշասյուների պատվանդանները բաղկացած են եղել 5-ական աստիճաններից, ապա հնարավոր կլինի ենթադրել, որ դրանք ունեցել են մոտավորապես 4,7—5 մ բարձրություն, իսկ խաչարձանի հետ միասին՝ 5,7 մ:

Նման հուշասյուն-կոթողները Հայաստանում կերտվել են մինչև 7-րդ դարի վերջը և 8-րդ դարի սկիզբը, որից հետո արդեն երկրում առաջանում են խաչքարերը, որոնք 9-րդ դարից գերիշխող են դառնում իրենց նախորդող բոլոր տեսակի կոթողների նկատմամբ:

Բացի հորինվածքային և ոճական առանձնահատկություններից, որոնք Գեղամա լեռների հիշյալ կոթողները տանում են մինչև 7-րդ դար, տեսնենք, թե արձանագրական ինչպիսի տվյալներ կան՝ դրանք 7-րդ դարին վերագրելու համար:

Կոթողներից մեկի խարիսխի չորս երեսների վրա պահպանված 27 տող արձանագրության մեջ կարդում ենք հետևյալը.

Ա. երես
ՅԱՄՍ ԱԾԱՍԷՐ ԿՈՍՏ-
ԱՆՏՆԻ ԲԱՐԵՊԱՇՏԻ Թ-
ԱԳԱՒՈՐԻ, ՊԱՐԳԵՒԵՑԱՒ ԶԳ-
ԵԱՒՂՍ ԱՅՍ ԱՆՁԱՒ՝ ԻՆ-
Զ ՏԻՐՈՅՑԻ ԳԱԿԱ ԳՆԹ-
ՈՒՆԵԱՑ ՏՆ ՈՐԴՒՈՅ ԵՒ Կ-
ԱՄ ԵՂԵՒ ԻՆՁ ՏԻՐՈՅՑԻՆ

Հր. երես
ԿԱՆԳՆԵԼ ԶԽԱՉՍ[21] ՎԱՍՆ
ԻՄ ՄԵՂԱՑ, ՅԱՆՈՒՆ ՍՐ-
ԲՈ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ, Ի
ՔԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ՓՐԿՈՒԹ-
ԻՒՆ ԻՆՁ ԵՒ ԳՐԻԳՈՐԵԱՅ
ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ԵՒ ՁԱ-

Աե. երես
ՒԱԿԱՑ: ԵՒ ՄԱՏՈՒՑԻ ՍՄ-
Ա ԸՆԵԱՑ ԶԳԵԱՒՂՍ ԶԱ-
ՅՍ ԶԱՆՁԱՒ, ԱՌ Ի ՀԵԱ-
ՌԱԵԼ ՍՈՅԱ ՄԱՐՄՆԱՒՈ-
Ր ՏԵՐԱՆՑ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ
ՍՈՒՐԲ ԽԱՉԻՍ ԾԱՌԱՅԵՍ-
ՑԵՆ ՄԻՆՉԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ:

Հա. երես
ԵՒ ՈՐ ԶԳԻՐՍ ՏՈՒԱՔ
ԳՐԵԼ, ԵՍ ՅՈՒՆԱՆԷՍ ՔԱ-
ՀԱՆԱ ԵՒ ՅՈՀԱՆԷՍ, -ԷՐԵՒՄ
Ա(?), ՍԱՐԳԻՍ ԵՒ ԱՐԵՒԳԱ-
Մ ԵՒ ՄԻՐԱՆԳԱՌ(?) ԵՒ ՈՐ Զ-
ԳԻՐՍ ԳՐԵՑԱՒ ՄԱՇՏՈՅՑ,
ՍԱՂԱԹԻԷԼ, ՅՈՀԱՆԷՍ[22]:

Նույն կոթողի սյունը

Արձանագրությունն իր գրչությամբ և հնագրությամբ միանգամայն հարիր է 7-րդ դարին: Նրանում բառերը չեն սղված և կապագրեր գրեթե չունի, որպիսիք արձանագրության հնության հատկանիշներից են:

Արձանագրության Ա, Կ, Գ, Թ, Զ, Ց, Տ, Խ և այլ մի շարք տառերի համեմատությունը Տեկորի, Օձունի, Պտղնու, Հռիփսիմեի, Բագավանի, Մաստարայի և 5—7-րդ դդ. այլ արձանագրությունների հետ վկայում է, որ այն անկասկած համապատասխանում է այդ դարերի գրչության արվեստին[23]: Բացի այդ, արձանագրության մեջ հիշատակված Կոստանդինը, որը մեծարված է «աստուածասէր եւ բարեպաշտ»

[21] «Զխաչս» հնարավոր է վերականգնել նաև «ԶՆՇԱՆՍ»:

[22] Առնում ենք մեր հավաքածուից: Այս արձանագրությունը Ն. Մառի ուսերեն թարգմանությամբ հրատարակել է Մ. Ռոստովցևը որոշ բացթողումներով (տե՛ս М. Ростовцевъ, Аparанская... стр. 30—31.

[23] Ա. Ն. Ճահինյան, «Արուճի VII դ. տաճարի շինարարական արձանագրության վերծանման առթիվ», «Էրեբեր», № 1, 1971 թ., էջ 80:

մակդիրով, Բյուզանդիայի կայսր և Հերակլի թոռ՝ Կոստանդ-Կոստանդին 2-րդն է (641—668 թթ.)։ Նույն այս Կոստանդնի մասին է ակնարկված նաև Արուճի 7-րդ դարի տաճարի հայտնի շինարարական արձանագրության մեջ, ինչպես նշում է ակադ. Հ. Օրբելին[24]։

Նույն այս Կոստանդնի անունով արձանագրությունը թվագրված լինելու մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ երբ 654 թվականին Կոստանդին 2-րդը մտնում է Հայաստան, նրան ընդառաջ գնացող ու համակրող հայ նախարարների մեջ էին նաև Գնթունիք[25]։ Հետևաբար կասկածից վեր է, որ Անձավ գյուղը Գնթունի Տիրոջին որպես պարգև տրվել է մինչև 655 թվականը, երբ Կոստանդին կայսրը հայերի նկատմամբ դեռևս հովանավորող քաղաքականություն էր վարում։ Այդ նույն դարում էլ Գնթունի Տիրոջն իր հերթին Անձավ գյուղը նվիրում է սուրբ Խաչին։ Բացի այդ, պարզ է, որ գյուղի նման մի նվիրատվություն հազիվ թե կատարվեր 8—9-րդ դդ. և այդ առթիվ նույնիսկ կոթող կանգնեցվեր, քանզի արդեն այդ ժամանակ արաբները նվաճել և իրենց ծանր գերիշխանությունն էին հաստատել ամբողջ Հայաստանում։ Ուրեմն Գեղամա լեռների հիշյալ կոթողները կարող էին կերտվել, իսկ Անձավ գյուղն էլ կարող էր նվիրվել միայն ու միայն արաբական գերիշխանությունից առաջ և նույն այդ Կոստանդնի ժամանակ, որն իշխում էր Բյուզանդիայում 641—668 թթ.-ին։

Անձավի կոթողները չէին կարող կանգնեցվել 10-րդ դարում և չթվագրվել հայկական տոմարով, քանզի այդ ժամանակ Հայաստանում շատ տարածված և ընդհանուր ճանաչում էր գտել հայկական թվագրությունը։ Եվ բացի այդ 10-րդ դարի բոլոր հայերեն արձանագրությունները թվագրվել են գերազանցապես հայկական մեծ տոմարով և կամ էլ միայն հայ թագավորների ու իշխանների, հոգևոր առաջնորդների անունների գրեթե պարտադիր հիշատակությամբ։ Համենայն դեպս հակառակն ապացուցող հայերեն վիմագրական ոչ մի փաստ չունենք։

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ 7-րդ դարից և 8-րդ դարի 1-ին քառորդից հետո այլևս չունենք քառակող-պատկերազարդ և հուշասյուն-կոթողներ, որովհետև, ինչպես նշեցինք վերևում, 8-րդ դարի սկզբից Հայաստանում տարածվում են խաչքարերը, որոնք հետզհետե լիիրավ կերպով փոխարինում են իրենց նախորդող կոթողային բոլոր տեսակի հուշարձաններին։

7-րդ դարի նույն այդ ժամանակներին է պատկանում Անձավի երկրորդ հուշասյուն-կոթողը, որի միայն արձանագիր խարիսխն է պահպանվել։ Արձանագրությունը հետևյալն է. մեր վերծանմամբ.

ԵՍ ՍԱՂԱԹԻԷԼ ԱՌԱՋՆ-
ՈՐԴ, ԵԴԻ ԿԱՆԳՆԵԼ ՋՍՈՒ-
ՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՍ Ի ԲԱՐ-
ԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԻ-
(Ս) ԻՄՈ ԴՐԱՆԵԿԱՑ ԱՄԷՆ[26]։

Երկու կոթողների արձանագրություններում հիշատակված Սաղաթիելները հավանաբար միևնույն անձնավորությունն է. մեկում նա հանդես է գալիս որպես վկա, իսկ մյուսում՝ որպես շրջանի առաջնորդ և իր իսկ կանգնեցրած կոթողի պատվիրատու։ Այս հանգամանքը ևս խոսում է այն մասին, որ Անձավի երկու հուշասյուն-կոթողներն էլ կերտվել են գրեթե նույն ժամանակներում և հավանաբար նույն վարպետների ձեռքով, որովհետև չափերով և հորինվածքով իրար խիստ նման են։

Այսպիսով, ի մի բերելով վերոհիշյալ հանգամանքները և արձանագրական ու մատենագրական ակնհայտ տվյալները, գալիս ենք հետևյալ եզրակացության.

1. Գեղամա լեռների վերոհիշյալ երկու կոթողներն էլ կերտվել ու կանգնեցվել են 7-րդ դարի 50-ական թթ.։ Դրանք մեզ հասած առայժմ հնագույն հայերեն արձանագրությամբ կոթողային հուշարձաններն են։

2. Այդ կոթողները կանգնեցվել են տարբեր շարժառիթներով՝ մեկը Անձավ գյուղի նվիրատվության առթիվ, իսկ երկրորդը դրվել է բնակավայրի սահմանների վրա, որպես սահմանաքար։ Դրանք հանդիսացել են նաև պաշտամունքային կոթողներ։

3. Ուշագրավ է, որ երկու կոթողներն էլ կոչվել են սուրբ Երրորդության անունով, որոնց անվանումների մասին ստույգ տեղեկություններ են հաղորդում մեր պատմիչները։

4. Քանի որ մեր պատմիչները տարբեր շարժառիթներ են վերագրել IV—VII դդ. վաղ քրիստոնեական կոթողներին, Անձավի սույն կոթողների անվիճելի հիշյալ արձանագրությունների հետ մեկտեղ հնարավոր է դառնում նույնպիսի նպատակային հատկանիշներ վերագրել նաև քառակող-պատկերազարդ կոթողներին։

[24] И. А. Орбели, Избранные труды, стр. 402.

[25] Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 142։

[26] Առնում ենք մեր հավաքածուից։ Տե՛ս մեր դիսերտացիոն աշխատանքը՝ «Հայկական խաչքարերը 9—13-րդ դդ.», 1970 թ.։



ՎՐԵԺ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ

FREND W. H. C. 'THE RISE OF THE MONOPHYSITE MOVEMENT' (CAMBRIDGE UNIVERSITY PRESS, 1972), XXVII + 405

Պրոֆ. Ֆրենդի այս նոր գիրքը՝ «Միաբնակ շարժման առաջացումը», նշանակալից ներդրում է եկեղեցական և վաղ Բյուզանդական Կայսրության պատմության ուսումնասիրության համար: Այն բարդ քաղաքական, եկեղեցական և քրիստոսաբանական վեճերը, Քաղկեդոնից սկսած մինչև Սրբազան արշավանքների ժամանակաշրջանը, ներկայացվում է այս գրքում իր բոլոր մանրամասնություններով և ամենայն ճշգրտությամբ, որն, անշուշտ, վկայում է հեղինակի հմտության մասին աստվածաբանության և եկեղեցական պատմության ասպարեզում: Գիրքը պարունակում է գրականության ընդարձակ ցուցակ առաջնակարգ և երկրորդական աղբյուրների միաբնակ շարժման վերաբերյալ: Այս լայնածավալ գրականության համագումարումը մեկ հատորի մեջ առարկայականորեն գրախոսվող գիրքը դարձնում է լավագույն գիտական ուսումնասիրություններից մեկը տվյալ շարժման առնչությամբ գրված: Հին արևելյան եկեղեցիների և արևելյան ուղղափառ եկեղեցիների տեսակետից այն առավել նշանակալից է դառնում, երբ լուրջ աստվածաբանական խորհրդակցություններ են տեղի ունենում երկու եկեղեցական հատվածների ներկայացուցիչների միջև:

Պրոֆ. Ֆրենդը շատ համոզիչ կերպով մի անգամ ևս շեշտում է այն կետը, որ միաբնակ շարժման գլխավոր և առաջնակարգ ուղեցույցն ուղղափառ դավանանքի և ճշգրիտ տերմինաբանության հաստատումն էր: Նա գիտակցորեն, փաստերի հիման վրա մերժում է այն բազմաթիվ բյուզանդական և եկեղեցական պատմիչների տեսությունը (կրկնված շատերի կողմից), որ միաբնակությունն արտահայտում է փոքրամասնությունների (ասորի, հայ, ղպտի) կենտրոնախույս և քաղաքական անկախություն ունենալու ձգտումները: Ըստ հեղինակի ճիշտ չէր լինի միաբնակ շարժումը սահմանափակել և այն ներկայացնել որպես մի շարժում, որ արտահայտում է տվյալ փոքրամասնությունների տնտեսական-քաղաքական դժգոհությունները բյուզանդական քաղաքական ճնշումների դեմ: Պրոֆ. Ֆրենդը համոզված է, որ մի տեսակ ընդհանուր պահանջ կար քաղաքական և եկեղեցական միության համար, որ առկա է արևելյան աստվածաբանական մտածողության մեջ՝ «Աստված է նախատեսել ներդաշնակությունը և համերաշխությունը եկեղեցու և պետության միջև՝ կայսրի նախախնամական հրկողության ներքո» (էջ 87): Հակաքաղկեդոնականները նույնքան շահագրգռված էին միության հաստատման համար, որքան ինքը կայսրը· «Որքան ժամանակ որ առկա էր այն հույսը, որ կայսրերը պիտի կարողանան հերքել Քաղկեդոնի ժողովը և նրա որոշումները, միաբնակ եկեղեցու առաջնորդներն իրենց առանձին եկեղեցիները չհաստատեցին, այլ պահանջեցին իրենց հետևորդներից, որ հնազանդ մնան կայսրին» (էջ 78): Եվ դարձյալ շարունակում է հեղինակը. ««Մի բնություն» դավանանքը ենթադրում էր կայսերական իշխանությունը մարդկության վրա, սակայն ազատ և ան-

կախ քաղկեդոնականության բոլոր դուալիստական հետքերից»: Մի համոզված միաբնակ «համաձայն չէր բաժանումի» (էջ 357):

Բաց, վերջապես, միաբնակ եկեղեցիներն առաջացան, երբ՝ ա) կայսերական բոլոր ջանքերը մի միջին ելք գտնելու ձախողվեցին, բ) երբ միաբնակները համոզվեցին, որ այլևս անհնարին պիտի լինի համոզել կայսրին կամ քաղկեդոնականներին հրաժարվել Չորրորդ տիեզերական ժողովից, և գ) երբ կայսերական քաղաքականությունը դիմեց հալածանքի հատկապես Հուստինիանոս կայսրի իշխանության օրով միաբնակների հանդեպ:

Պրոֆ. Ֆրենդն իր այս գրքով ցուցադրում է իր կատարյալ տիրապետումը այն քրիստոսաբանական դժվար և փափուկ հարցերին, որ զբաղեցրեց այդ դարաշրջանի մեծագույն մտածողներին:

Սակայն գրախոսողիս պարտքը պետք է լինի ճշտել մի շատ ոչ արդարացի և մի քիչ անտեղի այպանումը, որ հեղինակը թույլ է տալիս, երբ գրում է Կյուրեղ Աղեքսանդրացու քրիստոսաբանության մասին. «Կյուրեղի Քրիստոսը մնում է որպես վերացականություն, իր մարդկային բնությունն այնքան սերտ հարաբերության մեջ է աստվածային աշխարհի հետ, որ անհշմարելի է մնում մարդկային չափանիշներով, և այն փրկությունը, որ խոստացվում է մարդկությանը, միայն հասկանալի կլինի պանթեիստիկ միջավայրում, որտեղ հոգի-ճակատագիրը կլանվում է այն կյանքի աղբյուրի մեջ, որից առաջացավ: Ձկա աստվածաշնչական հիմք իր մտածողության մեջ...» (էջ 125):

Արևմտյան եկեղեցին համեմատաբար աղքատացած էր լատին աստվածաբանության և տարված կարգապահական խնդիրներով. ոչ կարող էր և ոչ էլ երբեք իրապես ցանկացավ քայլ պահել հույն քրիստոսաբանական մտածողության զարգացման հետ (էջ 295—296): Հակառակ այն օրինական համաձայնության երկաբնակների և արևելյան քաղկեդոնականների միջև, նրանց միջև իրականության մեջ առաջացավ շատ ավելի փափուկ տարբերություններ. «Որքան որ նուրբ և մշակված լինեն այն տարաձայնությունները» (էջ 275), հիմնական արգելքը միության շարունակեց լինել քրիստոսաբանական տերմինաբանությունը և Քաղկեդոնի ժողովի որոշումների ուղղափառության մակարդակը: Մեկ անգամ որ բանակցությունները դադարեցին, միաբնակ աստվածաբանությունը սկսեց նահանջել և «ղպտի և ասորի աստվածաբանները դժվարություն ունեցան մշակելու համար հիմնական տերմինաբանություն, նույնիսկ այն մի շարք շատ հիմնական քրիստոսաբանական տերմինների համար, որ միայն գոյություն ուներ հունարեն լեզվով:

Իր վերջաբանի մեջ հեղինակը նշում է ամբողջ միաբնակ շարժման առեղծվածը, այն, որ «ինչքան էլ որ միաբնակների ատելությունը Կ. Պոլսի նկատմամբ զարգացավ, այնուամենայնիվ նրանք պիտի ուզեցային շարունակել իրենց բանակցությունները քաղկեդոնականների հետ, որպեսզի հնարավորություն ստեղծվեր անընդհատ վերամշակելու և կատարելագործելու իրենց դավանանքը, որ միայն կարելի պիտի լիներ մեծագույն մտածողների մտքերի փոխանակության շնորհիվ» (էջ 357): Բաժանված Բյուզանդիոնից, միաբնակների ավանդույթները դարձավ զուտ գոյատևման կռվաններ, մահմեդական կրոնի շփման զոհ:

Հայ եկեղեցուն նվիրված գլուխը (էջ 308—315) հեղինակը հիմնականում գործածում է գեր. Գ. Սարգսյանի «Քաղկեդոնի ժողովը և հայ եկեղեցին» և Վ. Իգլիսյանի «Քաղկեդոն և հայ եկեղեցին» ուսումնասիրությունները:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

1979 թվականի նոյեմբերի 25-ի երեկոյան Վենետիկի «Կա՛ Ջուստինիան» շքեղ դահլիճում, բացառիկ հանդիսավորությամբ, նշվել է երանաշնորհ ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը:

Հանդիսությանը, որին ներկա է եղել եկեղեցական և աշխարհական բարձրաստիճան պաշտոնական անձնավորություններից, ինչպես նաև հայ և օտարազգի մտավորականներից ու հավատացյալներից բաղկացած մի հոծ բազմություն, նախագահել է կարդինալ Պոլ Ֆիլիպը՝ իր շուրջն ունենալով Վենետիկի եկեղեցական, քաղաքային, զինվորական իշխանությանց մեծագույն ներկայացուցիչները՝ կուսակալ, քաղաքագլուխ, ծովակալ, ոստիկանապետ, ծերակուտականներ և երեսփոխաններ: Պատվո աթոռներ են տրամադրված եղել միլանահայ համայնքի զանազան վարչությունների ներկայացուցիչներին: Հանդիսությանը ներկա են եղել նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Պողոս վրդ. Անանյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը, Ֆրանսիայի հայ կաթողիկե էկզարխության առաքելական կառավարիչ Նիկողոս ծ. վրդ. Քեհյայանը, ինչպես նաև Վենետիկի հունական համայնքի հոգևոր առաջնորդ հայր Մելիսիանոսը և բազմաթիվ հյուպատոսներ:

Տոնակատարությունը կազմակերպված է եղել հայ եկեղեցու մեծանուն Հայրապետի լուսաշող անձն ու եկեղեցական, գիտական, մշակութային բեղմնավոր գործունեությունը օտար մտավորական շրջանակներին ծանոթացնելու առաջադրությամբ:

Հանդիսության բացումը իտալերեն լեզվով կատարել է Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար հայր Ներսես Տեր-Ներսեսյանը՝ իր հակիրճ խոսքի մեջ վեր հանելով Շնորհալու պայծառ դեմքը որպես հայոց «փոքր ածուծ»-ի՝ աստվածատուր շնորհներով պսպղացող անթառամ մեկ ծաղիկը, որի քաղցրաշունչ երգերը, հավատավոր հոգու մաքուր ակունքներից բխած, ջերմացրել են բազում հայ սերունդների սրտերը:

Հավարտ իր խոսքի, հայր սուրբն ընթերցել է (իտալերեն թարգմանությամբ) ս. Ներսես Շնորհալու 800-ամյակի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետեվյալ շնորհավորական հեռագիրը՝ ուղղված Վենետիկի Մխիթարյան ուխտի ընդհանուր աբբահորը.

«Սուրբ Էջմիածնեն հրճվանքով կառաքենք Մեր օրհնությունը ձեր հանդիսություններուն, նվիրված Ամենայն Հայոց Շնորհալի Ներսես Հայրապետի խնկելի հիշատակին և անոր հոգեշեն մեծ ժառանգության:

Այս երջանիկ առիթով՝ Մեր եղբայրական

ողջույնը և սերը Ձերդ Գերապայծառության, հանդիսությանց մասնակցող բարձրաստիճան կարդինալ և եպիսկոպոս հայրերուն, ձեր ուխտի ծրաջան միաբաններուն և ներկա համայն Մեր սիրեցյալ ժողովուրդին։

Թող Աստված միշտ փառավոր պահե Շնորհաի Հայրապետի սրբազան երգն ու խոսքը՝ իբրև հավերժական «Առաւօտ լուսոյ» մեր ժողովուրդի հոգևոր կյանքի։

«Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգւով»։

Հայոց Հայրապետի սույն հեռագիրը ներկաները ողջունել են բուռն ծափահարություններով։

Հանդիսության գլխավոր բանախոսն է եղել «Բազմավեպ» ամսագրի բազմավաստակ խմբագրապետ, նորոգ հանգուցյալ հայր Մեսրոպ վրդ. Ճանաշյանը, որը իտալերեն լեզվով վերլուծել է Շնորհալու անձն ու ստեղծագործական ժառանգությունը՝ բնութագրելով նրան որպես միջնադարի հայ մեծանուն բանաստեղծ-երաժշտի, որպես եկեղեցական անխոնջ գործչի և եկեղեցիների միության գաղափարի եռանդուն ջատագովի։

Վենետիկի ս. Մարկոս տաճարի բազմամարդ երգչախումբը, խմբավար Ա. Պրավիի ղեկավարությամբ, մեծ հաջողությամբ կատարել է «Սուրբ, սուրբ»-ը և մի շարք սրբազան երգեր Եկմալյանից ու Կոմիտաս վարդապետից։

Այս առթիվ իտալերեն թարգմանությամբ լույս է ընծայվել հանդիսության ծրագրի մեջ մտնող բոլոր երգերի տեքստերը պարունակող մի գրքույկ՝ գեղարվեստական հակիրճ բացատրություններով և երգերի մեկնողական հարաստություններով՝ օտար ունկնդիրներին հաղորդակից դարձնելու համար հայկական երգերի բովանդակությանն ու ոգուն։

«Քրիստոս ի մէջ», «Քրիստոս պատարագեալ», «Ով զարմանալի» և «Ցիշեսցուք ի գիշերի» կոմիտասյան երգերի կատարումը ջերմ հիացումով և հոգեկան մեծ բավարարությամբ է ունկնդրվել բոլոր հանդիսականների կողմից։

Հանդիսության երկրորդ բաժնում կատարվել են հայկական ժողովրդական մի շարք երգեր՝ Կոմիտասի «Գարուն ա»-ն, «Անձրևն եկավ»-ը, «Ամպել ա»-ն, «Կուժն առա»-ն, Գրիգոր Սյունու «Վուշ-վուշ»-ը և Բարսեղ Կանաչյանի «Օրոր»-ը։

Դերասանուհի Սանդրա Մարտինին և դերասան Մարիո Ծանոտտին հիանալի արտահայտչականությամբ և ներշնչանքով արտասանել են Ավագ ուրբաթի «Այսօր անճառ» շարականից երկար մի հատված՝ հուզելով ներկաներին և արժանանալով երկարատև ծափահարությունների։

Այս առթիվ ներկաները ծանոթացել են նաև Շնորհալու բանաստեղծական տաղանդի ընտիր նմուշներին, գողտրիկ մի հատորի մեջ ամփոփված, որ իտալերեն լեզվով թարգմանել ու խնամքով հրատարակել է հայր Մեսրոպ վրդ. Ճանաշյանը։ Երանաշնորհ Հայրապետի մահվան 800-ամյակի կապակցությամբ։

Փակման խոսքով հանդես է եկել օրվա հանդիսության նախագահ կարդինալ Պոլ Ֆիլիպը, որը ջերմ դրվատանքով և անխառն հիացմունքով ոգեկոչել է Հայոց մեծ Հայրապետի առաքելանման սուրբ անձը և սերունդների երախտագիտությանն ու հիացմունքին արժանի նրա փառավոր վաստակը։ Հավարտ իր խոսքերի, նրա քարտուղար գերշ. Ռենատո Բրունին ընթերցել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Պողոս Զ Սրբազան Պապի հետևյալ շնորհավորական հեռագիրը՝ ուղղված Վենետիկում Շնորհալու 800-ամյակի առթիվ կազմակերպված հանդիսությանց նախագահին.

«Հայոց կաթողիկոս սուրբ Ներսես Շնորհալու երջանիկ փոխման 800-ամյակի հանդիսավոր տոնակատարությանց առթիվ, Սրբազան Քահանայապետը, խորապես շնորհապարտ այն աղոթքների համար, որ բարձրացնում եք համայն սուրբ եկեղեցու և ցանկալի միության ի նպաստ, հայտնում է իր հայրական ամենաջերմ շնորհավորանքը Վենետիկի Մխիթարյան ուխտի սիրելի որդիներին՝ հայցելով Աստծուց առատագեղ շնորհաբաշխում ի զարգացումն իրենց միանձնական կյանքի նվիրումի և որդիական պաշտամունքի հանդեպ սուրբ եկեղեցու և Քրիստոսի փոխանորդի, շնորհում է ի սրտե առաքելական սրբարար օրհնություն, որ սիրահոժար հաղորդում է, Ձեր վսեմաշուք Տերության միջոցով, Վենետիկի ծիրանավոր Պատրիարքին, դարադարձի տոնակատարությանը մասնակցող քաղաքային և եկեղեցական իշխանություններին, իտալահայ համայնքին և ողջ հավատացյալներին»։

Վենետիկում տեղի ունեցած սույն փառապանծ տոնակատարությանը արձագանքել են բազմաթիվ իտալական թերթեր։ Վենետիկի զանազան մշակութային կազմակերպություններ հեռախոսով և հեռագրերով հաղորդել են իրենց ջերմ գնահատանքը և հիացմունքը հանդեպ հայ մշակույթի, հայ եկեղեցու և նրա մեծ Հայրապետ ս. Ներսես Շնորհալու։

Նոյեմբերի 26-ին, այս կապակցությամբ, Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Պողոս ծ. վրդ. Անանյանի հրա-

վերով, ս. Ղազարում տեղի է ունեցել պաշտոնական ընդունելություն՝ ի պատիվ Շնորհալու հանդիսությանց մասնակցած եկեղեցական և քաղաքային հյուրերի, արվեստագետների և հայ համայնքի ներկայացուցիչների:

Միլան քաղաքում պատրաստություններ են տեսնվում առաջիկայում ըստ արժանավույն տոնախմբելու համար Շնորհալու երանական վախճանումի ութերորդ դարադարձը:

ՌԱԴԻՈ ՎԱՏԻԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ 800-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1974 թվականի հունվարի 20-ին, կիրակի օրը, առավոտյան, Վատիկանի ռադիոն հաղորդել է Վատիկանի ռադիո-մատուռի մեջ ս. Ներսես Շնորհալու հիշատակին տեղի ունեցած հայկական պատարագը, որ մատուցել է Հալեպի կաթողիկե վիճակավոր տ. Գևորգ արքեպիսկոպոս Լայեքյանը: Այս առթիվ հաղորդվել է նաև ամեն. Պալթանյան պատրիարքի խոսքը՝ հիմնված առաքյալի հավատի խուստովանությանը ընդելուզված շնորհալիական ոգևորության, նվիրումի, հավատարմության, սիրո, համերաշխության ոգու և դարուսվոր պատգամի վրա:

Նույն ռադիոն հունվարի 18-ից մինչև 25-ը, «Քրիստոնյաների միության շաբաթ»-վա առթիվ, երեսուներկու լեզուներով զանազան հաղորդումներ է տվել ս. Ներսես Շնորհալու կյանքի, միութենական գործունեության և թողած գրական ժառանգության վերաբերյալ՝ քաղելով Հռոմի Լևոնյան վարժարանի տեսուչ հայր Ներսես ծ. վրդ. Սեթյանի՝ Շնորհալու 800-ամյակի կապակցությամբ պատրաստած ուսումնասիրությունից:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀՈՒՇԱՀԱՆԴԵՍ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՍԵՅՆԹ ՓԱԹՐԻՔՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ

Սույն թվականի մայիսի 3-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Նյու-Յորք քաղաքի քրիստոնյա համայնքները, նախաձեռնությամբ Ամերիկայի հայոց առաջնորդարանի, տեղի կաթոլիկ Սեյնթ Փաթրիքս Մայր տաճարում միասնաբար պատվել են հիշատակը Հայոց երանելաշատ Հայրապետ ս. Ներսես Շնորհալու:

Հանդիսությանը, որին նախագահել են Ամերիկայի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկ. Մանուկյանը և հոռոմեական կաթոլիկ եկեղեցու կարդինալ, Նյու-Յորքի արքեպիսկ. Թերենս Քուքը, ներկա են եղել ավելի քան 4.000 հայ և օտար հավատացյալներ:

Հուշահանդեսն սկսվել է թափորով, որին մասնակցել են ամերիկահայոց ողջ եկեղեցական դասը՝ գլխավորությամբ առաջնորդ սրբազանի և թեմում գտնվող հայ այլ եպիսկոպոսների, հոռոմեական կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչները՝ գլխավորությամբ կարդինալ Թերենս Քուքի, Անտիոքի ասորական ուղղափառ եկեղեցու ամերիկյան թեմերի առաջնորդ Մար Աթանասիոս Սամուել արքեպիսկոպոսը, Լոնգ Այլընդի եպիսկոպոսական եկեղեցու առաջնորդ Ջոնաթան Շերման եպիսկոպոսը, Ամերիկայի հույն օրթոդոքս եկեղեցու առաջնորդի ներկայացուցիչ Սիլասը, եթովպական ուղղափառ եկեղեցու Հյուսիսային և Հարավային Ամերիկայի առաջնորդ Աբունա Աթանասիոս եպիսկոպոսը, Նյու-Յորքի Սեյնթ Ջոն եպիսկոպոսական Մայր եկեղեցու ավագերեց կանոնիկոս Էդուարդ Ուեսթը, ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի գլխավոր քարտուղարի փոխանորդ դոկտ. Դավիթ Հանթերը, Նյու-Յորք քաղաքի եկեղեցիների խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Դոն Փոթերը, Նյու-Յորքի հայ կաթողիկե համայնքի հոգևոր հովիվ հայր Գրիգոր Կերկերյանը, Ալեքսանդրիայի ղպտիական ուղղափառ եկեղեցու Ամերիկայի թեմի առաջնորդ հայր Գաբրիել Աբդելսայեդը, հնդկական մալաբար եկեղեցու Ամերիկայի առաջնորդ հայր Կ. Մ. Սիմոնը, Նյու-Յորք քաղաքի ռուսական օրթոդոքս Մայր եկեղեցու ավագերեց հայր Անատոլի Կազնովեցկին, Նյու-Յորքի հայ ավետարանական համայնքի վերապատվելի Ս. Սյուլսեյանը և ուրիշներ:

Արարողությունն սկսվել է «Հրաշափառ»-ով: Ապա հսկա տաճարի կամարների տակ «Կոմիտաս» երգչախմբի կատարմամբ հնչել են Շնորհալու հոգեպարար տաղերն ու շարականները՝ խմբավար դոկտ. Արթուր Միսյանի ղեկավարությամբ: Այնուհետև տ. Սիոն արքեպիսկ. Մանուկյանն ընթերցել է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի կապակցությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի գրած սրբատառ կոնդակը, որ ներկաներն ունկնդրել են լարված հետաքրքրությամբ: Կատարվել են սուրբ Գրոց ընթերցումներ և հատվածներ կարդացվել Շնորհալու «Հաւատով խուստովանիմ»-ից:

Արարողության ընթացքում հակիրճ և բովանդակալից մի ուղերձ է արտասանել կարդինալ Թերենս Քուքը՝ մասնավորապես շեշտելով Շնորհալի Հայրապետի քարոզած



Էկումենին ուշադրությունը Սկզբ Փաթրիրք Մայր տաճարում

եղբայրական սիրո ոգուց թխող աննյութական կապի գոյությունը, որ ներկայումս ոգեպես միացնում է Նյու-Յորքի ս. Վարդան և Սեյնթ Փաթրիքս Մայր տաճարները: Այսպա ճառերով հանդես են եկել տ. Թորգոմ արքեպսկ. Մանուկյանը և տ. Տիրան արքեպսկ. Ներսոյանը՝ առաջինը ներկայացնելով Շնորհալուն որպես քրիստոնեական սիրո մեծ քարոզչի, իսկ երկրորդը՝ կատարելով հանգամանալից պատմական վերլուծությունը Շնորհալու հետապնդած միութենական աշխատանքների: Հանդիսության ընթացքում Հայոց մեծ Հայրապետին ուղղված մեծարանքի և գնահատության սրտառուչ խոսք է ասել նաև հռոմեական կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչ, Վաշինգտոնի արքեպսկ. Վիլյամ Բոմը:

Հիշատակի սույն հանդիսության ակտիվ ս. Վարդան Մայր տաճարի երգչախումբը, խմբավար Գրիգոր Փիտեճյանի ղեկավարությամբ, գեղարվեստական բարձր մակարդակով կատարել է Կոմիտասի «Հայրապետական մաղթանք»-ը, «Ցիշեսցուք ի գիշերի»-ն, հատվածներ հայոց պատարագից, Շահան Պերպերյանի «Լուսավորչի կանթեղը», Բրամսի «Ալտո Ռապսոդիա»-ն, Հարությունյան շարականը, «Նորահրաշ»-ը, Եկմալյանի «Հայր մեր»-ը և այլ մեղեդիներ: Սրբազան երգերի ծրագրին իրենց մասնակցությունն են բերել ծանոթ երգչուհի Լիլի Զուգասզյանը և երգեհոնահար Հայկ Մուրտիրոսյանը:

Հիշատակի սույն մեծահանդես արարողությանը բազմաթիվ հարանվանությունների մասնակցությունը համաքրիստոնեական չափանիշով դրսևորված հարգանքի և գնահատության մի վառ ապացույց է հայոց մեծագործ կաթողիկոսի անձի և գործի հանդեպ:

Տ. Թերենս Քուք և տ. Թորգոմ արքեպիսկոպոսները հանդիսության ժամանակ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՇՆՈՐՀԱԼՈՒ 800-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի կապակցությամբ Նյու-Յորքի հայոց առաջնորդարանի թեմական հանձնախումբը, որը նշանակված է եղել թեմական առաջնորդ տ. Թորգոմ արքեպսկ. Մանուկյանի կողմից, կազմակերպել է կրոնական, գիտական և գեղարվեստական բնույթի մի շարք ձեռնարկումներ, որոնք պարբերաբար տեղի են ունեցել Նյու-Յորքում՝ սկսած անցյալ տարվա սեպտեմբեր ամսից:

Հոբելյանական այդ միջոցառումներից առաջինը եղել է 1973 թվականի սեպտեմբերի 4-ին Նյու-Յորքի հայոց առաջնորդարանում տեղի ունեցած դասախոսությունների շարքը, որ տվել է Հռոմի Լևոնյան վարժարանի տեսուչ հայր Ներսես ծ. վրդ. Սեթյանը:

Սույն թվականի մարտի 17-ին, կիրակի օրը, Նյու-Յորքի ս. Վարդան Մայր տաճարում Շնորհալու կյանքի և գործունեության մասին տրվել են երկու գիտական զեկուցումներ, առաջինը Մոնրեալի Մակգիլ համալսարանի հայագիտական ուսման պրոֆեսոր դոկտ. Գևորգ Պաղճյանի կողմից՝ հայերեն լեզվով, երկրորդը՝ Օհայո նահանգի Դեյթըն համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր դոկտ. Հակոբ Ներսոյանի կողմից՝ անգլերեն լեզվով:

Նույն օրը «Կոմիտաս» թեմական երգչախումբը, դոկտ. Արթուր Միսյանի ղեկավարությամբ, տվել է մի համերգ՝ բաղկացած Շնորհալու տաղերից և շարականներից: Ներկաները սույն հանդեսին իրենց մասնակցությունն են բերել՝ Շնորհալու աղոթքներից կատարելով ընթերցումներ հայերեն և անգլերեն լեզուներով:

Ապրիլի 28-ին, կիրակի օրը, ս. Վարդան Մայր տաճարի օծման 8-րդ տարեդարձի առիթով, տ. Սիոն արքեպսկ. Մանուկյանը մատուցել է ս. պատարագ և օծել տաճարի երկու խորաններում գետեղված ս. Ներսես Շնորհալու և ս. Գրիգոր Լուսավորչի սրբապատկերները:

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ «ԿՈԼՈՄԲԻԱ ԲՐՈԴՔԵՍԹԻՆԳ» ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԿԱՅԱՆԸ ԴՐՎԱՏՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒՆ

Սույն թվականի մայիսի 5-ին Նյու-Յորքի «Կոլումբիա Բրոդքեսթինգ» հեռուստատեսային կայանը իր կիրակնօրյա կրոնական և եկեղեցական հաղորդումների կեսժամյա ծրագիրը հատկացրել է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին: Կազմակերպված հաղորդումը լավ մշակված և խնամքով նախապատրաստված բովանդակալից մի միջոցառում է եղել:

Գեղարվեստական ծրագիրն սկսվել է Շնորհալու հայտնի աղոթքների և քանտեղծությունների ընթերցումով, որ կատարել է ամերիկահայ հանրածանոթ երգիչ Մայքլ Քրմոյանը անգլերեն լեզվով: Ընթերցմանը զուգընթաց հեռուստատեսային էկրանի վրա ցուցադրվել են Հայաստանի պատմական տարբեր վայրերն ու հուշարձանները, ինչպես Աղթամարի ս. Խաչ եկեղեցին և այլ կիսավեր վանքեր ու եկեղեցիներ: Մասնավորապես տպավորիչ և հուզիչ է եղել այն, որ երբ Հայաստանի ավերված վայրերից տեսարաններ են ցուցադրվել, հեռուստադիտողները, Քրմոյանի արտասանությամբ, միաժամանակ լսել են Շնորհալու սիրո և խաղաղության պատգամները՝ ուղղված իր ժողովրդին:

Հաղորդմանը մասնակցել է Նյու-Յորքի հայոց առաջնորդարանի վաթսուն հոգուց բաղկացած արական երգչախումբը՝ դոկտ. Արթուր Միսյանի ղեկավարությամբ: Կատարվել են Շնորհալու շարականներն ու մեղեդիները երաժշտական բարձր մակարդակով:

Հաղորդման ընթացքում տեղի է ունեցել հարցազրույց տ. Թորգոմ արքեպսկ. Մանուկյանի, տ. Տիրան արքեպսկ. Ներսոյանի և հարցազրույցի ղեկավար դոկտ. Ջորջ Քրոթերսի միջև: Հարցազրույցի ընթացքում հայ եկեղեցու երկու բարձրաստիճան հոգևորականները բնութագրել են Շնորհալու եկեղեցական գործունեության համաքրիստոնեական պատմական նշանակությունը՝ միաժամանակ պարզելով նրա ապրած ժամանակաշրջանի քաղաքական կացությունը:

Կրոնական հաղորդումների բաժնի վարիչ Ալեն Հարպերը հաղորդման սկզբում, իր բացման խոսքի մեջ ներկայացնելով Շնորհալու կերպարը որպես հմուտ աստվածաբանի և իր ժամանակաշրջանի եկեղեցական մեծ գործչի, ասել է.

«Թեև Շնորհալին ապրել է մեզանից 800 տարի առաջ, սակայն նրա գրվածքները և եկեղեցիների միջև խաղաղություն ու միություն հաստատելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերը նրան դարձնում են արդի էկումենիկ շարժման հախակարապետը: Նրա բարեպաշտությունն ու գիտական մեծ պաշարը ժամանակակիցներին մղել են նրան կոչելու Շնորհալի»:

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Սույն թվականի հունիսի 4—8-ը Բուխարեստի Զեռնիկա վանքում, Ե. Հ. Խ.-ի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի նախաձեռնությամբ, տեղի է ունեցել օրթոդոքս եկեղեցիների խորհրդակցական մի հանդիպում, որի նպատակն է եղել պատրաստել մի հուշագիր «Խոստովանել Քրիստոսին այսօր» նյութի շուրջ՝ այն ներկայացնելու համար 1975-ին Զակարտայում կայանալիք Ե. Հ. Խ.-ի առաջիկա համաժողովին:

Հանդիպմանը մասնակցել են օրթոդոքս և արևելյան հին ուղղափառ եկեղեցիների քսանչորս ներկայացուցիչներ, հատկապես աստվածաբաններ: Հույն օրթոդոքս եկեղեցիները ներկայացված են եղել իրենց պատրիարքական Աթոռներով (տիեզերական, անտիոքյան, ալեքսանդրյան և սաղիմական), օրթոդոքս ազգային եկեղեցիները՝ նույնպես (ռուսական, ռումինական, լեհական, բուլղարական, սերբական, հունական (Հունաստանի), կիպրական և ֆիննական, իսկ արևելյան հին ուղղափառ եկեղեցիներից մասնակցել են Հայաստանյայց առաքելական եկեղեցին, ինչպես նաև ասորական եկեղեցին՝ Հնդկաստանի մալաբար կաթողիկոսությամբ միասին: Հանդիպմանը մասնակցել են նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի երեք ներկայացուցիչներ՝ «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի տնօրեն դոկտ. Էմիլիո Կաստրոն, ուսումնասիրությունների գծով քարտուղար դոկտ. Թոմաս Ուիգերը և օրթոդոքս եկեղեցիների հետ հարաբերությունների գծով քարտուղար պրոֆ. Իոն Բրիան:

Ժողովում, հանուն հայ եկեղեցու, Մայր Աթոռի ներկայացուցիչն է եղել Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ տ. Շահե արքեպսկ. Անեմյանը:

Ժողովի բացման հանդիսավոր արարողությանը, որին հրավիրված են եղել նաև Ռումինիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպիսկ. Մարտիկյանը և փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, նախագահել է ռումինական օրթոդոքս եկեղեցու ս. Սինոդի փոխ-նախագահ, Մոլդովիայի միտրոպոլիտ Ժուստին Մոյսեսկուն, որը, հանուն ռումին պատրիարքության, ջերմորեն ողջունել է հանդիպման մասնակիցներին:

Ներածական խոսքով հանդես է եկել խորհրդակցական սույն ժողովի նախագահ դոկտ. Նիկոս Նիսիոտիսը: Այնուհետև հանդիպման երեք օրերի ընթացքում ժողովականները լիագումար նիստերում լսել են աստվածաբանական հինգ տարբեր զեկուցումներ հետևյալ թեմաների շուրջ.

1. «Քրիստոսի կենտրոնականությունը օրթոդոքս աստվածաբանության մեջ. հոգևոր կյանք և առաքելություն» (զեկուցող՝ պրոֆ. Դ. Ստանիլոե, ռումինական օրթոդոքս եկեղեցուց):

2. «Խոստովանել Քրիստոսին այսօր ծեսի միջոցով» (զեկուցող՝ հայր Ժորժ, Հընդկաստանի մալաբար եկեղեցուց):

3. «Հույն եկեղեցու ավետարանչական վկայությունը այսօր» (զեկուցող՝ Ստեփանոս եպս. Աբրամիդես, Հունաստանի օրթոդոքս եկեղեցուց):

4. «Այսօր Քրիստոսին ինչպես խոստովանելն ազդում է եկեղեցու միության և բաժանման վրա» (զեկուցող՝ պրոֆ. Ջոն Մեյենդորֆ, Նյու-Յորքի ս. Վլադիմիր ռուսական դպրեվանքի վերատեսուչ):

5. «Մարդու վերականգնումն ու ազատագրումը եկեղեցական համայնքից ներս և նրա միջոցով» (զեկուցող՝ միտրոպոլիտ Էմիլիանոս, հունաց տիեզերական պատրիարքությունից):

Վերոհիշյալ զեկուցումների շուրջ հանդիպման մասնակիցների միջև տեղի է ունեցել աշխույժ բանավեճ: Կարդացված զեկուցումների մեջ հիմնականում շեշտվել է օրթոդոքս եկեղեցու աստվածաբանական այն հասկացողությունը, որ եկեղեցին Քրիստոսի մարմինն է, Բանի մարմնացումը, սուրբ Հոգու ճշմարտությունն ու մարդու փրկության երաշխիքը: Քրիստոնյա մարդուն մնում է մասնակցել Քրիստոսի կյանքին խորհրդակատարությունների միջոցով և տևապես հաղորդակից մնալով նրա կյանքին:

Ապա աշխատանքային չորս խմբերում քննարկվել են կարդացված զեկուցումների թեմաներից բխող հետևյալ հարցերը.

ա. Քրիստոսի կենտրոնականությունը.

բ. Խոստովանել Քրիստոսին այսօր ծեսի միջոցով.

գ. Ուղղափառության ավետարանչական վկայությունն այսօր.

դ. Միություն և առաքելություն:

Քննարկված սույն հարցերի հիման վրա, իբրև եզրափակիչ փաստաթուղթ, պատրաստվել է հուշագրի մի նախագիծ և ուղարկվել Ժենևի կենտրոն՝ վերջնական խմբագրման ենթարկվելու համար: Կազմված հուշագիրն ունեցել է առաջարկի բնույթ:

Հունիսի 8-ին, ի պատիվ հանդիպման մասնակիցների և հրավիրյալների, ռումին պատրիարքարանը կազմակերպել է պաշտոնական ընդունելություն, որին ներկա են եղել Ռումինիայի Ժողովրդական Հանրա-

պետության կրոնից նախարար պրոֆ. Դումիտրու Դոկարուն և փոխ-նախարար Գեորգե Նենչյուն: Ընդունելությունը անցել է քրիստոնեական ջերմ, եղբայրական մթնոլորտում:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՏԵԼԻԵ»-ՈՒՄ

Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի մահվան 800-ամյակի կապակցությամբ սույն թվականի ապրիլի 30-ին տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանը Ալեքսանդրիայի մշակույթի կենտրոն «Ատելիե»-ում Շնորհալու կյանքին և մատենագրական վաստակին նվիրված անգլերեն լեզվով շահեկան մի դասախոսություն է տվել, որին ներկա են եղել Ալեքսանդրիայի հայ և օտար մտավորականության ներկայացուցիչներ, հոգևորականներ և օտարերկրյա հյուպատոսներ:

Դասախոսությանը զուգընթաց մոգական լապտերով պաստառի վրա ցուցադրվել է պատմական Հայաստանի սրբավայրերն ու 4—13-րդ դարերի հայկական եկեղեցական ճարտարապետության նշանավոր հուշարձանները պատկերող նկարների մի շարք, որը կրկնապես տպավորիչ է դարձրել դասախոսությունը:

Կահիրեում հրատարակվող «Լը Պրոգրե Էժիպսիեն» թերթը իր մայիսի 5-ի կիրակնօրյա համարում, անդրադառնալով սրբազան հոր սույն դասախոսությանը, ի միջի այլոց, նշում է. «Հմուտ դասախոսը, որ արտահայտվում էր անթերի անգլերենով, այս մեծ եկեղեցական կերպարը զետեղելու համար իր ապրած դարաշրջանի ու միջավայրի մեջ, սեղմ գծերի մեջ ներկայացրեց պատմական Հայաստանի պատկերը, այն Հայաստանի, որը եղել է խիզախ ու աշխատասեր, ամրորեն կապված մնացել իր հավատին և Ավետարանի քարոզության առաջին դարերից սկսած դարձել քրիստոնեության առաջավոր ամրոցներից մեկը Ասիայում»: Թերթը, ընդգծելով մասնավորապես Շնորհալու եկեղեցական գործունեության՝ մեր ժամանակների համար ունեցած համաքրիստոնեական այժմեական նշանակությունը, ավելացնում է. «Նա եղել է եկեղեցիների հաշտության ամենահայտնի ու եռանդուն ջատագովներից մեկը և Բյուզանդիայի ու արևելյան եկեղեցիների մերձեցման համար գործադրած իր անհկուն ջանքերով հանդիսացել էկումենիզմի ոահվիրան»: Ապա թերթը, կանգ առնելով մեծ Հայրապետի գրական տաղանդի և նրա թողած բանաստեղծական ու երաժշտական հարուստ ժառանգության վրա, եզրակացնում է. «Բայց այս սուրբ մարդը, որ ուներ ուսանելի կյանք և ներգործուն հավատ, միաժամանակ եղել է հայտնի գրական դեմք և բանաստեղծ, որին հայ գրականությունը դասել է իր մեծ դասականների շարքը.... Նրա ժամանակակիցները, նրա գրվածքներից հմայված, նրան տվել են «Շնորհալի» պատվանունը, որը բանաստեղծական մի երանգ է ավելացնում սրբության այն լուսապսակին, որով զարդարված է կաթողիկոսի իր փառահեղ ճակատը»:

ԼՈՒՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

ՂՊՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ը, որպես ռուս պրավոսլավ եկեղեցու հյուրը, Սովետական Միությունում է եղել ղպտական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից՝ Կահիրեի եպիսկոպոս Գրիգորին:

Բացի Մոսկվայից, հարգարժան հյուրը այցելել է Լենինգրադ, Պսկով, Կիև և ծանոթացել վերոհիշյալ քաղաքների հոգևոր ու մշակութային կյանքին:

Փետրվարի 24-ին Մոսկվայի Աստվածահայտնության տաճարում նա ներկա է եղել ռուսաց Պիմեն Պատրիարքի մատուցած սրբազան պատարագին:

Սովետական Միությունում գտնվելու օրերին Կահիրեի եպիսկոպոսը հանդիպումներ է ունեցել Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմի, Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետի և Մոսկվայի պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների վարիչ միտրոպոլիտ Յուվենալիի հետ:

Մարտի 4-ին ռուսաց Պիմեն Պատրիարքը ընդունել է Գրիգորի եպիսկոպոսին: Ռուսաց եկեղեցու հոգևոր պետի և Կահիրեի եպիսկոպոսի միջև տեղի է ունեցել զրույց եղբայրական ջերմ մթնոլորտում: Նույն օրը Մոսկվայի պատրիարքարանը ղպտական քույր եկեղեցու բարձրաստիճան ներկա-

յացուցչի պատվին կազմակերպել է պաշտոնական ընդունելություն:

Ե. Հ. Խ.-Ի ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՀՄ

1974 թ. մարտի 22—27-ը, հնգօրյա այցով, Սովետական Միությունում է եղել Ե. Հ. Խ.-ի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի պատվիրակությունը՝ գլխավորությամբ հանձնաժողովի տնօրեն, Ուրուգվայի մեթոդական եկեղեցու հովիվ դոկտ. Էմիլիո Կաստրոյի: Պատվիրակության կազմում են եղել հանձնաժողովի երկու այլ պաշտոնյաներ՝ պրոֆ. Իոն Բրիան (Ռումինիայի օրթոդոքս եկեղեցի) և դոկտ. Թոմաս Ուիզերը (Շվեյցարիայի երիցական եկեղեցի):

Հյուրերը Սովետական Միություն են ժամանել ծանոթանալու ռուս պրավոսլավ եկեղեցու կյանքին:

Լենինգրադում նրանք ընդունվել են միտրոպոլիտ Նիկոդիմի կողմից, հանդիպում են ունեցել տեղի հոգևոր ակադեմիայի պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ և ներկա գտնվել հոգևոր ակադեմիայի եկեղեցում մատուցված ս. պատարագին:

Մարտի 25-ին Մոսկվայում պատվիրակությանը ընդունել է միտրոպոլիտ Յուվենալին: Մոսկվայի պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնում տեղի է ունեցել խորհրդակցություն ռուս պրավոսլավ եկեղեցու, Քրիստոնյա բապտիստների համամիութենական ավետարանական խորհրդի ներկայացուցիչների և Ե. Հ. Խ.-ի պատվիրակության անդամների միջև: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են Ե. Հ. Խ.-ի առաջիկա 5-րդ համաժողովի նախապատրաստական աշխատանքների հետ կապված մի շարք հարցեր:

Մարտի 26-ին պատվիրակության անդամները այցելել են Զագորսկի պատմական վանքերն ու եկեղեցիները և ծանոթացել տեղի հոգևորականների հետ:

Ս. ԱԹԱՆԱՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հույն օրթոդոքս եկեղեցու Պաուլ և Պատրիարք Նիկողայոս Զ-ի հրավերով սույն թվականի հունիսի 20-ին Ալեքսանդրիա են

Ալեքսանդրիայի հունայ Տ. Նիկողայոս Զ Պատրիարքը, պապական նվիրակ Հաշիլ եպիսկոպոսը, տ. Զավեն եպս. Ձինչինյանը մի խումբ հոգևորականների հետ (Ալեքսանդրիա)

ժամանել հույն օրթոդոքս եկեղեցական պատրիարքարանների ներկայացուցիչները՝ մասնակցելու ս. Աթանաս Հայրապետի մահվան 1600-ամյակին նվիրված հանդիսություններին:

Հանդիսությունները տևել են հունիսի 20-ից մինչև 25-ը: Ալեքսանդրիայի հույն պատրիարքության հյուրերն են եղել՝ Մելիքիեի միտրոպոլիտ և աստվածաբանության դասախոս Ոսկեբերան եպիսկոպոսը՝ Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքությունից, Ջաֆերես եպիսկոպոսը՝ Երուսաղեմի պատրիարքությունից, Կենտրոնական Եվրոպայի էկզարխ Ֆիլարետ արքեպիսկոպոսը, Մոսկվայի աստվածաբանական ակադեմիայի դասախոս դոցենտ Բորիս Նիլուսպոլը՝ Մոսկվայի պատրիարքությունից, Բելգրադի աստվածաբանական ակադեմիայի դոցենտ հայր Աթանաս Էվտիչը՝ Սերբիայի պատրիարքությունից, Տրայանապոլսի եպիսկոպոս Իլարիոնը՝ Բուլղարիայի պատրիարքությունից, Բանատի միտրոպոլիտ Նիկոլաոս եպիսկոպոսը, Բուխարեստի աստվածաբանական ֆակուլտետի դասախոս պրոֆ. Ջոն Կոմանը՝ Ռումինիայի պատրիարքությունից, Դերդիայի եպիսկոպոս Կոզմոսը և Աթենքի աստվածաբանական ֆակուլտետի տնօրեն պրոֆ. Էվանգելոս Թեոդորոսը՝ Աթենքի պատրիարքությունից:

Տ. Ջավեն եպս. Զինչինյանը, Ֆիլարետ արք.-ը, Ալեքսանդրիայի Քաղաքական ժողովի ատենապետ պր. Վահան Ալեքսանյանը և տ. Վարագ քհն. Պեյլերյանը

Պատվիրակ հոգևորականներից և նրանց ուղեկցող պրոֆեսորներից ոմանք տվել են ս. Աթանաս Հայրապետի կյանքին ու գործին վերաբերող աստվածաբանական մի շարք դասախոսություններ, ինչպես՝ «Ուսիա և հիպոստասիս բացատրությունները ըստ ս. Աթանասի», «Ս. Աթանասը որպես օրթոդոքս վարդապետության հայր», «Ս. Աթանաս Հայրապետի աստվածաբանական և ընկերային գործը», «Մեծն Աթանաս Հայ-

րապետը և արևմտյան մտածողությունը» և այլն:

Հունիսի 23-ին Ալեքսանդրիայի Էվանգելիսմոս Մայր տաճարում տեղի է ունեցել պատրիարքական ս. պատարագ: Խորհրդակատարությանը մասնակցել են հյուր եպիսկոպոսները:

Քույր եկեղեցիների ներկայացուցիչներից հրավիրված են եղել հռոմեական կաթոլիկ եկեղեցու պապական նվիրակ Հաշիլ եպիսկոպոս Գլորիոն, դպտական ուղղափառ պատրիարքության արտաքին հարաբերությունների վարիչ Սամուել եպիսկոպոսը, Հայաստանյայց եկեղեցու ներկայացուցիչ Զավեն եպիսկոպոս Չինչինյանը և հույն կաթոլիկ պատրիարքի փոխանորդ Պողոս եպիսկոպոս Անթաքին:

Պատարագին ներկա են եղել նաև եգիպտական պետության մոտ հավատարմագրված զանազան դեսպաններ, հյուպատոսներ և այլ պաշտոնական հյուրեր:

Հունիսի 22-ին, առավոտյան ժամը 11-ին, Մոսկվայի ռուս պրավոսլավ պատրիարքության ներկայացուցիչ և Բեռլինի էկզարխ տ. Ֆիլարետ արքեպիսկոպոսը, ընկերակցությամբ տ. Պյոտր քահանա Ռայնայի և դոցենտ Բորիս Նիլուպովի, այցելել է Ալեքսանդրիայի հայոց առաջնորդարան, ս. Պողոս-Պետրոս եկեղեցի և ընդունվել տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանի կողմից: Ընդունելությանը ներկա են եղել տ. Վարագ քահանա Պեյլերյանը և Քաղաքական ժողովի ատենապետ պրն. Վահան Ալեքսանյանը: Եղբայրական ջերմ մթնոլորտում ռուս պրավոսլավ և Հայաստանյայց եկեղեցու ներկայացուցիչների միջև տեղի է ունեցել սրտաբաց զրույց երկու քույր եկեղեցիների բարեկամական դարավոր կապերի մասին: Կատարվել են սրտագին մաղթանքներ Տ. Պիմեն Պատրիարքի և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կենաց և արևշատության համար: Տ. Ֆիլարետ արքեպիսկոպոսի և տ. Զավեն եպիսկոպոսի միջև փոխանակվել են հուշանվերներ:

Նույն օրը, երեկոյան, տ. Զավեն եպիսկոպոսը, ընկերակցությամբ տ. Վարագ քահանա Պեյլերյանի և պրն. Վահան Ալեքսանյանի, փոխադարձ այցելություն է տրվել տ. Ֆիլարետ արքեպիսկոպոսին տեղի Սան-Ստեֆանո հյուրանոցում:

Ս. Աթանաս Հայրապետի հիշատակին նվիրված հանդիսություններից հետո տեղի է ունեցել հույն օրթոդոքս պատրիարքարանի ս. Սինոդի նիստը՝ Աֆրիկայի զանազան երկրներից ժամանած եպիսկոպոսների ներկայությամբ:

ԼՈՒԻԶԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ Ե. Հ. Խ.-ՈՒՄ

«Ինդիրն Ուիթնես» շաբաթաթերթի նախկին գլխավոր խմբագիր և Հնդկաստանի եկեղեցիների ազգային խորհրդի գրականության բյուրոյի անդամ Վիկտոր Կոյպիլլեն նշանակվել է Ե. Հ. Խ.-ի հրատարակությունների բաժնի խմբագրության քարտուղար՝ այդ պաշտոնում հաջորդելով Մարտին Կոնուելին, որը սույն թվականի սեպտեմբեր ամսից աշխատելու է Եկեղեցիների բրիտանական խորհրդում: Վիկտոր Կոյպիլլեն եղել է Նագպուրի համալսարանի դասախոս և իր ժուռնալիստական գործունեությունն սկսել է որպես խմբագիր «Թիրը Գարդիրն» քրիստոնեական շաբաթաթերթի:

Ցեյլոնի անգլիկան եկեղեցու անդամ Ադրիան Վիժեմաննեն նշանակվել է Ե. Հ. Խ.-ին առընթեր եկեղեցիների օգնության էկումենիկ հիմնարկության նոր տնօրեն: Ավելի քան տասնչորս տարի նա աշխատել է Ցեյլոնի կառավարության կազմում, մասնակցել է հողային ռեֆորմին և երկար տարիներ զբաղեցրել գյուղատնտեսության մինիստրության կոմիսարի օգնականի պաշտոնը:

Լինելով իր եկեղեցու պատասխանատու աշխատողներից մեկը՝ Վիժեմաննեն ծառայության իր բաժինն է բերել «Ասիական երկրների զարգացմանը մասնակցող եկեղեցիների հանձնաժողովում» որպես խորհրդական:

ԱՄՆ-ի Լեքսինգթոնը քաղաքի քրիստոնեական եկեղեցու («Քրիստոսի աշակերտներ») հոգևոր հովիվ Ռոբերտ Ուելշը, հրաժարվելով իր հոգևոր պարտականություններից, տեղափոխվել է Ժնև և ընդգրկվել Ե. Հ. Խ.-ի անձնակազմում որպես «Հավատ և վկայություն» միավորման աշխատակից: Նա եղել է Տրանսիլվանիայի համալսարանի հոգեբանության դասախոս և ղեկավարել նույն համալսարանի ուսանողների ընկերակցությունը:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԻՐԵՆԵՈՍԻ ԲՈՂՈՔԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ՃՆՇՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Արևմտյան Գերմանիայում աշխատող հույն գաղթականներին ուղղված իր ռա-

դիոելույթի մեջ միտրոպոլիտ Իրենեոսը, հանդես գալով ի պաշտպանություն Հունաստանում օրինականության վերահաստատման համար հույն ժողովրդի բուռն պահանջների, իր վճռական բողոքն է արտահայտել տեղական իշխանությունների կողմից գործադրվող ճնշման քաղաքականության դեմ:

Հույն ժողովրդի 1821 թվականի ազգային ազատագրության տարեդարձի տոնակատարության առթիվ, որի ընթացքում ամբողջ աշխարհի հույն օրթոդոքս եկեղեցիներում ամեն տարի ավետվում է մարդկության ազատագրումը մեղքի գերիշխանությունից, Կենտրոնական Եվրոպայի հույն եկեղեցու էկզարխը, որը ճանաչված է իր արդարամտությամբ, կոչ է արել հույն ժողովրդին՝ արթնանալու և «սրբագրելու սրխալները ու թերությունները»: «Յոթ տարուց ի վեր ազատությունը վերացել է Հունաստանից,—նշել է միտրոպոլիտ Իրենեոսն իր ելույթում,—և մենք հասել ենք այն բանին, որ սկսել ենք գովաբանել մեր ճնշումն ու ստրկությունը: Քաղաքագետներ, զինվորականներ, դասախոսներ և նույնիսկ քահանաներ փորձում են ատելի դարձնել մեր սեփական անցյալը, իբր թե կարիք ունենալինք բռնակալության մտրակին կամ գերեզմանի հանգստին՝ առաջադիմելու և զարգացնելու համար մեր տնտեսությունը»:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԶԱՐՈԶՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻՑ ԱՌԱՋ

Ավետարանչության միջազգային կոնգրեսի պատվավոր նախագահ, ամերիկացի ավետարանական Բիլլի Գրեհեմը վերջերս Լոզանում տեղի ունեցած մամուլի մի կոնֆերանսում հայտարարել է, որ սույն թվականի ամռանը վերոհիշյալ կազմակերպության կողմից գումարվելիք ժողովը լինելու է ավետարանչության վերաբերյալ ամենամեծ և ամենաներկայացուցչական համագումարը քրիստոնեության ամբողջ պատմության մեջ:

Արդարև, շուրջ 2700 մասնակիցներ, որոնց կեսից ավելին լինելու է երրորդ աշխարհից, հրավիրվել են հավաքվելու Լոզանում առաջիկա հուլիսի 16—25-ը: Աշխարհի 148 երկրների գրեթե բոլոր հարանվանությունների եկեղեցիների անդամներ ներկա են լինելու հիշյալ համագումարին ոչ որպես իրենց եկեղեցիների կամ եկեղեցական որևէ կազմակերպության պատվիրակներ, այլ որպես պարզ մասնակիցներ, որով և համագումարը չի ունենալու օրենսդրական բնույթ:

Սույն հանդիպման նպատակն է լինելու մշակել գործունեության ուղեգծեր և կոնկրետ պլաններ՝ Ավետարանը քարոզելու համար ամբողջ աշխարհում նախքան մեր դարի ավարտը:

Պատասխանելով մամուլի կոնֆերանսում իրեն ուղղված այն հարցին, թե հանդիպումից հետո ստեղծվելո՞ւ է արդյոք վերոհիշյալ նպատակի համար գործող կայուն մի կազմակերպություն առանձին բաժիններով, Բիլլի Գրեհեմը հայտարարել է, թե մասնակիցների ինքնուն տոկոսը այժմվանից ցանկություն է հայտնել, որ «առաքելության և ավետարանչության բնագավառում ինչ-որ բան ծնվի սույն հանդիպումից»:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Սույն թվականի սեպտեմբերի 16—23-ը Էնգելբերգում (Ցվեյցարիա) տեղի է ունենալու «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս»-ի «Նիբորգ 7» համաժողովը հետևյալ թեմայով. «Միություն Քրիստոսով և խաղաղություն աշխարհում—քրիստոնեական հույս և Ավետարանի խոստումը»:

Համաժողովում գլխավոր զեկուցումով հանդես է գալու Հեսսե-Նասսաուի (Արևմտյան Գերմանիա) ավետարանական եկեղեցու նախագահ Հելմուտ Հիլդը: Վերոհիշյալ թեմայի մասին զեկուցելու է նաև Բուդապեշտի աստվածաբանական ճեմարանի Հին Կտակարանի դասախոս պրոֆ. Լազլո Պակոզդին:

Համաժողովին մասնակցելու են շուրջ 400 պատգամավորներ: Եվրոպական 24 երկրների ավելի քան 100 եկեղեցիներ լիիրավ անդամ են հիշյալ կազմակերպության:

Համաժողովում մեծ տեղ է հատկացվելու բանավեճերին, որոնք տեղի են ունենալու երկու գլխավոր բաժիններում և տասնմեկ ենթաբաժիններում:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋ

Ժենևում մարտի 25—29-ը տեղի է ունեցել Ե. Հ. Խ.-ի երիտասարդության հատուկ կոմիտեի հերթական ժողովը: Ժողովում պահանջ է առաջադրվել, որ երիտասարդներին իրավունք տրվի ամբողջական մասնակցություն ունենալու էկումենիկ շարժման կյանքին ու աշխատանքին իրենց ստանձնած քրիստոնեական պարտավորության և

իրենց ձայնը լսելի դարձնելու մտահոգության պատճառով: Սույն ժողովին մասնակցել են երիտասարդության շրջանային քարտուղարներն ու Ե. Հ. Խ.-ի հանձնաժողովներին կից երիտասարդությանը խորհրդատու պատգամավորներ:

Ե. Հ. Խ.-ի «Դաստիարակություն և վերանորոգում» միավորման փոխ-նախագահուհի Պեգգի Աշրին, ի միջի այլոց, ասել է, որ «երիտասարդներն ունեն իրենց հատուկ փորձառությունները և կարող են իրենց ընպաստը բերել Ե. Հ. Խ.-ի այն ծրագրերին, որոնք վերաբերում են իրենց ազատագրության համար պայքարող ժողովուրդների զարգացմանն ու նրանց ցույց տրվելիք օգնությանը»:

Ժողովում մասնավորապես պահանջվել է, որ այն երիտասարդները և երիտասարդության խորհրդականները, որոնք մասնակցելու են Ջակարտայում կայանալիք Ե. Հ. Խ.-ի 5-րդ համաժողովին, հավաքվեն համաժողովից անմիջապես առաջ: «Եթե ուզում են, որ երիտասարդները իրենց ընպաստը բերեն համաժողովին,—նշվում է ժողովի կողմից ընդունված փաստաթղթում,—անհրաժեշտ է, որ նրանք մասնակցեն նույնպես Արևմտյան Բեռլինում գումարվելիք Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի առաջիկա նստաշրջանին»:

Երիտասարդության հատուկ կոմիտեի սույն փաստաթուղթը և մշակած հանձնարարությունները ուղարկվելու են Ե. Հ. Խ.-ի գործադիր կոմիտեի անդամներին՝ պատասխանելու համար այն հարցերին, որոնք բարձրացվել են Բադ Սաարովում կայացած գործադիր կոմիտեի վերջին ժողովում և որոնք վերաբերում են եկեղեցիներում երիտասարդների աշխատանքի առանձնահատկությանը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՋԱՏԿԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԻՆ

Երեք էական կետեր են շոշափվում այն պատգամում, որ Կոստանդնուպոլսի տիեզերական Պատրիարք Դիմիտրիոսն ուղղել է ամբողջ աշխարհի քրիստոնյաներին սուրբ Հարության տոնի առթիվ: «Աստվածային տնտեսության գործի» պայծառ մի նշան տեսնելով այն իրողության մեջ, որ այս տարի ս. Զատկի տոնը քրիստոնեական եկեղեցիների բոլոր օրացույցներում զուգադիպում է նույն օրվան, օրթոդոքս եկեղեցու հոգևոր պետը իր ուղերձում առաջարկել է, որ համաօրթոդոքս, ապա նաև համաքրիստոնեական մի համաձայնագրով որոշվի կայուն մի կիրակի, որպեսզի ամեն տարի նույն օրը նշվի ս. Զատկի տոնը ամբողջ աշխարհի քրիստոնյաների կողմից:

Արտահայտելով իր խորագույն հարգանքը ու պաշտամունքը Քրիստոսի գերեզմանի նկատմամբ, տիեզերական Պատրիարքը, իր «պարտականությանն ու տիեզերական Պատրիարքի իր պատասխանատվության իսկ թելադրանքով» և «քաղաքական ամեն տեսակ նկատառումներից դուրս», պահանջ է արտահայտել, որ հարգվեն սուրբ Տեղյաց ստատուսը և մասնավորապես Երուսաղեմի օրթոդոքս պատրիարքության դարավոր իրավունքները դրանց վրա:

Հիշեցնելով, որ հարուցյալ Քրիստոսն ասել է «խաղաղություն ընդ ձեզ» և «եղեք ուրախ», հույն եկեղեցու գերագույն պետն ընդգծել է, որ «խաղաղությունը հանգչում է մարդկանց, հաստատությունների և ժողովուրդների իրավունքների փոխադարձ ճանաչման վրա, և որ ուրախությունն ուրիշ բան չէ, եթե ոչ արդյունքը այդ խաղաղության»:

ՄԱՀ
ԱՐՏԱՇԵՍ ԳՐԻԳՈՐԻ ՏԻՐԱՑՅԱՆԻ
(1889—1974)

Մեր հիվանդությունից հետո, հունիսի 30-ին, վախճանվեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, բազմավաստակ մանկավարժ, հասարակական գործիչ և գիտնական Արտաշես Գրիգորի Տիրացյանը:

Ա. Տիրացյանը ծնվել է 1889 թ. մայիսի 29-ին Բուլղարիայի Շումեն քաղաքում, համեստ արհեստավորի ընտանիքում: Իր նախնական կրթությունը ստանալուց հետո, 1901—1911 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, իսկ բարձրագույն ուսումը ստացել է Բեռլինի, Լոզանի և, ի վերջո, Ցյուրիխի համալսարաններում: Այստեղ էլ նա 1920 թ. փայլուն կերպով պաշտպանել է դոկտորական իր ավարտաճառը՝ տնտեսական գիտությունների գծով:

Հատկապես շատ մեծ է եղել Ա. Տիրացյանի երախտիքը ռումինահայ գաղութում, ուր նա շուրջ քառորդ դար անմոռանալի հետք է թողել Բուխարեստի հայ մանկավարժական, հասարակական, հրապարակագրական և մշակութային կյանքում: Նա, իբրև Բուխարեստի Միսաքյան-Քեսիմյան դպրոցի բազմամյա տնօրեն, հասցրել է հայ ոգով դաստիարակված բազմաթիվ սերունդներ: Նրա անվան հետ է կապված ռումինահայ դպրոցների ուսուցիչների առաջին և երկրորդ համագումարների հրավիրումը 1922 և 1923 թթ. և ռումինահայ տարրական դպրոցների ուսումնական միասնական ծրագրի ստեղծումն ու հրատարակումը, որը հաստատվեց թեմականի և ռումինական կրթական նախարարության կողմից: Ա. Տիրացյանը իբրև հասարակական գործիչ երկար տարիներ եղել է Հայաստանի օգնության կոմիտեի (Հ. Օ. Կ.) և «Հայաստանյան ճակատ» առաջադիմական կազմակերպությունների հիմնադիր և ղեկավար անդամներից մեկը:

Երկար տարիներ Ա. Տիրացյանն ընտրվել է ռումինահայ թեմական խորհրդի պատգամավոր և ղեկավարության անդամ, Բուխարեստի «Հայ մշակույթի տան» վարչության անդամ:

1945 թ. Ա. Տիրացյանին բախտ վիճակվեց իբրև պատգամավոր լինել մայր Հայրենիքում: Այդ առթիվ իր ստացած խանդավառ տպավորությունների տակ Բուխարեստում հրատարակեց «Մեկ ամիս Հայաստանի մեջ» հատորը: Նրա այդ գործը թե՛ Հայրենիքում և թե՛ սփյուռքում արժանացավ դրական գրախոսությունների:

1948 թ. Ա. Տիրացյանն իր ընտանիքի հետ ներգաղթեց հայրենիք: Ա. Տիրացյանը բացառիկ երիտասարդական եռանդով հայրենիքում անմիջապես աշխատանքի անցավ Երևանի օտար լեզուների ինստիտուտում, նախ իբրև գերմաներեն լեզվի ավագ դասախոս և ապա իբրև դոցենտ: Նա միաժամանակ 1953 թ. պաշտպանեց թեկնածուական իր ավարտաճառը՝ նվիրված կիլիկյան Հայաստանի տնտեսական հարաբերություններին Իտալիայի Ջենովա և Վենետիկ քաղաքների հետ ԺԳ—ԺԴ դդ.: Տիրացյանը դոց. Գր. Անդրեասյանի հետ հեղինակել է «Գերմաներեն-հայերեն դպրոցական բառարանը» (1965), իսկ մինչև իր կյանքի վերջը աշխատում էր մեծ եռանդով հայերեն-գերմաներեն ընդարձակ բառարանի վրա, որն արդեն իսկ պատրաստ է տպագրության:

1964 թ. հոկտեմբերի 27-ին Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ղեկավարությունը մեծարման երեկո կազմակերպեց ինստիտուտի ավագագույն դասախոս դոց. Ա. Տիրացյանի ծննդյան 75 և գիտա-մանկավարժական գործունեության 55-ամյակի առթիվ:

Ա. Տիրացյանը դեռևս Ռումինիայում եղած ժամանակ երկար տարիներ սերտ համագործակցության մեջ է եղել Վեհափառ Հայրապետի հետ: Նրանք երկար ժամանակ պաշտոնակիցներ են եղել Բուխարեստի Միսաքյան-Բեսիմյան ազգային վարժարանում, ապա գործակցել ռումինահայ թեմական խորհրդում ու «Հայ մշակույթի տան» վարչությունում և վերջապես իրենց մասնակցությունն են բերել հայ համայնքի բոլոր կարևոր միջոցառումներին երգչություններով և դասախոսություններով: Նրանք իրրև ռումինահայ պատգամավորներ 1945 թ. մասնակցել են ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովին:

Հայրենադարձությունից հետո նս, 1955 թ., Ա. Տիրացյանն ընտրվել է ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր, ուր իր քվեն է տվել իր վաղեմի բարեկամի՝ Վազգեն Ա-ի ընտրությանը: Նույն ժողովում նա ընտրվել է Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, պատմա-բանասիրական հոդվածներով իր աշխատակցությունը բերել «Էջմիածին» ամսագրին:

Վեհափառ Հայրապետն Իր խոր վիշտն էր հայտնում Ա. Տիրացյանի մահվան տխուր առիթով՝ Տիրացյան ընտանիքին ուղղված հետևյալ ցավակցական հեռագրով.

«Վշտով հայտնում ենք Մեր ցավակցությունը ձեր ամուսնու և հոր մահվան տխուր առիթով:

Արտաշես Տիրացյանի ողջ կյանքն ու գործունեությունը Ռումինիայում և այստեղ՝ Հայաստանում, եղավ մի ամբողջական ու անսակարկ նվիրում հայ կրթական գործին և մայր հայրենիքին:

Մենք խոր հարգանքով և գնահատանքով օրհնում ենք նրա պայծառ հիշատակը և նրա մանկավարժական ու հայրենասիրական վաստակը: Մենք չենք մոռանա նաև նրա օգտաշատ աշխատանքը իբրև գործոն անդամ Մայր Աթոռիս Գերագույն հոգևոր խորհրդի:

Թող Տերը լուսավորի նրա արդար հոգին:

Ձեզ հոգվո մխիթարություն և խաղաղություն»:

Հուլիսի 1-ին, երկուշաբթի օրը, տեղի է ունենում հանգուցյալի հուղարկավորությունը: Դամբանականներ են խոսում Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտական աշխատող, պատմաբան Վարդան Գրիգորյանը, հանգուցյալի աշակերտներից՝ Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Սուրեն Քոլանջյանը, բժշկական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի վարիչ Հակոբ Առաքելյանը, Գևորգյան ճեմարանցիների կամավոր ընկերության անունից՝ Ա. Մուղուրյանը:

Վերջում հանգուցյալի աշակերտներից դասախոս Կայծակ Աթանասյանը կարդում է Վեհափառ Հայրապետի վերոհիշյալ ցավակցական հեռագիրը:

Հուլիսի 7-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան արարողություն Ա. Տիրացյանի հիշատակին:

Հոգեհանգստյան ավարտին Վեհափառ Հայրապետը և Տիրամայրը Վեհարանում ընդունում են հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին և մխիթարության խոսք ասում ու հայտնում Մայր Աթոռի վիշտը Ա. Տիրացյանի մահվան առթիվ:

Հանգիստ իր ոսկորներին:

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՍՏԵՂԾՈՂ ԱՆԿԵՆՑ

Խերսես Շնորհալի

Զայնագրեց՝ Կոստաս Վարդապետը
Խերդաղնակից՝ Ն. Թաւշտաջեանը

♩= 92

Drammatico

Organo

mf

mf

mf

(L'istesso tempo) con antica tranquillita

mp

mp

mf

Տէր ո - ղորմեա Տէր ո - ղորմեա Ակնեղ-


Ծող Ման - կանց մա - Նուկ ցու ցար ի ցան -
-բա - նից մը - սուր ե - դ-ար ի
p
p
հրեշ - տա - կաց փա - ռո - վե - ցար եւ ի


հով-ռաց
փա - ռա - ւո - ր - յար
ընդ
որս
եւ Տեպ
ռ - ր - խա - յո
ճնոր-հիւ
օրհ-հեալ
ՁԸ - ՆԸՆ - դեան քո:


mf Ե - կայ Ման - կունք նոր Ա՛ի - ո - նի
pp
pp
Տա - կուք փա - ռքս Տեառն ա - մե - նի:
mf
sf
Տէր ո - ղոր - մեա:
sf
p
p
p



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—ԱՆ գձ ՍՒԱՆ
Զ բձ Մարկոս
Ակ գկ Ղուկա(ս)
Զկ դկ Մաթոս:

Թ. 1բ.—Նուէր Ս. Սարգիս եկեղեցւոյն Լօնտօնի, հաշիկ Խան Սարաճեանի կողմանէ:

Այս Աւետարանին վրայ իրենց երդումը կատարեցին Լոնտօնի առաջին Երևելիները: 0 մարտի 1926 թ.:

Թ. 2ա. Զեռագիրը Թարիզու № 66:

Թ. 119ա.—Միլոռն:

Թ. 131ա.—Միլոռն:

Թ. 250բ.—Դարձեալ ի նոսա ամենայն այլազգիսք զձեզ ով մանգումբ սուրբ Եկեղեցոյ որք կարդալով կամ աւրինակելով կամ ուսանելով զվերին ընտացող Սուրբ Աւետարանին զուստոյ Միրանն, որ ընտացաւ զսայ յիշատակ իրն և ծնաւղացն իրոց ուստայ Ցակորին և կողակցին իրոյ Տայուսին, և իր զաւակին Մանփաշին, Նիկարին: Քրիստոս Աստուած աւրհնէ զու(ս)տայ զՄիրանն ե զիր որդին զԽուփիայր և զՇանկալ, որ և զմայրն սոցա զՀոռոփսիմայն. յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ, ամէն:

Թ. 251ա.—Դարձեալ վերջին ստացող Սուրբ Աւետարանիս Հռոմակլ.ս բարեանալս, որ ստացայ Մեսրովբ Եպիսկոպոսէ զԱւետարանս ի հալալ ընչից իմոց, առի ԺՌ (10,000—Ն. Մ.) դահեկ(ան), յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմ Խուդանին, մաւրն իմ Պէկիհաթունին, կողակիցն իմ Տիլպարին, որդոյն իմոյ Զաքարայ, նորարողջոյ ասրկաւագին Ադամին, առհասարակ ամենայն աշխատողացն սոցայ. յիշեցէք զտեառն ամի ի թվ. ՌԺԵ (1566 թ.—Ն. Մ.), ի յառաջնորդութեան սրբոյ աթոռոյս Ստեփէի Ընտեփանոս արհեպիսկոպոսի, ի թագաւորութեան Շահ Թահմազին, կաթողիկոսութեան Էջմիածնին Տէր Միքայէլին:

Թ. 251բ.—Աւետարանական բժշկութեամբ:

Թ. 252ա.—(Կա չորս տող սրբված և անընթեռնելի գրություն):

(Պահպանակի վրա) 252 թերթ, 28-11-1969 թ.:

№ 328

ՖԵՐՄԱՆ

(Ցանկերեն)

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 77×52 սմ.:—Նյութը՝ մաքուր դիմացկուն հատ թուղթ:—Կազմ՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միապույն:—Դասարկ թղթեր՝ 1բ:—Տողերը՝ 22:—Գծումներ՝ չունի:—Գիրը՝ ուրարտերեն նասխի տառեր:—Զարդագրություն՝ ֆերմանի վերևի մասում կա բրգաձև մի եռանկյուն (խորությունը՝ 43 սմ. և բարձրությունը՝ 86 սմ. չափերով), որ ունի միջակ որակի զարդանկարչություն: Կենտրոնում նկարված է կարմիր վարդեր և կապույտ այլ ծաղիկներ, իսկ ներքևի երկու ծայրերում կան մանր կարմիր ծաղիկներով երկու կանաչ ճյուղեր: Եռանկյան մյուս մասերում նկարված են ոսկեգույն զարդեր:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ծաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1798 թ.:—Վայրը՝ անհայտ (շատ հավանաբար Թուրքիա):—Մանրություն՝ սույն տանկերեն ֆերմանը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց գերիներին առանց փողի ազատելու մասին է սույն ֆերմանը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ֆերմանի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա տվողի ստորագրությունը, իսկ կոնակում գրված է հիջրայի 1213 թվականը (1798 թ.—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի աջակողմյան լուսանցքում կա երկու տող տանկերեն գրություն և օվալաձև փոքրիկ մի կնիք:

Կա նաև հայերեն հետևյալ գրությունը.—

Եթէ ազգէն մերմէ գերի հանդիպի թուռն զօրութեամբ կարող լինիմք առանց փողի. այս է հոամանք

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԳ-ից, 1965 թվականի №№ Ը—ԺԲ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Թ-ից, ԺԳ-ից, 1971 թվականի №№ Ն—Ը-ից, ԺԱ—ԺԳ-ից, 1972 թվականի №№ ԻԱ—ԲԻ-ից, ԳԻ-ից, 1973 թվականի №№ ԻԱ—Դ-ից, Ը-ից և 1974 թվականի № Գ-ից:

Հրովարտակիս ի տէրութենէ 1218ին (արարերեն թվերով գրված)։

№ 324

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1։—Մեծությունը՝ 70×49,5 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—Կազմ՝ չունի։—Պահպանակներ՝ չունի։—Վիճակը՝ բավարար, սակայն վերևի մասում մի մեծ կտոր թուղթ պատռված է։—Գրությունը՝ միագույն։—Դատարկ թղթերը՝ 1բ։—Տողերը՝ 8։—Գծումներ՝ չունի։—Գիրը՝ արաբերեն նասխի տառեր։—Զարդագրություն՝ չունի, սակայն ֆերմանի վերևի մասում կա իսլամական տուղրան, բառերն ու տառերը մեջտեղ ընդելուզված։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատուն՝ անհայտ։—Ժամանակը՝ 17-րդ դար։—Վայրը՝ անհայտ (շատ հավանաբար Թուրքիա)։—Մանրություն՝ սույն տաճկերեն ֆերմանը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական դիվանի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆերմանը վերաբերում է Լիմ անապատին (վանքին) տուրք տալու մասին

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ֆերմանի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա տվողի ստորագրությունը։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի կոնակում հայերեն գրված է հետևյալը.—

Գասապանների ու գիւղերու մարդկանց հետ Լիմ ու Անպտ., երբէք պարտաւորութիւն չունի Լիմ Անպտ. տուրք տալու հաւասարապէս։

Ռէմկե (1887 թ.—Ն. Մ.) թարեղին (թվականին—Ն. Մ.)։

Վանքի հողերն է ֆարմանս էջմիածնէ։

№ 325

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1։—Մեծությունը՝ 78×51 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—Կազմ՝ չունի։—Պահպանակներ՝ չունի։—Վիճակը՝ անբավարար, երկու եզերքները մաշված և պատռված են։—Գրությունը՝ միագույն։—Դատարկ թղթերը՝ 1բ։—Տողերը՝ 11։—Գծումներ՝ չունի։—Գիրը՝ արաբերեն նասխի տառեր։—Զարդագրություն՝ չունի, սակայն ֆերմանի վերևի մասում կա իսլամական տուղրան, բառերն ու տառերը մեջտեղ ընդելուզված և նկարված կարմիր ներկով։—Գրիչը՝ անհայտ։—Պատվիրատուն՝ շատ հավանաբար Թուրքիայի Սուլթան Սելիմ 3-րդը (1789—1808 թթ.)։—Ժամանակը՝ 18—19-րդ դարեր։—Վայրը՝ շատ հավանաբար Կոստանդնուպոլիս։—Մանրություն՝ սույն տաճկերեն ֆերմանը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական դիվանի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լիմ անապատի (վանքի) այգիների և արտերի պաշտպանության մասին է։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ֆերմանի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա տվողի ստորագրությունը։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի կոնակում հայերեն գրված է հետևյալը.—

Լիմ Անպտ.ի այգեներուն, պաղչաներուն և արտերուն ոչ ոք ընդդէմ չկենան յայլազգաց.Սուլթան Սէլիմ թագաւորի տուեալն է։

Խարաճ չտալու և այլ հարկաւոր ֆէրմաներն է. յաւ պահելոյ է։

Օրինակ մէկն է։

Խարաջ և այլ բաներ չտալու ֆէրման է։

Ջրաղացքն և այլն պահելով։

Երկու օրինակն ևս մէկն վաւերացել։

Բացի այդ ֆերմանի կոնակում կպցված է Օսմանյան Թուրքիայի մի նամակադրոշմ, հինգ դրուշ արժեքով, բաց կապույտ գույնով։ Վրան ձեռագիր մի քանի թվեր կան գրված։

№ 326

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ 154։—Գրակները՝ 14, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԺԴ՝ 1, ԺԱ՝ 7, Ա և Է՝ 10, Դ և Ը՝ 11, և մի հալելվածական պրակ է ավելացել հետագայում (8 թերթանոց) ԺԱ և ԺԲ պրակների միջև։—Մեծությունը՝ 20,7×14×2,2 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—Կազմ՝ չունի։—Պահպանակները՝ սկզբում և վերջում մնկական հաստ թուղթ։—Վիճակը՝ անբավարար, թերի, շատ թերթեր թափվել և կտրատվել են։—Գրությունը՝ երկսյուն։—Դատարկ թղթեր՝ չունի։—Տողերը՝ անհամաչափ, 20—32։—Գծումները՝ ճրագշումով։—Գիրը՝ բոլորգիր, մի քանի տեսակի, խոշոր։—Զարդագրություն՝ ունի շատ հասարակ մանրանկարչություն։ Ձեռագրում կա ընդամենը մի քանի հասարակ զարդագրեր և թոչնագրեր, լուսանցազարդեր և թոչունների։—Գրիչը՝ Մարգիս քահանա։—Պատվիրատուն՝ նույնինքն գրիչն է։—Մաղկողը՝ անհայտ։—Ժամանակը՝ 16-րդ դար։—Վայրը՝ անհայտ, սակայն շատ հավանաբար Սպահան (Ջուղա)։—Մանրություն՝ ձեռագիրն ստացվել է նվեր մի հայրենակցից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրն ուշ շրջանի մի կանոնագիրք է, որտեղ խոսվում է ընդունված կանոնների, ինչպես նաև խնամիական կապերի մասին։ Մի քանի էջերում (թթ. 36ա, 37ա, 37բ, 38ա, 38բ, 39բ և 40ա) տրված է պատկերավոր սխեմաներ, որտեղ ցույց են տրվում թույլատրելի և ոչ-թույլատրելի խնամիական և ամուսնական կապերը։

Թ. 104ա.—Ցանկ կանոնաց Լուսաւորչին՝ ա. քահանայից և աշխարհականաց.

Ր. Նախանձու.
Գ. Մեղաց.
Դ. Կենաց.
Ե. Դժոխաց.
Զ. Կախարդաց.
Է. Սպանողաց.
Ը. Կախարդաց.
Թ. Դիահարաց.
Ժ. Ձնընդոց դիւաց.
Ժա. Քաչանց. ...

Կանոնք սրբոյն Պարթևի: Դարձեալ հարցմունք և պատասխանի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. Գր.—Ողորմի Քրիստոս Աստուած ընտացողի գրոցս Առաքելին, Գրիգորին և մարն Թուրվանտէ, և իր կողակցին Խանիկան, և մեծ հարն Մուրատին, և ին մեղօք խոսեցեալ գրիչս զՍարգիս քահանայ այս կարդացողի(ցս):

Թ. 19ա.—Ողորմածն և գթածն մեղաւոյաց իր անճառելի մարդեղութեամբն տնաւրինեաց, զիւր առատ գթութեամբն ողորմեսցի ընտացողի գրոց պետրէ Տէր Առաքին, և հօրն Յովհաննիսին, և մօրն Մայրամին, և իր կողակցին Ագնուէ, և Թամամին, և որդոցն Պաղտասարին, և ինձ Սարգիս գրչի:

Թ. 24ա.—Զոր ողորմածն ամենայնի Տէրն Քրիստոս ողորմեսցի յիւր առատ ողորմութեամբն ամենայն ազգիս Քրիստոսադաւանացիս ամէն, ևս առաւել զատացող գրոցս Առաքելին, Աստուածատուրին, և որդոյն Պետրոսին, և մօրն Նազլին, Պողոսին, Խաչատրին:

Թ. 32բ.—Որ ողորմածն Քրիստոս ամենայնի ողորմեսցի ընտացողի գրիս Միրաքին, Յակոբին, և որդոյն Միրէնշէ, և մարն Խանիմային, և որդոյն Վարիաշին, Խաչատուրին, և քրոչն Մինասին, Յովհաննիսին և ինձ Սարգիս գրչի, կարդացողաց:

Թ. 35ա.—Որ ողորմի Քրիստոս Աստուած մեր ատացողի գրոցս Միրէնին, Մուրատին և իր կողակցին Կուլիստէնին, և թոռնանցն Կասպարին, և Պաղտարին, և ինձ Սարգի(ս) գրչի, կարդացողաց և լսողաց:

Թ. 38ա.—Ով տէր ընթերցող+կարդաս և աչսիս զմնալաւոր գնող զՍարգիս քահանայս յիշեայ:

Թ. 39բ.—Ողորմի Քրիստոս ընտացողի Ղազարշենց Մուրատին և հարն Քիսոնին և մարդ Մաղթումին և իր կողակցին Ղրմզին և որդոյն Աշուսին, Ամիկան, և ինձ մեղաւոր Սարգի(ս), գրչի, կարդացողաց:

Թ. 42ա.—Թէ դպիր ես կարդա, թէ չէ վզիտ տուր ու հազա. զընտացող գրիս Կարապետին, հօրն Յովանիսին, և մարդ Մայրամին և որդոյն Կասպարին, և Կուլիստէնին, կարդացողաց:

Թ. 48բ.—Ընտացող գրիս Մարգարտին, և հօրն Ակաճանին, և մօրն Փինոֆորին, և եղբորն Մուրատին, կարդացողաց:

Թ. 50բ.—Զոր ողորմածն Աստուած ողորմեսցի զատացողի գրոցս Անտոնին, դստերն Թուլանտէ, և Կուլիստէնին, և իր կողակցին Ռոսարին, և որդոյն Աղուպին, և հօրն Յոհանգշին, և մօրն Մայրամին, Անդրիասին, կարդացողաց:

Թ. 58ա.—...ևս առաւել զատացող և զգնող գրիս զատանացնելոյս ի մէջ մեղաց և ի գթաղմանց ուշխարհիս որ չեմ արժան յիշել և կարգի զՍարգիս անարժան քահանայ, և զհայրն իմ զՏէր Առաքելն և զմայրն իմ զԽիմաթն, և զորդիսն իմ զՏէր Արրա(հա)մն և զԱստուածայտուր սարկաւագն, և զկենակիցն իմ զՄուղալն, և զարեան մերձաւորքն իմ որոց փոխեալ են առ Քրիստոս, Սարգսին, Պապային, և մարն Տոլվաթին, և իր կողակցին Մայրամին, և Սարգիս գրիչ:

Թ. 65բ.—Զոր ողորմածն Աստուած ողորմեսցի ընտացողի գրիս զՏէր Սարգիս քահանայս, և զհայրն իմ զՏէր Առաքելն, և զմայրն իմ զԽիմաթն, և զկենակիցն իմ զՄուղալն, և զայլ ամենայն արեան մերձաւորքն իմ են որ աստ կան ի մարմնի ի դառնաբեր ժամանակի, և այ(լ)քն որ փոխեալ են առ Քրիստոս յոյսն ամենայն հաւատացելոցն և մեզ յիշելոցս և ձեզ յիշելոցս առհասարակ ողորմեսցի ի միս անգամ գալըստեան իւրում, կարդացողաց և լսողաց որոց ասէ ասէ ամէն:

Թ. 73ա.—Ողորմեայ գնող գրիս, զտառասլեալ Սարգիս անարժան քահանային, ևս առաւել Զաքարի, և ձնողին գԽոնարին, և զԵղիային, և զայլ ամենայն արեան մերձաւորացն ամէն, Աղուպին և հարն Տատուրին և իր կողակցին Փաշահն, և մարդ Խաթանին, և ինձ Սարգիս գրչի, կարդացողաց:

Թ. 78ա.—Զոր ողորմած Աստուած որպէս աստակին, և մաքսապետին, և պողոնկին, և յանդամանութին, բարէկամիտ Ղազարին, նոյն ողորմութեամբ ողորմեսցի զթաղծելոյս և յամենայն առելոյ ի մէջ սոց որ գրաղմանց զՍարգիս անարժ(ան) գրիչս և զատացողս սուրբ գրիս Հանիսին և հարն օտարին, և մարն Տօնային, Անտոնին, և Մաթէոսին, և խաչայտուրին:

Թ. 84ա.—Ընտացողի գրոցս Կուլիստէնին, Մայրամին, և Սրբոհէ, և Սրբոհէ, և որդոցն Խաչատուրին, և Մարտիրոսին, Զաքարին, և հարն Լիմիրճանին, և մարդ Խայթ, և դստերն Կուլիստէնին, որդոյն Ցախիճանին, կարդացողաց:

Թ. 86բ.—Ընտացողի գրոցս Կուսէ, և որդոյն Աստուածատուրին, և դստերն Խաթունշին, և իր կողակցին Սելչուկին, և Մելտոնին, կարդացողաց:

Թ. 94ա.—Որ ողորմի Քրիստոս ընտացողի գրոցս Խաչէ, և որդոյն Պետրոսին, և Պողոսին, և Սարգսին, Առաքելին, և իր կողակցին Տոլվաթին, և ինձ Սարգիս գրչի, կարադացողաց և լսողաց:

Թ. 97բ.—Որ ողորմի Քրիստոս Աստուած ընտացողի գրոցս Կասպարին, և եղբարն Աստուածատուրին, և հօրն Սիմէոնին, և մարդ Ղիաթին և Սարգիս գրչի:

Թ. 104ա.—Որ ողորմի Քրիստոս Աստուած ընտացողի գրոցս Հաքիմին, Աղուպին, և հարն Սարգսին, և մարդ Լիլչուկին, և որդոյն Սարգսին, Ներսէսին, Առաքելին, և կողակցին Դիլնկան, կարդացողաց:

Թ. 117ա.—Ողորմէա Տէր ընտացողի գրոցս Մար-

տիրոպին և կողակցին Խաթունչէ, և որդոյն Սայէ Ցովանիսին, Մսրին, կարդացողաց:

Թ. 138բ.—Որ ողորմի Քրիստոս Աստուած ըստացողի գրոցս (թ. 139ա) Ցակոբի որդոյն, Ցովանիսին որդոյն Աղաճանին, և իւր կողակցին Մայրամին, և Արիճանին, և դստերն Ղրմըզին, և Ազկուլէ, ինձ Սառգիս գրչի, կարդացողաց:

Թ. 149ա.—Քրիստոս Աստուած ողորմեա ըստացողի գրոցս խոճա Ցակոբին, Ցովանիսին, և որդոյն Աղաճանին, և իւր կողակցին Մադրամին, և Արիճանին, և դստերն Ղրմըզին, և Ազկուլէ, կարդացողաց:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա)

231, Կանոնագիրք, 29:

24, 29, 231, Սարգիս մէջ:

Թ. 7ա.—Աւետիսը եղև ՌԲՄԷ-ին (1758 թ.—Ն. Մ.) Հոկտեմբերի Է-ին, օրը չորեքշաբթին: 1217:

Թ. 13բ.—Այս է նախնիքն իմ, յետ բազմաց քահանայից, զորս լուեալ եմք է Տէր Առաքել, նրա որդին Տէր Սարգիսն գծող գրչոյս, նրա որդին Տէր (Աստուած)ատուրն, նրա որդի Սարգի(ս) Դէլութէրզի մականունեալն, նրա որդի Տէր Պողոսն, որ ՌԺՀԴ-ին (1665 թ.—Ն. Մ.) ծնեալ էր և ՌԺՂԲ-ին (1719 թ.—Ն. Մ.) վախճան կալաւ, նրա որդին Տէր Պարսամն, որ ՌԺԹ-ին (1701 թ.—Ն. Մ.) ծնեալ է և ՌԺՀԶ-ին (1727 թ.—Ն. Մ.) քահանայ է օծեալ, և նրա որդին Իգնատիոս աբեղաս, որ ՌԺՀԱ-ին (1722 թ.—Ն. Մ.) ծնեալ եմ, ՌԺՂԲ-ին (1749 թ.—Ն. Մ.) քահանայ օծեալ, ծնունդն և օծումն իմ Ե Դեկտեմբերի (թ. 14ա) և ՌԺՂԴ-ին (1744 թ.—Ն. Մ.) ատի իշխանութիւն ծայրագոյն գաւազանի ի Պետրոս վարդապետէս, ի մայիս ամսոյ և ՌԺՂ... (174... թ.—Ն. Մ.) ատի օծ(ումն) եպիսկոպոսութեան ի ձեռամբ Տեառն Ղազարոս ամենայն Հայոց կաթողիկոսի...:

Թ. 14բ.—Ես մեղայոր Տէր Պարսամ որդի Ոհան... գրեցի:

Թ. 16ա.—Ես Ջողայեցի տիրացու Սարգիսս գրեցի, ամէն: Ես Ջողայեցի տիրացու Սարգիսս գրեցի, ամէն:

Թ. 17բ.—Համբարձում եղև թվ. ՌԺՁԲ (1793 թ.—Ն. Մ.) մայիսի ԺԳ-ին, պատկերաւոր Բ. շափաթին ... որ մկրտեցաք Համբարձման (օ)րն:

Թ. 18ա.—Տէր Հայաուլումենի ՌԺՁԵ-ի (1786 թ.—Ն. Մ.) Փետրվր է:

Թ. 19բ.—Ես Ջողայեցի Մկրտիչ:

Թ. 22բ.—Էքնազտոս, Սարքիս, Ոհանէս, Ցունան, Թորոս, Մկրտ(ի)չ, ..., Անաղ:

Թ. 27բ.—Ես Ջողայէցի:

Թ. 30բ.—Համբարձում եղև թվին ՌԺՁԹ (1740 թ.—Ն. Մ.) մայիսի ԺԳ-ին, պատկերաւորք Այբ. շափաթին, մկրտեցաք Համբարձման օրն:

Թ. 31ա.—Մկրտիչ, Համբարձում, Համբարձում:

Թ. 31բ.—Համբա, Աւետիս էս հասէ շատ...:

Թ. 33բ.—Համբարձումը եղև թվ.: Թորոսը եկև թվին ՌԺԱ (1851 թ. Ն. Մ.):

Թ. 35բ.—Գրնալլաւ, գրնալ զի. գաղիրը մեռան ի.. ողո...:

Թ. 37բ.—Աս գիրս Տէր Առաքելի որդի եղի այս գրեցի, որ ես էի յԼ տարուանս իմում ՌՄԿԴ-կրին (1719 թ.—Ն. Մ.):

Թ. 38ա.—Ես Տէր Առաքելի որդի, Աստուրի որդի Խաչատուրս գրեցի ... ԻԱ տարնոյ թվականիս իմում ... ԺՁ-ին պատկերօրն...:

Թ. 38բ.—Համբարձումն եղև թվին ՌԺՁԹ-ին (1740 թ.—Ն. Մ.) մայի(սին):

Մկրտիչն եղև թվին ՌԺՁՂ-ին (1735 թ.—Ն. Մ.), Աւետիքն ու Գաբրիէլի ի սուրբ Աստուածածնայ Խոր Վիրապին Սուրբ Գրիգոր մերոյն Լուսաւորչին և ամսեան ապրիլի Է-ին պատկերաւոր շափաթին եղաւ:

Թ. 40ա.—Պողոս Աղայան եղև թվին ՌԲՄԱ-ին (1752 թ.—Ն. Մ.) յունվարի ԻԷ-ին առաջաւոր պաւոց զօր է չափաւորին:

Թ. 40բ.—Ցայն մորում որդիացաւ, իսկ այլ քոյ... Մկրտիչ...:

Մանուել եղև թվ. ՌԺՂԳ-ին (1744 թ.—Ն. Մ.):

Թ. 42բ.—Սարգիսը եղև թվն. ՌՄԻԴ-ին (1675 թ.—Ն. Մ.) յուլիսի ԺԱ օրը որ ասի պատկերաւոր Վարդէվառին յետ ութ օրէից կիրակին:

... և Տէր Աստուած նասիպերաց արժանացաւ ի կարգ քահանայութեան որ և Տէր Սարգիս անվանեցաւ ձեռամբ իւր եղբօրն Իգնատիոս վարդապետէն (թ. 43ա) ի թվականիս ՌԲՃ-ին (1751 թ.—Ն. Մ.) վեստրվարի ԻԴ-ին, պատկերաւոր Թէոդորոսին կիրակէին:

Թ. 46բ.—Ողորմի Քրիստոս ըստացողի գրոց. Մըսիկան, և կնոջն Անանային. դստերն Գարիանէ:

Թ. 48բ.—Միրանենց տունը կոչնցուն թվին ՌԺԼԴ-ին (1745 թ.—Ն. Մ.):

Թ. 53բ.—Համբարձում:

Թ. 55ա.—(Գրությունն անընթեռնելի է):

Թ. 56բ.—Ջողայեցի, այս գիրս: Ես Ջողայեցի:

Թ. 58ա.—Մաթէոսը եղև թվին ՌՄ (1851 թ.—Ն. Մ.):

Թ. 59բ.—Մկրտիչ Չալապին եղև թվին ՌԺՁԼ (1738 թ.—Ն. Մ.), Աւետիքը Գաբրիէլ ի Սուրբ Աստուածածնայ և ի Խոր Վիրապին սրբոյ Գրիգորի մեծոյ Լուսաւորչիին և ամսոյն ապրիլի Է-ին պատկերաւոր շափաթին:

.....ԺՁ-ին յետ ութ տարրոն մայրն առ Աստուած փոխվեցաւ:

Թ. 60ա.—Մկրտիչ եղև

Թ. 60բ.—Երկրորդ Թորոսն եղև թվիս հայոց ՌՄԲ-ին (1753 թ.—Ն. Մ.) նամսեանն յունիսի ԻԸ, 28: Այս գիր թվիս գրեցի ես Իգնատիոս վարդապետս որ ավ յինքն մեծանայ և այս կարդայ և զիս յիշէ:

Թ. 63բ.—Մկրտիչ:

Թ. 68ա.—Համբա(ր)ում), Մաթէոս:

Թ. 69ա.—Համբարձում եղև թվին ... մայիսի...:

